ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ՝ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱԶՄՎԱԾ

Հ/Հ	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	ՀՀ ազգային ժողով ելից 1/1471-2022 առ 30.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
2.	ՀՀ նախագահի աշխատակազմ ելից ԱՂ-314-2022 առ 28.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
3.	ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ ելից Ե-2242 առ 22.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	

4.	ՀՀ գլխավոր դատախազություն ելից 04/20.4/3911-2022 առ 29.03.2022թ.	Սկզբունքային առարկություններ չունենալով Նախագծի դրույթների վերաբերյալ՝ գտնում ենք՝ որոշ ձևակերպումներ իրավաբանորեն անորոշ են, ըստ այդմ՝ հստակեցվելու կարիք ունեն՝ հաշվի առնելով այն, որ վարքագծի կանոնների պարտադիր բաղադրիչի խախտումը կարող է անբարենպաստ իրավական հետևանքներ առաջացնել հանրային ծառայողի համար, մասնավորապես՝ Նախագծի 23-րդ կետի համաձայն՝ Հանրային ծառայողը պարտավոր է աջակցել հանրային իշխանության մարմնի հետ հարաբերվող անձանց՝ իրացնելու իրենց այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պարտավորություններով: Գտնում ենք՝ անհրաժեշտ է հստակեցնել՝ հիշյալ վարքագծի կանոնը վերաբերում է հանրային ծառայողի ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում, թե ծառայողական պարտականություններից դուրս գործունեությանը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Միաժամանակ, հարկ է նշել, որ տիպային կանոնների ինչպես պարտադիր, այնպես էլ խրախուսելի բաղադրիչներն ինքնին չեն առաջացնում իրավական հետևանքներ հանրային ծառայողների համար: Իրավական հետևանքների վերաբերյալ դրույթներ բովանդակելու են տիպային կանոնների հիման վրա հետագայում ստեղծման ենթակա կանոնները/կանոնագրքերը:
		Նախագծի 26-րդ կետի համաձայն՝ Հանրային ծառայողը պարտավոր է կիրառել **իրավասու մարմինների** կողմից ընդունված քաղաքականությունները, ուղեցույցերն ու որոշումները՝ անկախ անձնական համոզմունքներից և մոտեցումներից, ենթարկվել վերադասների, անմիջական ղեկավարի օրինական պահանջներին: Նախ՝ անհասկանալի է, թե իրավասու մարմիններ	Ընդունվել է մասամբ	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. Նախագծի քննարկվող դրույթներում ավելացվել է «կազմակերպաիրավական բնույթի այլ ակտեր» արտահայտությունը:

		ասելով հատկապես որ մարմիններին նկատի ունեն Նախագծի հեղինակները, բացի այդ, գտնում ենք՝ հանրային ծառայողի կատարման համար պարտադիր նշանակություն կարող են ունենալ ոչ միայն քաղաքականությունները, ուղեցույցերն ու որոշումները, այլ նաև կազմակերպահրավական այլ բնույթի իրավական ակտերը՝ հրամաններ, կարգադրություններ, հանձնարարականներ և այլն: Ըստ այդմ, գտնում ենք՝ քննարկվող կետում հանրային ծառայողների կողմից պարտադիր կատարման ենթակա իրավական ակտերի թվարկումը չպետք է սահմանել սպառիչ ցանկով: Դրան համապատասխան՝ առաջարկում ենք փոփոխություններ կատարելով նաև 27-րդ կետում: Ընդ որում, գտնում ենք՝ 27-րդ կետում նախատեսված՝ «նախքան դրանց ընդունումը, իսկ դրանց ընդունումից հետո՝ կատարել դրանց պահանջները» դրույթն ավելորդ է:		Ինչ վերաբերում է ակտերի՝ իրավասու մարմինների կողմից ընդունված լինելու վերաբերյալ դիտարկմանը, ապա այն չի ընդունվել, քանի որ հանրային ծառայողներին և նրանց գործառույթներին վերաբերելի քաղաքականությունները, ուղեցույցերը, որոշումները և այլ ակտերը կարող են ընդունվել տարբեր մարմինների կողմից, որոնց ցանկը սպառիչ եղանակով սահմանել հնարավոր և նպատակահարմար չէ: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում: 27-րդ կետին վերաբերող առաջարկը նույնպես ընդունելի չէ: Դրույթի տրամաբանությունը ընդունվող քաղաքականությունների

				վերաբերյալ առողջ քննադատական մտքի գեներացումն է մի կողմից, և կատարման ծառայողական կարգապահությունն է՝ մյուս կողմից՝ դրանց ընդունվելու դեպքում:
		Նախագծի 32-րդ կետում նախատեսված իրավական նորմը ևս հստակեցման կարիք ունի, քանի որ որոշակի չէ՝ ինչին «չնպաստելն է» համարվում վարքագծի կանոնների խախտում և այլն:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծում առկա են նաև մեծ թվով ավելորդ ձևակերպումներ, անհիմն կրկնություններ, օրինակ՝ 15-րդ կետում նախատեսված է, որ Հանրային ծառայողը պարտավոր է հարգել բոլոր հանրային ծառայողների, **քաղաքացիների** և հասարակության բոլոր անդամների արժանապատվությունը: Նախ՝ անհասկանալի է, թե ինչու է հիշյալ դրույթն առանձի նշում պարունակում քաղաքացիների վերաբերյալ, ապա նաև, ամենևին չնսեմացնելով անձանց արժանապատվության հիմնարար իրավունքի դերը, գտնում ենք՝ քննարկվող նորմում պետք է սահմանել ոչ միայն անձանց արժանապատվությունը, այլ նաև մյուս բոլոր հիմնարար իրավունքները հարգելու հանրային ծառայողի պարտականությունը:	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք՝ Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել օրենսդրական տեխնիկայի կանոններին:		
5.	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե ելից 18-2562գ-22 առ 28.03.2022թ.	Նախագծի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է հետևյալը. *«նպաստել ծառայողի կողմից իր պարտականությունները կատարելիս էթիկայի բացառիկ վարքագիծ դրսևորելուն,»:* Նախագծի վերոհիշյալ նորմում գործածվում է *«էթիկայի բացառիկ վարքագիծ»* արտահայտությունը, որը, կարծում ենք բավականին անորոշ է այդ իրավունքների ու ազատությունների կրողների և հասցեատերերի համար: Մասնավորապես՝ անհասկանալի է, թե Նախագծի հեղինակները բացառիկ վարքագիծ ասելով ինչ են ի նկատի ունենցել և ով է դա գնահատելու: Կարծում ենք՝ Նախածում յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է այնպիսի հասկացություններ գործածել, որ այդ իրավունքների ու պարտականությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի 11-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ *«**Հյուրասիրություն**՝ նվերի տեսակ, որը առաջարկվել, տրվել կամ ստացվել է պաշտոնական հարաբերություններ սկսելու, դրանք ամրապնդելու կամ զարգացնելու նպատակով: Այն ընդգրկում է, բայց չի սահմանափակվում ընդունելության, ժամանցային, սոցիալական կամ սպորտային միջոցառումների*	Չի ընդունվել	Հանրային ծառայողներին տրվող հյուրասիրության հասկացության վերաբերյալ առկա են մի շարք միջազգային ստանդարտներ: Մասնավորապես՝

		հրավերներով և առաջարկներով, և տրվում է հյուրասիրողի ներկայությամբ:»: Ինչպես նկատում ենք վերոհիշյալ նորմում «հյուրասիրություն» հասկացությունը բացահայտվում է որպես հյուրասիրողի ներկայությամբ տրվող նվերի տեսակ: Սակայն կարծում ենք, որ այդ դեպքում սահմանափակվում է այդ արգելքի կիրառման շրջանակները՝ պայմանավորելով միայն հյուրասիրողի ներկայությամբ տալու հանգամանքով: Այնինչ, պետք է նշել, որ ավելի նվազ վտանգավորություն չունի ապօրինի հյուրասիրությունը, որը տեղի է ունենում հյուրասիրողի կողմից, սակայն նրա բացակայության պայմաններում: Ուստի, առաջարկում ենք Նախագծի 11-րդ կետի 3-րդ ենթակետից հանել *«և տրվում է հյուրասիրողի ներկայությամբ»* բառերը:		Թրանսպարենսի ինթերնեշնլ կազմակերպության կողմից մշակված Համաշխարհային հակակոռուպցիոն ուղեցույցում շեշտվում է, որ հյուրասիրության տրման պահին հյուրասիրողի ներկայությունը պարտադիր է: Միաժամանակ, հարկ է նշել, որ քանի որ հյուրասիրությունը հանդիսանում է նվերի տեսակ, այն պարագայում, երբ հյուրասիրության առարկան տրվի հյուրասիրողի բացակայությամբ, այն կդիտարկվի որպես նվեր: Միաժամանակ, հարկ է նշել, որ քննարկումների արդյունքում «հյուրասիրություն» եզրույթը հանվել է Նախագծից:

		Նախագծի 12-րդ կետի համաձայն՝ *«Հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոնները ձևավորվում են հետևյալ բաղադիրչներից.* *1) Հարգալիրություն և գնահատանք,* *(…)»:* Հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոնների *հարգալիրություն և գնահատանք* բաղադրիչի **գնահատանք** բաղադրիչը, կարծում ենք բավականին անորոշ ձևակերպում է և չի հասկացվում, թե գնահատանքը մասնավորապես որ արժեքներին է ուղղված: Այսպիսով՝ ուսումնասիրելով Նախագծի 13-16-րդ կետերը, որոնք վերաբերում են հարգալիրություն և գնահատանք բաղադրիչին, ըստ էության հնարավոր չի եղել սահմանազատել, թե կոնկրետ այդ կետերից, որ մեկն է վերաբերում գնահատանքին: Վերոհիշյալ կետերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանք առավել բնորոշ են «հարգալիրություն» բաղադրիչին, ուստի առաջարկում ենք հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոնները ձևավորելու բաղադրիչների ցանկից հանել գնահատանք բաղադրիչը կամ առնվազն համապատասխան կետերով նշել, թե ինչի մասին է խոսքը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. «գնահատանք» եզրույթը հանվել է Նախագծից:
		Բացի այդ, Նախագծի 12-րդ կետի համաձայն՝ *«Հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոնները ձևավորվում են հետևյալ բաղադրիչներից.* *(…)* *10) Չհրապարակված պաշտոնական*	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		տեղեկատվություն, *11) Հանրային ռեսուրսների օգտագործում,* *12) Կոռուպցիոն բնույթի դեպքերի և այլ խախտումների վերաբերյալ հաղորդում ներկայացնելը,* *13) Հաղորդակցությունը հանրային լրատվամիջոցներով և սոցիալական ցանցերով,* *14) Վարքագիծը որպես մասնավոր անձ,* *15) Կանոններ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց համար:»:* Նախագծի 12-րդ կետի 10-15-րդ ենթակետերը, կարծում ենք անհրաժեշտ է վերախմբագրել՝ համապատասխանեցնելով տվյալ նորմի ընդհանուր տրամաբանությանը: Բանն այն է, որ վերոհիշյալ ենթակետերն ընթերցելիս խնդիր է առաջանում դրանք ընկալելու տեսնակյունից: Այսպես՝ օրինակ՝ հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոնների ձևավորման համար հիմք է հանդիսանում, ոչ թե հանրային ռեսուրսների օգտագործում բաղադրիչը, այլ՝ հանրային ռեսուրսների բարեխիղճ օգտագործում բաղադրիչը կամ, ոչ թե «չհրապարակված պաշտոնեական տեղեկատվություն» այլ՝ «պաշտոնեական տեղեկատվություն չհրապարակելը», նույն տրամաբանությամբ անհասկանալի է նաև «վարքագիծը որպես մասնավոր անձ» ձևակերպումը և այլն: Այսպիսով, առաջարկում ենք վերախմբագրել Նախագծի 12-րդ կետի 10-15-րդ ենթակետերը:		

		Նախագծի 14-րդ կետի համաձայն՝ *«Հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ ՀՀ պետական խորհրդանիշներից և պետական մարմինների կանոնադրությամբ հաստատված տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանշի մեծարումից, ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում դրանց ցուցադրումից:»:* Ինչպես նկատում ենք վարքագծի կանոնների խախտում պետք է առաջանա այն դեպքում, երբ հանրային ծառայողը ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում ցուցադրի ՀՀ պետական խորհրդանիշներից և պետական մարմինների կանոնադրությամբ հաստատված տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանիշ: Հարկ է նկատել, որ հաճախ հանրային ծառայողները տարբեր միջոցառումների կամ հանդիպումների ժամանակ, այդ թվում՝ օտարերկրյա, ստանում են բազմաթիվ հուշանվերներ և պատվոգրեր, որոնք հնարավոր է լինեն տվյալ մարմնի խորհրդանիշի պատկերով: Տվյալ դեպքում, եթե հանրային ծառայողն իր աշխատասենյակում դրանք ցուցադրում է, ապա առաջանում է Նախագծի վերոհիշյալ կետի խախտում: Ըստ էության պետք է նշել, որ հատկապես կարևոր է համարվում ցուցադրության դեպքում ևս տվյալ խորհրդանիշի մեծարման նպատակ չհետապնդելու հանգամանքը: Այսպիսով՝ առաջարկում ենք Նախագծի 14-րդ	Չի ընդունվել	Դրույթը քննարկումների արդյունքում խմբագրվել է: Միաժամանակ, հարկ է նշել, որ օտարերկրյա պատվիրակությունների հետ հանդիպումներից հետո ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում այդ պատվիրակությունների խորհրդանիշները և տարբերանշանները ցուցադրել չի թույլատրվում՝ համաձայն կանոնի նոր խմբագրման:

		կետում «ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում դրանց ցուցադրումից» բառերից հետո լրացնել «ինչպես նաև մեծարման նպատակով» բառերը:		
		Նախագծի 28-րդ կետով սահմանվում է, որ *«հանրային ծառայողը պարտավոր է վարքագծի կանոնների դրսևորման հետ կապված մասնագիտական խորհրդատվության համար դիմել բարեվարքության հարցերով կազմակերպչին»:* Նախագծի հիշյալ նորմի վերլուծությունից ստացվում է, որ հանրային ծառայողը ցանկացած պարագայում պարտավոր է վարքագծի կանոնների դրսևորման հետ կապված դիմել բարեվարքության հարցերով կազմակերպչին մասնագիտական խորհրդատվություն ստանալու համար, նույնիսկ այն դեպքում, երբ քաջ գիտակցում է, թե ինչ իրավաչափ վարաքագիծ է պետք դրսևորել: Կարծում ենք, առավել նպատակահարմար և գործնականում կիրառելի կլինի, եթե Նախագծում հիշյալ նորմը սահմանվի ոչ թե իմպերատիվ այլ հայեցողական, միաժամանակ ավելացնելով այն դեպքերը, երբ անհրաժեշտ է պարտադիր ստանալ մասնագիտական խորհրդատվություն: Մասնավորապես՝ առավել նախընտրելի է, որ բարեվարքության հարցերով կազմակերպչին դիմելը պարտադիր լինի այն ժամանակ, երբ առկա է խնդրահարույց կամ անհասկանալի հարցեր կամ շահերի բախում:	Ընդունվել է մասամբ	Առաջարկի հիման վրա մասնագիտական խորհրդատվություն ստանալու համար բարեվարքության կազմակերպիչներին դիմելու վերաբերյալ դրույթը սահմանվել է որպես հայեցողական նորմ: Միաժամանակ, պարտադիր մասնագիտական խորհրդատվություն ստանալու դեպքերի սահմանման վերաբերյալ առաջարկը չի ընդունվել, քանի որ առկա չեն այնպիսի առանձնահատուկ դեպքեր, որոնց պարագայում բարեվարքության հարցերով կազմակերպչին դիմելը կդիտարկվի որպես պարտականություն և բացառություն կհանդիսանա ընդհանուր կանոնից:

		Նախագծի 34-րդ կետով նախատեսվում է, որ *«Հանրային ծառայողը պարտավոր է ապահովել **հանրության ներառականությունը** որոշումների կայացման հարցում՝ համապատասխան օրենսդրական արգելքներ չլինելու պարագայում»:* Կարծում ենք նախագծի հիշյալ նորմում գործածվող «ներառականություն» բառը չի արտահայտում այն միտքը, որը ցանկացել են ներկայացնել Նախագծի հեղինակները: Նախագծի վերոհիշյալ նորմն առավել ընկալելի դարձնելու համար առաջարկում ենք Նախագծի 34-րդ կետում «ներառականություն» բառը փոխարինել «ներգրավածություն» բառով:	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում դրույթում «ներառականություն» եզրույթը փոխարինվել է «մասնակցություն» եզրույթով:
		Նախագծի 56-րդ կետի համաձայն՝ *«Հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ Օրենքի իմաստով ոչ թույլատրելի նվեր, այդ թվում՝ հյուրասիրություն ընդունելուց կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն տալուց, եթե նման նվերը, այդ թվում՝ հյուրասիրությունը, ողջամտորեն չէր տրամադրվի հանրային ծառայող չհանդիսացող կամ հանրային պաշտոն չզբաղեցնող անձի»:* Խնդրահարույց է Նախագծի 56-րդ կետում գործածվող «ոչ թույլատրելի նվեր» հասկացությունը: Բանն այն է, որ ինչպես Նախագծի հասկացություններ բաժնում, այնպես էլ «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) իմաստով բացահայտվում է «նվեր» հասկացությունը: Համաձայն որոնց՝ *նվեր է համարվում ցանկացած գույքային առավելություն, որը*	Չի ընդունվել	«Հանրային ծառայության մասին» օրենքը, սահմանելով «նվեր» հասկացությունը, միաժամանակ, բացառության կարգով առանձնացրել է դրա այնպիսի տեսակներ, որոնք համարվում են թույլատրելի: Հետևապես, թույլատրելի նվերների սպառիչ ցանկից դուրս յուրաքանչյուր այլ տեսակի նվեր տրամաբանորեն համարվում է ոչ

		ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոն չզբաղեցնող անձի: Այն ընդգրկում է նաև ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված գույքը կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն: Սա նշանակում է, որ Նախագծում նվեր ասելով արդեն իսկ հասկացվում է, որ խոսքը ոչ թույլատրելի նվերի մասին է, որը չէր կարող տրամադրվել տվյալ պաշտոն չզբաղեցնող անձին: Միաժամանակ պետք է նշել, որ քննարկվող կետում «ոչ թույլատրելի նվեր» բառերի օգտագործումը ոչ միայն չի բխում Նախագծում և Օրենքում գործածվող «նվեր» հասկացությունից, այլև՝ հակասում է Նախագծի քննարկվող գլխի այլ կետերին, մասնավորապես՝ 60-րդ և 61-րդ կետերին, որոնցում գործածվում է «նվեր», այլ ոչ թե «ոչ թույլատրելի նվեր» հասկացությունները: Եթե նույնիսկ ընդունենք այն փաստը, որ 56-րդ կետում «ոչ թույլատրելի նվեր» հասկացության գործածումը տեղին է, ապա դրանով իսկ հակասելու ենք վերոհիշյալ կետերին, այսպես՝ ստացվում է, որ Նախագծի 60-րդ կետի շրջանակներում, եթե հանրային ծառայողին իր ամուսինը տոների (ծննդյան,		թույլատրելի: «Ոչ թույլատրելի նվեր» եզրույթի կիրառումը չի հակասում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստին, այլ, ընդհակառակը, բխում է դրանում սահմանված հասկացություններից: Վերոնշյալ հիմնավորմամբ ներկայացված առաջարկը չի ընդունվել:

		ամանորյա և այլն) կապակցությամբ նվեր քարտ է նվիրել, ապա դա պետք է համարվի ոչ թույլատրելի: Սակայն Նախագծի ամբողջական ուսումնասիրության և վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ խոսքը ոչ թե մսանավոր անձ հանդես գալու ժամանակ ստացած նվերների, այլ հանրային ծառայող հանդես գալու ժամանակ իր պաշտոնով պայմանավորված ստացած նվերների մասին է: Ուստի Նախագծի ինչպես խնդրո առարկա կետում, այնպես էլ այն կետերում որտեղ գործածվում է «ոչ թույլատրելի նվեր» հասկացությունը, առաջարկում ենք այդ բառերը փոխարինել «նվեր» բառով:		
		Նախագծի 71-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանրային ծառայողը պարտավոր է չհրապարակել օրենքով սահմանված դեպքերում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության եզրակացության տվյալները, դրա հետ կապված հարցադրումները կատարել առանց ուղղակիորեն եզրակացությանը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հղում կատարելու»:* Անհրաժեշտություն է առաջանում նշել, թե Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված բարեվարքության եզրակացության տվյալները չհրապարակելու արգեքը վերաբերում է այն անձին ում վերաբերյալ ընդունվել է այդ եզրակացությունը, թե՞ ցանկացած անձի ում ինչ-ինչ պատճառներով կարող էր հայտնի դառնալ քննարկվող եզրակացությունը:	Չի ընդունվել	Նորմի մեկնաբանությունից ուղղակիորեն բխում է, որ կանոնը վերաբերում է այն անձանց, որոնց հասանելի են դարձել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրամադրված այլ անձանց բարեվարքության վերաբերյալ տվյալները: Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ սույն կետով կարգավորված չեն այն հարաբերությունները, որոնք ծագում են պաշտոն զբաղեցնելու համար

		Բացի այդ, հարկ է նշել, որ քննարկվող կետում *«դրա հետ կապված հարցադրումները կատարել առանց ուղղակիորեն եզրակացությանը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հղում կատարելու»* նախադասությունը սահմանելով հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ հնարավոր է անձը, ում վերաբերյալ կայացվել է համապատասխան եզրակացությունը ցանկանա այն բողոքարկել, նման պայմաններում ուղղակիորեն անհնարին է այդ եզրակացությանը հղում չկատարելով այն բողոքարկել: Միևնույն ժամանակ, սույն կետով կարգավորված չէ նաև այն հարաբերությունները, որոնք ծագում են պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների ընթացքում իրականացվող բարեվարքության ստուգումների ժամանակ, երբ մրցութային հանձնաժողովը հարցազրույցի ընթացքում լիազորված է հարցադրումներ կատարելու բարեվարքության եզրակացության շուրջ: Հատկապես խնդիրն ավելի է սրվում երբ հարցազրույցը իրականացվում է տեսաձայնագրմամբ կամ ուղիղ հեռարձակմամբ: Կարծում ենք, այդ մասով անհրաժեշտ է խնդրո առարկա նորմում նախատեսել համապատասխան կարգավորումներ:		հայտարարված մրցույթների ընթացքում իրականացվող բարեվարքության ստուգումների ժամանակ, երբ մրցութային հանձնաժողովը հարցազրույցի ընթացքում լիազորված է հարցադրումներ կատարելու բարեվարքության եզրակացության շուրջ, հարկ է նշել, որ տվյալ կետով սահմանված կանոնն ամբողջությամբ ուղղված է տվյալ հարաբերությունների կարգավորմանը: Մասնավորապես, Հանձնաժողովը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ եզրակացությունները հրապարակման ենթակա չեն, դրանց վերաբերյալ հարցադրումները չպետք է իրականացվեն նշված եզրակացությանը հղում

				կատարելով կամ ուղղակիորեն վերարտադրելով Հանձնաժողովի դիտարկումները: Նշվածը բացարձակ չի նշանակում, որ եզրակացության վերաբերյալ հարցադրումներ չպետք է կատարվեն, այլ, ընդհակառակը, դրանք անհրաժեշտ է իրականացնել հնարավորին ճկուն կերպով՝ առանց Հանձնաժողովի կարծիքն ուղղակիորեն շարադրելու:
		Նախագծի 100-րդ կետի համաձայն՝ *«Հանրային ծառայողը պետք է գործադրի բոլոր հնարավոր ջանքերը պետական համակարգչային համակարգերը, սարքավորումները, ծրագրերը, ինչպես նաև իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնի ֆիզիկական տարածքները անվտանգության հնարավոր սպառնալիքներից պաշտպանելու համար»:* Նախագծի վերոհիշյալ կետից կարծում ենք անհրաժեշտ է հանել «ֆիզիկական» բառը, քանի որ «*հանրային իշխանության մարմնի տարածքները*» բառերն էլ ամբողջությամբ արտահայտում են	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Նախագծով քննարկվող նորմի բովանդակությունը և «ֆիզիկական» բառի ավելորդ գործածումն անտեղի է:		
6.	ՀՀ քննչական կոմիտե ելից 01/22/23501-2022 առ 23.03.2022թ .	«Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները հաստատելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է ընդունել ի կատարումն «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերի, որի համաձայն **հանրային ծառայողների** վարքագծի տիպային կանոնները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, հետևաբար ներկայացված Նախագիծը կարող է վերաբերվել միայն **հանրային ծառայողներին**: Մինչդեռ Նախագծի հավելվածի 4-րդ և 56-րդ կետերում նախատեսված դրույթները վերաբերում են նաև **հանրային պաշտոն զբաղեցնող անձանց**, ուստի առաջարկվում է Նախագծի հավելվածի 1-ին գլխում՝ ընդհանուր դրույթներում, նախատեսել, այն անձանց շրջանակը, որոնց վրա տարածվում է Նախագծով նախատեսված վարքագծի կանոնները:	Չի ընդունվել	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. «հանրային պաշտոն զբաղեցնող անձ» եզրույթը հանվել է Նախագծից:
		Նախագծի նախաբանի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետին և «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասին արված հղումներում առաջարկվում է օգտագործել «հիմք ընդունելով» բառերը, քանի որ նշված նորմերը ուղղակիորեն են լիազորում	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ընդունել **հանրային ծառայողների** վարքագծի տիպային կանոնները:		
		Նախագծի հավելվածում օգտագործվում են «հանրային իշխանության մարմին» և «պետական մարմին» հասկացությունները, առաջարկվում է հասկացությունների միատեսակ կիրառման նպատակով օգտագործել միայն «պետական մարմին» հասկացությունը, քանի որ այն իմաստային առումով ավելի լայն է, քան «հանրային իշխանության մարմին» հասկացությունը:	Չի ընդունվել	«Հանրային ծառայության մասին» օրենքը սահմանում է, որ հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները: Միաժամանակ, պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված

				լիազորությունների իրականացմանը: Հետևապես՝ սխալ է առաջարկում ներկայացված դիտարկումն առ այն, որ «պետական մարմին» եզրույթն առավել լայն է, քան «հանրային իշխանության մարմին» հասկացությունը: Ընդհակառակը, պետական մարմիններն ընդգրկվում են հանրային իշխանության մարմինների մեջ՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ մեկտեղ: Միաժամանակ, հարկ է նշել, որ Նախագծում պետական մարմիններ և հանրային իշխանության մարմիններ եզրույթները տարանջատված են, քանի որ դրանք բովանդակող յուրաքանչյուր դրույթ վերաբերելի է կա՛մ ընդհանուր առմամբ հանրային իշխանության մարմիններին, կա՛մ

				առանձնապես պետական մարմիններին:
		Նախագծում դրույթների հստակությունն ապահովելու նպատակով Նախագծի հավելվածի 1-ին կետում «Տիպային կանոնները» բառերն առաջարկվում է փոխարինել «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները (այսուհետ՝ Կանոններ)» բառերով՝ միաժամանակ Նախագծի հավելվածի ողջ տեքստում օգտագործելով «Կանոններ» հասկացությունը՝ հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններին հղում կատարելիս:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 10-րդ կետի վերջին նախադասությունն առաջարկվում է հանել, քանի որ հանրային ծառայողի վարքագծի կանոնների խախտման համար պատասխանատվություն կրելու վերաբերյալ դրույթները նախատեսվում են Նախագծի հավելվածի 4-րդ գլխում: Միաժամանակ նշված կետի 2-րդ նախադասությունում չի կարող օգտագործվել «պատժվել» բառը, քանի որ պատիժը բացառապես հանդիսանում է քրեական պատասխանատվության միջոց:	Ընդունվել է մասամբ	«Պատժվել» եզրույթը փոխարինվել է «պատասխանատվության ենթարկվել» բառերով: Միաժամանակ, քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		Նախագծի հավելվածի 11-րդ կետի 5-րդ ենթակետում անհասկանալի է հանրային շահը որպես սահմանադրական արժեք դիտարկելու հանգամանքը, քանի որ հանրային շահն բովանդակային առումով ավելի լայն է, ունի համամարդկային, համընդհանուր	Չի ընդունվել	«Հանրային շահ» հասկացության սահմանումը տրվում է մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝

		բնույթ և հանդիսանում է որպես հասարակական կատեգորիա, մինչդեռ «սահմանադրական արժեք» հասկացությունը կարող ենք դիտարկել որպես միայն իրավական կատեգորիա: Միաժամանակ Նախագծի հավելվածի 11-րդ կետում տրված են հասկացություններ, որոնք արդեն իսկ սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքով (նվեր, հանրային ծառայության պաշտոն) ուստի առաջարկվում է խմբագրել 11-րդ կետը՝ տարբեր իրավական ակտերում կրկնությունները բացառելու նպատակով:		Սահմանադրական դատարանի 2019 թ. ապրիլի 30-ի ՍԴՈ-1458 որոշման մեջ և Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1621/05/14 որոշման մեջ: Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ նշվում է, որ «Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ առհասարակ հանրային շահն այն սահմանադրական արժեքն է, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել»: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ սահմանվում է, որ «հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության

				գոյատևման և հետագա զարգացման համար»: Հետևապես՝ տեղին չէ դիտարկումն այն մասին, որ հանրային շահը չի կարող հանդիսանալ որպես սահմանադրական արժեք: Ընտրված ձևակերպումները բխում են իրավական ակտերով արդեն իսկ սահմանված ձևակերպումներից և չեն հակասում դրանց իմաստին:
		Նախագծի հավելվածի 12-րդ կետում. 1) 1-ին ենթակետում առաջարկվում է հանել «և գնահատանք» բառերը, քանի որ համապատասխան դրույթները չեն վերաբերում ինչ որ երևույթ կամ արժեք գնահատելուն:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		3-րդ ենթակետում նախատեսված դրույթն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ դա ընկալվում են ոչ միանշանակ, մասնավորապես՝ առաջարկվում է վերոնշյալ ենթակատը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «3) Բարեխղճություն և հավատարմություն հանրային շահի նկատմամբ:	Չի ընդունվել	Նախագծում առկա ձևակերպումն առավել ճշգրիտ է քերականական տեսանկյունից:
		10-րդ ենթակետում նախատեսված դրույթն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ դա ընկալվում են ոչ միանշանակ, մասնավորապես՝ առաջարկվում է	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում ենթակետը խմբագրվել է:

		վերոնշյալ ենթակատը շարադրել հետևյալ բովանդակությամբ. 10) Պաշտոնեական տեղեկատվության հրապարակման սահմանափակումներ:		
		14-րդ ենթակետում նախատեսված դրույթն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ դա ընկալվում են ոչ միանշանակ, մասնավորապես՝ առաջարկվում է վերոնշյալ ենթակատը շարադրել հետևյալ բովանդակությամբ. 14) Հանրային ծառայողի վարքագիծը ոչ ծառայողական հարաբերություններում,»: Ելնելով վերոնշյալ առաջարկություններից՝ միաժամանակ անհրաժեշտ է կատարել փոփոխություններ Նախագծի հավելվածի հետագա համապատասխան վերաբերելի դրույթներում:	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում ենթակետը խմբագրվել է: Ինչ վերաբերում է Նախագծի հետագա համապատասխան վերաբերելի դրույթներում փոփոխություններ կատարելուն, ապա այն դեպքերում, երբ առաջարկված ենթակետը խմբագրվել է, խմբագրման են ենթարկվել նաև համապատասխան հետագա դրույթները: Այն դրույթներին համապատասխանող կետերը, որոնց վերաբերյալ դիտարկումները չեն ընդունվել, խմբագրման չեն ենթարկվել:

		Նախագծի հավելվածի 12-րդ կետից հետո առաջարկվում է հանրային ծառայողների վարքագծի կանոնների բաղադրիչները նախատեսել առանձին գլուխներով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոններին համապատասխան:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 13-րդ կետում «պետական մարմինների կանոնադրությամբ հաստատված տարբերանշանները» բառերն առաջարկվում է փոխարինել «օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված պետական մարմինների խորհրդանիշերն ու տարբերանշանները» բառերով, քանի որ պետական մարմինները բացի տարբերանշաններից ունեն նաև խորհրդանիշեր, որոնք սահմանվում են օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով: Միաժամանակ, ելնելով վերոգրյալ առաջարկներից, անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ նաև Նախագծի հավելվածի 14-րդ կետում:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 14-րդ կետում անհասկանալի է «այլ խորհրդանշի մեծարում» հասկացությունը, ուստի առաջարկվում է «այլ խորհրդանշի մեծարումից» բառերը փոխարինել «այլ պետական մարմնի խորհրդանիշ կամ տարբերանիշ օգտագործելուց» բառերով:	Չի ընդունվել	Նշված դրույթը ենթարկվել է խմբագրման, սակայն ներկայացված առաջարկը չի ընդունվել: Առաջարկված «այլ պետական մարմնի խորհրդանիշ կամ տարբերանիշ

				օգտագործելուց» եզրույթը չի արտացոլում կանոնի էությունն ու բովանդակությունը: «Այլ խորհրդանիշ» եզրույթը ենթադրում է ոչ միայն այլ պետական մարմինների խորհրդանիշներ, այլև ՀՀ պետական խորհրդանիշներից, օրենսդրությամբ սահմանված պետական մարմինների խորհրդանիշներից ու տարբերանշաններից զատ այլ խորհրդանիշների ցուցադրմանը: Միաժամանակ, հարկ է նշել, որ «մեծարում» եզրույթը հանվել է Նախագծից:
		Նախագծի հավելվածի 22-րդ կետում անհասկանալի է, թե ինչ համայնքի և համայնքի տարբեր խոցելի խմբերի մասին է խոսքը, ուստի առաջարկվում է հստակեցնել նշված դրույթները պարզ և միանշանակ դրանք ընկալելու նպատակով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Նախագծի հավելվածի 25-րդ կետում հստակեցման կարիք ունի այլ անձանց կողմից թույլ տված սխալները հանրային ծառայողի կողմից բացահայտելու և վերացնելու վերաբերյալ դրույթները, քանի որ անհասկանալի է, թե ինչ այլ անձանց մասին է խոսքը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 26-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է կիրառել իրավասու մարմնի կողմից ընդունված քաղաքականությունները, ուղեցույցները և որոշումները, մինչդեռ յուրաքանչյուր պետական մարմնի գործունեության ուղղությունները, լիազորությունները սահմանվում են օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով ուստի առաջարկվում է հստակեցնել և խմբագրել վերոնշյալ ենթակետը, քանի որ այն պարզաբանման կարիք ունի: Միաժամանակ անհասկանալի է նաև Նախագծի հավելվածի 27-րդ կետում նշված «քաղաքականությունները, ուղեցույցերն ու որոշումները» հասկացությունները:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը լրացվել է «կազմակերպահրավական բնույթի այլ իրավական ակտեր» արտահայտությամբ: Ինչ վերաբերում է Նախագծի 27-րդ կետում սահմանված քաղաքականություններին, ուղեցույցներին և որոշումներին, ապա դրանք վերաբերում են իրավասու մարմինների կողմից ընդունված համապատասխան ակտերին, որոնց վերաբերելի է նաև քննարկված նախորդող դրույթը: Միաժամանակ, Նախագծի 26-րդ կետում կատարված

				փոփոխություններին համապատասխան՝ փոփոխություններ են կատարվել նաև տվյալ՝ 27-րդ կետում:
		Նախագծի հավելվածի 34-րդ կետում «ներառականությունը» բառը առաջարկվում է փոխարինել «մասնակցությունը» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 42-րդ կետում «պահպանել հագուստ կրելու վերաբերյալ» բառերն առաջարկվում է փոխարինել «պահպանել արտաքին տեսքին ներկայացվող» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 46-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ ցանկացած տեսակի, այդ թվում՝ սեռական ոտնձգության դրսևորումներից, մինչդեռ ոտնձգության դրսևորումների, դրանց իրավական հետևանքների վերաբերյալ դրույթները հանդիսանում են ոչ թե հանրային ծառայողների վարքագծի կանոնների, այլ քրեաիրավական հարաբերությունների կարգավորման առարկա: Ինչ վերաբերում է խտրականություն ցուցաբերելու վերաբերյալ դրույթներին, ապա նմանատիպ կարգավորումներ են նախատեսված նաև Նախագծի հավելվածի 47-րդ կետում, ուստի նորմերի կրկնությունից խուսափելու, ինչպես նաև վերոնշյալ հիմնավորմամբ առաջարկվում է հանել 46-րդ կետը:	Չի ընդունվել	Ոտնձգության դրսևորումների իրավական հետևանքները և դրանց կատարման համար պատասխանատվության տեսակների վերաբերյալ հարցերը կարգավորվում եմ քրեաիրավական ոլորտում, սակայն դա ամենևին չի բացառում ոտնձգություններ իրականացնելու արգելքը միաժամանակ որպես վարքագծի կանոն սահմանելը: Առհասարակ, հանրային ծառայողի

				նկատմամբ քրեաիրավական պատասխանատվությունը չի բացառում միևնույն արարքի համար նրա նկատմամբ իրավական պատասխանատվության այլ միջոցների, այդ թվում՝ կարգապատահական պատասխանատվության կիրառումը: Միաժամանակ, դրույթի՝ խտրականությանը վերաբերող հատվածը դուրս է բերվել՝ հաջորդող դրույթում կրկնությունը բացառելու նպատակով:
		Նախագծի հավելվածի 55-րդ կետն առաջարկվում է հանել, քանի որ գործնականում դժվարություններ կարող են առաջանալ նախատեսված դրույթները մեկնաբանելու հարցում, մասնավորապես, թե ինչպես է արտահայտվում այլ աշխատանքի անցնելու առաջարկն ընդունելը: Բանավոր առաջարկն ընդունելն իրավական հիմք չէ այլ աշխատանքի անցնելու համար, քանի որ իրավական տեսանկյունից աշխատանքի անցնելու համաձայնությունն արտահայտվում է գործատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքելով կամ աշխատանքի ընդունելու վերաբերյալ իրավական	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		ակտով: Բացի այդ, ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք և անձի կողմից իր վերադասին այլ աշխատանքի անցնելու իր ծրագրի մասին տեղեկացնելու պահանջ կարող է սահմանվել միայն օրենքով: Ինչ վերաբերում է ծառայությունից ազատվելու մտադրության վերաբերյալ ծանուցելուն, ապա դրա վերաբերյալ իրավակարգավորումները նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով:		
		Նախագծի հավելվածի 57-րդ կետը հակասում և չի համապատասխանում «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին, որոնցով հստակ սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար թույլատրելի նվերների և նվերների արժեքի առավելագույն սահմանը գերազանցելու վերաբերյալ դրույթներ, ուստի առաջարկվում է խմբագրել 57-րդ կետը՝ համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի դրույթներին:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Նախագծի հավելվածի 65-րդ կետից առաջարկվում է հանել «կամ սոցիալական էջերում քաղաքական որևէ կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելուց, նմատատիպ գրառումներ հավանելուց կամ տարածելուց» բառերը, քանի որ սոցիալական ցանցերում հանրային ծառայողի վարքագծին վերաբերող դրույթները նախատեսված են 79-ից 84-րդ կետերում, ուստի առաջարկվում է Նախագծի	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը հստակ վերաբերում է հանրային ծառայողի քաղաքական չեզոքությանն ու զսպվածությանը, մինչդեռ 79-84-րդ կետերն առնչվում են հանրային տիրույթում

		հավելվածի «Հաղորդակցությունը հանրային լրատվամիջոցներով և սոցիալական ցանցերով» գլխում լրացնել քաղաքական բնույթի գրառումներ չհրապարակելու, չհավանելու, չտարածելու վերաբերյալ դրույթներ:		հաղորդակցությանն առհասարակ:
		Նախագծի հավելվածի 68-րդ կետում «մասնագիտական լիազորությունների» բառերն առաջարկվում է փոխարինել «պաշտոնեական լիազորությունների» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 74-րդ կետն առաջարկվում է հանել, քանի որ աշխատաժամանակի, հանգստի ժամանակի վերաբերյալ հարաբերությունները հանդիսանում են պետական մարմնի ներքին կարգապահական կանոնների կարգավորման առարկա:	Չի ընդունվել	Աշխատաժամանակի կառավարման վերաբերյալ հարաբերություններն ուղղակիորեն հանդիսանում են հանրային ծառայողների վարքագծի կանոններով կարգավորման ենթակա հարաբերություններ: Պետական մարմիններին ներքին կարգապահական կանոններով, որպես կանոն, սահմանվում են աշխատաժամանակը, ուշացումները, սակայն ոչ աշխատաժամանակը տնօրինելու հետ կապված հարաբերությունները: Վերջիններս կարգավորման

				ենթակա են ընդհանուր վարքագծի կանոններով: Միաժամանակ, հարկ է նշել, որ այն պետական մարմինները, որոնք, այնուամենայնիվ, ներքին կանոններով սահմանում են աշխատաժամանակի տնօրինման վերաբերյալ դրույթներ, սույն Նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո պետք է համապատասխանեցնեն դրանք Նախագծով սահմանված կանոնների տրամաբանությանը կամ հանեն դրանք կանոնների ցանկից:
		Նախագծի հավելվածի 66-րդ կետում առաջարկվում է «գաղտնիք» բառը փոխարինել «օրենքով պահպանվող տեղեկություններ» բառերով՝ դրույթների հստակությունն ապահովելու նպատակով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 79-րդ կետը հստակեցման և պարզաբանման անհրաժեշտություն ունի, քանի որ անհասկանալի է, թե հանրային իշխանության մարմնի ի՞նչ կանոնների, հաղորդակցության	Չի ընդունվել	Կանոններ, հաղորդակցության ռազմավարություն, ուղենիշներ և որոշումներ կարող է ունենալ հանրային

		ռազմավարության, ուղենիշների, որոշումների մասին է խոսքը:		իշխանության յուրաքանչյուր մարմին: Դրանք իրավական ակտերի առանձնահատուկ տեսակներ են, որոնք սահմանվում են հանրային իշխանության մարմինների կողմից՝ ըստ ներքին անհրաժեշտության: Ակտերի անվանումներն իրենցից արդեն իսկ ենթադրում են այն բովանդակությունը, որը պետք է պարունակի տվյալ իրավական ակտը: Հետևապես, կարծում ենք տվյալ եզրույթները տարընկալման տեղիք չեն տալիս: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Նախագծի հավելվածի 83-րդ կետում առաջարկվում է հստակեցնել «փողոցային բառապաշար» հասկացությունը, քանի որ այն առաջացնում է տարընթերցումներ:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		Նախագծի հավելվածի 89-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ պետական մարմնի կամ ստորաբաժանման քաղաքականությունը, նպատակները սահմանվում են ոչ թե հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից, այլ օրենսդրությամբ, կամ այլ (այդ թվում՝ տվյալ պետական մարմնի ղեկավարի) իրավական ակտերով: Միաժամանակ Նախագծի հավելվածում առաջարկվում է հստակեցնել, թե ովքեր են ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք հանրային ծառայողների վարքագծի կանոնների իմաստով:	Չի ընդունվել	Դրույթը վերաբերում է ուղղակիորեն այն դեպքերին, երբ պետական մարմնի կամ ստորաբաժանման քաղաքականության, նպատակների սահմանումը վերապահված է ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց: Հետևապես, վերաբերելիության խնդիր առկա չէ: Միաժամանակ, «հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք» եզրույթը սահմանվել է Նախագծի հիմնական հասկացություններում:
		Նախագծի հավելվածի 3-րդ գլխով նախատեսված հանրային ծառայողների վարքագծի խրախուսելի որոշ կանոններ (օրինակ՝ 98-ից 103-րդ կետեր) բովանդակային առումով հանդիսանում են վարքագծի հիմնական կանոններ, մինչդեռ վարքագծի խրախուսելի կանոններ սահմանող որոշ կետեր (օրինակ՝ 105-րդ կետը) առավել վերաբերում են անձի մասնավոր կյանքին:	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի խրախուսելի կանոնները նպատակ են հետապնդում օրինակելի վարքագծի այնպիսի հիմնական նորմեր սահմանելու, որոնց հետևելը կբխի հանրային ծառայողի ընդհանուր

		Միաժամանակ Նախագծի հավելվածի 10-րդ կետի դրույթների համաձայն՝ հանրային ծառայողների վարքագծի խրախուսելի կանոնների խախտումը չի կարող առաջացնել որևէ իրավական հետևանք, ուստի առաջարկվում է Նախագծի հավելվածից հանել հանրային ծառայողների վարքագծի խրախուսելի կանոնները, իսկ 98-ից 103-րդ կետերը նախատեսել որպես հանրային ծառայողների վարքագծի հիմնական կանոններ:		բարեվարքությունից և բարեխղճությունից: Հարկ է նշել, որ քննարկումների արդյունքում Նախագծից հանվել են տիպային կանոնների խախտման դեպքում վրա հասնող իրավական հետևանքներին վերաբերող դրույթները: Համապատասխան իրավական հետևանքները ենթակա են սահմանման տիպային կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության առանձին մարմինների կողմից հանրային ծառայություն առանձին տեսակների համար ընդունվող համանման ակտերում (կանոնագրքերում):
7.	ՀՀ պետական վերահսկողական ծառայություն ելից Ե/531-22 առ 25.03.2022թ.	«Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական*	Չի ընդունվել	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի դրույթն առ այն, որ Հանձնաժողովն ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային

		շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են ***Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով****:* Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *պատգամավորի, դատավորի, դատախազի, քննիչի վարքագծի կանոնները սահմանվում են այլ իրավական ակտերով:* Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *հանրային ծառայողների՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող* ***վարքագծի տիպային կանոնները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը****:* Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *հանրային ծառայողի վարքագծի կանոնները սահմանվում են վարքագծի տիպային կանոնների հիման վրա՝ կանոնագրքերով:* «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ ***հանձնաժողովը ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը****:* «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումներից բխում է, որ Հանձաժողովի կողմից սահմանվում են հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոններ, որոնք ընկած են լինելու հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային		կանոնագիրքը, հանդիսանում է տեխնիկական վրիպակ. «կանոնագիրք» բառին պետք է փոխարիներ «կանոններ» բառը: «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կանոնները և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կանոնագիրքն, իրականում, բովանդակությամբ համընկնում են:

		ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգի հիմքում, և որոնց հիման վրա հետագայում Հանձնաժողովը կանոնագրքով սահմանելու և ընդունելու է՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ Օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոններ, քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետը սահմանելու է քաղաքացիական ծառայողների՝ Օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները, իսկ պատգամավորի, դատավորի, դատախազի, քննիչի վարքագծի կանոնները սահմանվում են այլ իրավական ակտերով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարքագծի տիպային կանոնները և կանոնագրքով սահմանված վարքագծի կանոնները տարբեր իրավական ակտեր են և, որ Նախագծով առաջարկվում է ընդունել ոչ թե կանոնագիրք, այլ՝ կանոններ՝ անհրաժեշտ է խմբագրել Նախագծի նախաբանը՝ հանելով «24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով,» բառերը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ որոշակի չէ Նախագծի նախաբանում որպես քննարկվող իրավական ակտի ընդունման իրավական հիմք՝		

		վկայակոչված՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը, համաձայն որի՝ *հանձնաժողովը ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը*՝ առաջարկում ենք նշված կետը, որտեղ, ըստ էության, նույնացվել են այդ երկու իրավական ակտերը, համապատասխանեցնել Օրենքի կարգավորումներին՝ ապահովելու համար կարգավորումների միատեսակությունը:		
		Նախագծի վերնագրում «հաստատելու» և 1-ին կետում «Հաստատել» բառերը անհրաժեշտ է փոխարինել՝ համապատասխանաբար «սահմանելու» և «Սահմանել» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		2-րդ կետում՝ «հրապարակմանը» բառից առաջ լրացնել «պաշտոնական» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի 1-ին կետով նշվում է, որ դրանով հաստատվում են հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները, մինչդեռ Հավելվածի 56-րդ կետում անհասկանալիորեն նշում է կատարվում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց մասին: Նկատի ունենալով, որ ինչպես ակտի վերնագրից, այնպես էլ դրա ընդունման համար իրավական հիմք հանդիսացող Օրենքի դրույթից ակնհայտ է, որ այն տարածելի է հանրային ծառայողների վրա՝ անհրաժեշտ է Նախագիծը խմբագրել և շարադրել	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		այնպես, որ հստակ լինի սուբյեկտների շրջանակը, որոնց վրա տարածելի են սահմանվող տիպային կանոնները:		
		Հավելվածի 10-րդ կետի վերջին նախադասությունն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հանրային ծառայողը չի կարող պատժվել Խրախուսելի կանոններին չհետևելու համար, սակայն սեփական վարքագծի համապատասխանեցումը այդ նորմերին խրախուսելի է:»՝ հաշվի առնելով նաև Հավելվածի 108-րդ կետը, համաձայն որի՝ *հանրային ծառայողի կողմից վարքագծի կանոնների խախտում թույլ տալը հաշվի է առնվում նրա ատեստավորման,* ***ծառայողական առաջխաղացման, պաշտոնի նշանակման ժամանակ****:*	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում Նախագծի 10-րդ կետը խմբագրվել է: Միաժամանակ, Նախագծի 4-րդ գլուխը, որը վերաբերում էր տիպային կանոնները խախտելու համար նախատեսված պատասխանատվությանը, հանվել է Նախագծից:
		Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները՝ առաջարկում ենք Հավելվածի 11-րդ կետում նշված՝ «նվեր» և «հանրային ծառայության պաշտոն» հասկացությունները չնախատեսել՝ հաշվի առնելով, որ դրանք հանրածանոթ հասկացություններ են, մասնավորապես՝ նախատեսված են «Հանրային ծառայության մասին» օրենքով, և սույն իրավական ակտի էությունից բխող այլ սահմանում տրված չէ: Միևնույն ժամանակ, «հանրային ծառայության պաշտոն» հասկացությունը նշված է որպես ակտում օգտագործվող հիմնական հասկացություն, սակայն	Ընդունվել է մասամբ	«Նվեր» հասկացությունը հանդիսանում է տվյալ Նախագծի էական բաղկացուցիչ մաս և ներառվել է Նախագծում՝ որոշակիությունը և պարզությունը հնարավորինս ապահովելու համար: Միաժամանակ, «հանրային ծառայության պաշտոն» եզրույթը հանվել է Նախագծից:

		Նախագծի ամբողջ տեքստում այդ հասկացություն չի օգտագործվել:		
		Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասը, համաձայն որի՝ *նորմատիվ իրավական ակտի բաժիններն ու գլուխները համարակալվում են արաբական թվանշաններով: Բաժիններն ու գլուխները ունենում են վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը: Գլուխների և բաժինների վերնագրերը գրվում են մեծատառերով, և վերնագրերի վերջում որևէ կետադրական նշան չի դրվում*՝ անհրաժեշտ է Հավելվածի բաժինների և գլուխների համարակալումը համապատասխանեցնել նշված կարգավորմանը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 36-րդ կետով առաջարկվում է սահմանել՝ *հանրային ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունները կատարելիս այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ, այդ թվում՝ նամակագրությամբ կամ հեռախոսով հաղորդակցվելիս, հայտնել իր ինքնությունը:* Նշվածի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *հանրային ծառայությունն իր մեջ ներառում է պետական ծառայությունը, ինչն իր մեջ ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը,* ***մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը,*** *փրկարար ծառայությունը,* ***զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով***	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, հակակոռուպցիոն կոմիտեում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, *դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը*: Հաշվի առնելով, որ նշված ծառայությունները «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով նախատեսված են որպես օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնողներ և այն, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է, ի թիվս այլնի, **գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցության** սկզբունքի հիման վրա՝ հարկ է նկատի ունենալ, որ Նախագծով առաջարկվող կարգավորումը չի բխում այդ գործունեության իրականացման էությունից և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի կարգավորումներից: Ուստի, անհրաժեշտ է Նախագծով սահմանել բացառություններ՝ հանրային ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ անձի ինքնության բացահայտման դեպքերի համար:		

		Հավելվածի 41-րդ կետով նախատեսված է, որ *հանրային ծառայողը պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ դրա վերաբերյալ սպառնալիք չներկայացնել:* Սահմանադրության 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:* Հաշվի առնելով, որ Սահմանադրությամբ և օրենքներով թույլատրվում է հանրային ծառայողին, ելնելով պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակից, կիրառել ֆիզիկական ուժ՝ անհրաժեշտ է Նախագծի նշված կարգավորման մեջ ֆիզիկական ուժ կիրառելու մասով նախատեսել բացառություն:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 44-րդ կետով նախատեսված կարգավորումների առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ դրանք բարեկրթության տարր չեն հանդիսանում, և այդպիսի կանոնների նախատեսումը	Չի ընդունվել	Քննարկվող դրույթում ամրագրված սահմանափակումների սահմանումը՝ որպես

		«Բարեկրթություն» գլխի շրջանակներում չի բխում վերջինիս բովանդակությունից: Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ քննարկվող կարգավորումը հանդիսանում է ներքին կարգապահական կանոններով կարգավորվող հարց, ուստի առաջարկում ենք Նախագծից հանել այն:		ընդհանուր տիպային կանոն, բխում է հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից: Միաժամանակ, տվյալ կանոնը հետագայում պետք է սահմանմանվի տիպային կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման ակտերում (կանոնագրքերում):
		Հավելվածի 51-րդ կետի համաձայն՝ *հանրային ծառայողը պարտավոր է իր անմիջական ղեկավարին, իսկ անմիջական ղեկավարի բացակայության դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր հայտարարություն ներկայացնել իրական կամ հնարավոր շահերի բախման հանգամանքների վերաբերյալ: Նախքան անմիջական ղեկավարի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր հանձնարարությունը ստանալը, զերծ մնալ հարցի վերաբերյալ որևէ գործողություն կատարելուց կամ որոշում ընդունելուց,* նշվածը դիտարկելով Օրենքի	Ընդունվել է մասամբ	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ինչ վերաբերում է քննարկվող կարգավորումները Նախագծով չսահմանելու առաջարկին, հարկ է նշել, որ Նախագծում կարգավորվում են այն հարաբերությունները, որոնք ուղղակիորեն հանդիսանում

		33-րդ հոդվածի համատեքստում՝ առաջարկում ենք «անմիջական ղեկավարի բացակայության» արտահայտությունը խմբագրել՝ հաշվի առնելով, որ համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ խոսքը վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու և ոչ թե վերջիններիս բացակայության մասին է: Ուստի, հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ համաձայն որի՝ *նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը*՝ անհրաժեշտ է Նախագծում կիրառել «Հանրային ծառայության մասին» օրենքով նույն միտքն արտահայտելիս կիրառված բառերը: Այնուհետև, Օրենքի 33-րդ հոդվածում անմիջական ղեկավարից բացի նշվում է նաև վերադաս անձի մասին: Հաշի առնելով, որ Նախագծի համապատասխան կարգավորումներում վերադաս անձի մասով նշում առկա չէ՝ անհրաժեշտ է Նախագծի կարգավորումները այդ մասով ևս համապատասխանեցնել Օրենքին: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ Օրենքի 33-րդ հոդվածով մանրամասն կարգավորված են այդ հարաբերությունները՝ առաջարկում ենք զերծ մնալ դրանց՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով մասնակի նախատեսումից:		են հանրային ծառայողի վարքագծի կանոններին առնչվող հարաբերություններ: Հետևաբար՝ շահերի բախման վերաբերյալ որոշակի դրույթներ ևս ենթակա են առավել մանրամասն սահմանման Նախագծում՝ առավելագույն որոշակիություն ապահովելու նպատակով:
		Հավելվածի 55-րդ կետի համաձայն՝ *հանրային ծառայողը պարտավոր է իր վերադասին կամ*	Ընդունվել է	

		անմիջական ղեկավարին, մասնավոր հատվածում հետագա աշխատանքի անցնելու առաջարկը ընդունելու դեպքում, անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր իրազեկել, ինչի կապակցությամբ հարկ ենք համարում նշել՝ ինչո՞վ պայմանավորված է սահմանվել միայն մասնավոր հատվածում աշխատանքի անցնելու առաջարկի ընդունման դեպքում իր վերադասին կամ անմիջական ղեկավարին գրավոր իրազեկելը: Արդյոք շահերի կառավարման տեսանկյունից խնդրահարույց չի կարող համարվել նաև նույն իրավիճակը պետական հատվածում, օրինակ՝ վարչաիրավական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված հարաբերությունների (վերահսկողություն, ստուգում և այլն) մեջ գտնվող մարմիններում: Հարկ է նկատի ունենալ, որ նման դիրքորոշում է որդեգրված նաև Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից հաստատված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի տիպային կանոններով: Ուստի, առաջարկում ենք խմբագրել նշված կարգավորումը, այնպես, որ դա տարածելի լինի նաև պետական հատվածում աշխատանքի անցնելու առաջարկի ընդունման դեպքերի վրա, որտեղ ևս կարող են շահերի բախման առաջացման ռիսկեր ի հայտ գալ:		Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 57-րդ կետում նշված է, որ *Օրենքով սահմանված թույլատրելի համարվող ցանկացած*	Ընդունվել է ի գիտություն	Քննարկումների արդյունքում դրույթի նշված

		նվերի կամ հյուրասիրության տեսակը և արժեքը պետք է լինի սոցիալապես ընդունելի սահմաններում և իրավիճակի հետ համադրելի, մինչդեռ Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված թույլատրելի համարվող նվերի արժեքի վերաբերյալ նախատեսված է այլ սահմանափակում՝ *արժեքը պետք է չգերազանցի 60.000 ՀՀ դրամը, իսկ գերազանցելու դեպքում այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն և հաշվառվում է որպես այդպիսին: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները Կառավարության սահմանած կարգով պարտավոր են այն հանձնել պետությանը կամ համայնքին:* Ուստի գտնում ենք, որ այս մասով Նախագծի կարգավորումները չեն բխում Օրենքով նախատեսված՝ թույլատրելի համարվող նվերի արժեքի վերաբերյալ կարգավորումներից և ունեն լրացուցիչ քննարկման և խմբագրման կարիք:		հատվածը հանվել է Նախագծից:
		Հավելվածի 59-րդ կետի համաձայն՝ *հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ իր գործառույթներն ու պարտականությունները իրականացնելու համար պետական բյուջեից բացի այլ աղբյուրից վարձատրություն ստանալուց,* մինչդեռ հարկ է նկատի ունենալ, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *աշխատակազմի և համայնքային հիմնարկների աշխատողների վարձատրությունն օրենքով*	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		սահմանված կարգով կատարվում է ***համայնքի բյուջեի հաշվին:***		
		Հավելվածի 60-րդ կետը առաջարկում ենք հանել՝ հաշվի առնելով, որ այն 56-րդ կետում նշված արգելքի մասնավոր դեպք է նկարագրում և միևնույն ժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Օրենքի 29-րդ հոդվածով արդեն իսկ սահմանված են այն նվերները, որոնց ընդունումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից թույլատրելի են:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 61-րդ կետում «անմիջական ղեկավարին» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «կամ վերադասին» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 63-րդ կետով նախատեսված կարգավորումների կապակցությամբ հարկ ենք համարում նշել հետևյալը. «Կուսակցությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կուսակցությունները կարող են ունենալ խորհրդանշան և այլ խորհրդանիշեր, որոնց նկարագրությունը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ:* «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1.3-րդ հոդվածի համաձայն՝ *քաղաքական գովազդը ներառում է ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ*	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը*: Նկատի ունենալով օրենքի վերոնշյալ կարգավորումները՝ անհրաժեշտ է «կուսակցությունների լոգոներ կամ թեկնածուների տարբերանշաններ» բառերը փոխարինել *«կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանշաններ, խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ»* բառերով:		
		Հավելվածի 69-րդ կետը առաջարկում ենք խմբագրել՝ հստակեցնելով ու՞մ կողմից կամ ի՞նչ թույլտվության մասին է խոսքը:	Չի ընդունվել	Թույլտվություն տալու լիազորություն ունեցող անձանց շրջանակը սպառիչ կերպով թվարկել հնարավոր չէ, քանի որ առանձին գործողությունների և առանձին հանրային ծառայողների դեպքում նման թույլտվություն տվող անձինք տարբեր են: Քննարկվող դրույթը բոլոր հանրային ծառայողների համար ընդհանրական է և

				ենթակա է մասնավորեցման առանձին իրավիճակներում:
		1. Հավելվածի 87-րդ կետի համաձայն՝ *արգելվում է մասնավոր կյանքում հանրային ծառայողի և նրա վերադասի միջև մասնավոր ֆինանսական գործարքների կատարումը, այդ թվում՝ փոխառություններ տրամադրելը, մեկ այլ ծառայողի համար երաշխիք տրամադրելը, ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի համար երաշխավոր հանդիսանալը,* ինչի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ իրավունքի նման սահմանափակումը չի կարող նախատեսվել ենթաօրենսդրական նորմատիվի իրավական ակտով, ավելին՝ գտնում ենք, որ այն պետք է կարգավորել Օրենքի 32-րդ հոդվածի շրջանակներում՝ հատկապես հաշվի առնելով, որ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հարաբերությունների հետ կապված սահմանափակումները նախատեսված են այդ հոդվածի շրջանակներում: Միևնույն ժամանակ, հստակ չէ՝ «*մեկ այլ ծառայողի համար երաշխիք տրամադրելը, ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի համար երաշխավոր հանդիսանալը*» վերաբերում է վերադաս-ենթակա հարաբերությունների մեջ գտնվող անձանց թե՞ ցանկացած երկու հանրային ծառայողի:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		Հավելվածի 108-րդ կետում նշվում է, որ *հանրային ծառայողի կողմից վարքագծի կանոնների խախտում թույլ տալը հաշվի է առնվում նրա ատեստավորման, ծառայողական առաջխաղացման, պաշտոնի նշանակման ժամանակ*: Մինչդեռ, հարկ է նկատի ունենալ, որ ատեստավորումը իրենից ենթադրում է **զբաղեցրած պաշտոնին պետական ծառայողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանության որոշմանն ուղղված գործընթաց (միջոցառում)**, ուստի անհասկանալի է վարքագծի կանոնների չպահպանումը ինչպե՞ս պետք է հաշվի առնվի նման գործընթացի ժամանակ և կամ ո՞րն է լինելու դրանց օրինակ չպահպանման հետևանքը, երբ ատեստավորման արդյունքներով կհաստատվի հանրային ծառայողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունն իր զբաղեցրած պաշտոնին: Ուստի, հաշվի առնելով, որ ատեստավորման իրականացման նպատակն այլ է՝ գտնում ենք, որ վարքագծի կանոնների չպահպանելը կամ պահպանելը ատեստավորման ընթացքում հաշվի առնելը չի բխում այն նպատակից, որը դրված է այդ գործընթացի իրականացման հիմքում: Այնուհետև, սկզբունքորեն դեմ չլինելով վարքագծի կանոնների պահպանումը պաշտոնի նշանակելիս հաշվի առնելու վերաբերյալ կարգավորումներին՝	Ընդունվել է մասնակի	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		այնուհանդերձ գտնում ենք, որ պաշտոնի նշանակելու նման սահմանափակում նախատեսված չէ Օրենքով, իսկ հանրային ծառայության պաշտոնի նշանակելու սահմանափակումները կամ արգելքները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքով կամ պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով: Այսպիսով, հաշվի առնելով, որ իրավունքի նման սահմանափակման նախատեսումը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով չի բխում Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասից, առաջարկում ենք այն նախատեսել «Հանրային ծառայության մասին» օրենքով կամ դրանց նախատեսումը թողնել պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների կարգավորմանը:		

		Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ Նախագծում առկա են բազմաթիվ տեխնիկական վրիպակներ, այդ թվում՝ «և», «կամ» շաղկապների կիրառության տեսանկյունից, որոնք պատրաստ ենք քննարկել աշխատանքային քննարկման ձևաչափով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
8.	ՀՀ արդարադատության նախարարություն ելից 17444-2022 առ 21.04.2022թ.	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն. «1. Հանձնաժողովը՝ 23) ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային **կանոնագիրքը»**, իսկ «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «4. Հանրային ծառայողների՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային **կանոնները** սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը»: Վերոգրյալից պարզ է դառնում, որ «Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին վերապահվել է հանրային ծառայողի վարքագծի տիպային **կանոնագիրք,** իսկ «Հանրային ծառայության մասին» օրենքով՝ վարքագծի տիպային **կանոններ** սահմանելու իրավասություն: Նման պայմաններում հստակեցման կարիք ունի, թե ինչ հիմքով է նախապատվությունը տրվել «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումներին՝ նկատի ունենալով նաև, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում կիրառվում են	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի դրույթն առ այն, որ Հանձնաժողովն ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը, հանդիսանում է տեխնիկական վրիպակ. «կանոնագիրք» բառին պետք է փոխարիներ «կանոններ» բառը: Այդ իսկ պատճառով որպես հիմք են ընդունվել «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթը և ձևակերպումները:

		ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:		
		«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Նորմատիվ իրավական ակտը կարող է պարունակել նախաբան, որը սահմանում է իրավական ակտի ընդունման նպատակներն ու պատճառները: Նախաբանը չի շարադրվում առանձին հոդվածով, չի համարակալվում և չի բաժանվում հոդվածների (կետերի): (…)»: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հավելվածի 1-ին և 2-րդ կետերը սահմանում են նորմատիվ իրավական ակտի նպատակներն ու պատճառները, առաջարկում ենք դրանք շարադրել նախաբանի տեսքով:	Չի ընդունվել	Նորմատիվ իրավական ակտ է հանդիսանում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված որոշումը, իսկ Նախագիծը որպես տվյալ որոշման հավելված է հանդես գալիս: Հետևաբար՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի մեջբերված դրույթն առավելապես վերաբերում է Կառուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ընդունված որոշմանը:
		Առաջարկում ենք հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետում «բարեվարքության» բառը փոխարինել «բարեվարքությունը» բառով՝ շարադրանքի հնարավոր տարընկալումը բացառելու համար:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Առաջարկում ենք հավելվածի 4-րդ և 5-րդ կետերը հանել՝ նկատի ունենալով, որ ենթաօրենսդրական	Չի ընդունվել	Քննարկվող դրույթում նշված՝ պետական

		նորմատիվ իրավական ակտով չեն կարող սահմանվել այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր սահմանելու իրավական հիմքեր:		մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հետագայում հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) վերաբերյալ կարգավորումը բխում է «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածից և ինքնուրույն չի ամրագրում այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր սահմանելու պահանջ:
		Հավելվածի 6-րդ կետը առաջարկում ենք նախատեսել 11-րդ կետում՝ որպես փաստաթղթում օգտագործվող հիմնական հասկացություն:	Չի ընդունվել	«Կանոնները» չեն հանդիսանում Նախագծում բազմաթիվ անգամ օգտագործվող հիմնական հասկացություն, այլ, ըստ էության, կազմում են Նախագծի բովանդակությունը: Այդ իսկ պատճառով «Կանոններ»-ի

				սահմանումը տրվում է առանձին դրույթով:
		Առաջարկում ենք հավելվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տիպային կանոնները հանրային ծառայողների ծառայողական էթիկայի և ծառայողական վարքագծի ընդհանուր սկզբունքների, նորմերի և կանոնների ամբողջություն են, որով պետք է առաջնորդվեն հանրային ծառայողները՝ անկախ իրենց զբաղեցրած պաշտոններից:»: Միևնույն ժամանակ գտնում ենք, որ քննարկվող կետում հստակեցման կարիք ունի «ծառայողական վարքագծի ընդհանուր սկզբունքներ» ձևակերպումը, քանի որ այն դեպքում, եթե վերաբերում է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին, ապա առավել նպատակահարմար է օգտագործել միևնույն տերմինը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների. «2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»: Բացի այդ, անհրաժեշտություն է առաջանում նաև վերացնել հակասությունները հավելվածի 1-ին և 6-րդ կետերի միջև, քանի որ 1-ին կետում նշվում է, որ Տիպային կանոնները բխում են վարքագծի սկզբունքներից, իսկ 6-րդ կետում նշվում է (եթե խոսքը նույն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		սահմանված վարքագծի սկզբունքների մասին է), որ վարքագծի կանոնները իրենցից ներկայացնում են վարքագծի սկզբունքներ: Վերոգրյալը պետք է դիտարկել նաև այն տեսանկյունից, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն վարքագծի տիպային կանոնները **բխում են** «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից:		
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 6-րդ և 7-րդ կետերի կարգավորումների միջև առկա հակասությունը, քանի որ 7-րդ կետով նշվում է, որ «Տիպային կանոններով սահմանվում են հանրային ծառայողի վարքագծի կանոնները ինչպես ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ **ծառայողական պարտականություններից դուրս**», այնինչ 6-րդ կետով խոսքը գնում է միայն ծառայողական պարտականություններից բխող վարքագծի կանոնների մասին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ծառայողական պարտականություններից դուրս վարքագծի կանոնների սահմանելու համար անհրաժեշտ է համապատասխան իրավական հիմք:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. Նախագծի քննարկվող դրույթները խմբագրվել են:
		Առաջարկում ենք հավելվածի 8-րդ կետում «բաղադրիչ» բառը փոխարինել «բաղադրիչներ» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Առաջարկում ենք հավելվածի 10-րդ կետի վերջին նախադասությունը վերախմբագրել՝ լեզվաոճային տեսանկյունից առավել հստակ և նորմատիվ իրավական ակտերին ներկայացվող պահանջներին համապատասխան դարձնելով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Առաջարկում ենք հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված «Նվեր» հասկացության բովանդակության փոխարեն հղում կատարել «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասին՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:	Չի ընդունվել	«Նվեր» հասկացությունը հանդիսանում է տվյալ Նախագծի էական բաղկացուցիչ մաս և ներառվել է Նախագծում՝ որոշակիությունը և պարզությունը հնարավորինս ապահովելու համար:
		Առաջարկում ենք հավելվածի 11-րդ կետում «փաստաթղթում» բառը փոխարինել «ակտում» բառով:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 11-րդ կետի 3-րդ ենթակետի բովանդակությունը, քանի որ հստակ չէ դրա և «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված «սովորաբար կազմակերպվող հյուրասիրության» հարաբերակցությունը: Բացի այդ, առաջարկում ենք հստակեցնել, թե հյուրասիրողի ներկայությամբ տալու պահանջը վերաբերում է հյուրասիրությանը, թե՝ հրավերին՝ միևնույն ժամանակ, հստակեցնելով և	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում հյուրասիրությանը վերաբերող դրույթները հանվել են Նախագծից: Սակայն, այնուամենայնիվ, առաջարկի վերաբերյալ հարկ է որոշակի դիտարկումներ կատարել:

		լրացուցիչ հիմնավորելով, թե հրավերը կամ հյուրասիրությունը ոչ առձեռն այլ եղանակով տալու հանգամանքը ինչպես է փոխում իրավիճակը:		«Հանրային ծառայության մասին» օրենքը սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը դասում է թույլատրվող նվերների շարքին: Նախագծում ամրագրվում է «հյուրասիրություն» եզրույթի սահմանումը, ինչպես նաև թվարկվում են այն դեպքերը, երբ հյուրասիրությունը հանդիսանում է ոչ թույլատրելի: Համադրելով «հյուրասիրություն» հասկացության վերաբերյալ օրենսդրական և Նախագծում առկա կարգավորումները՝ ակնհայտ է դառնում, որ դրանք չեն հակասում միմյանց, այլ, ընդհակառակը, փոխլրացնում են իրար և բխում միմյանցից: Միաժամանակ, հյուրասիրողի ներկայությամբ տալու

				պահանջը հստակորեն վերաբերում է հյուրասիրությանը: Հանրային ծառայողներին տրվող հյուրասիրության հասկացության վերաբերյալ առկա են մի շարք միջազգային ստանդարտներ: Մասնավորապես՝ Թրանսփարենսի ինթերնեշնլ կազմակերպության կողմից մշակված Համաշխարհային հակակոռուպցիոն ուղեցույցում շեշտվում է, որ հյուրասիրության տրման պահին հյուրասիրողի ներկայությունը պարտադիր է:
		Առաջարկում ենք հավելվածի 11-րդ կետի 5-րդ ենթակետը խմբագրել՝ լեզվաոճային և բովանդակային տեսանկյունից համապատասխանեցնելով նորմատիվ իրավական ակտերին ներկայացվող պահանջներին: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք ***համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքները*** դիտել որպես հանրային շահ և ոչ՝ շահի	Չի ընդունվել	«Հանրային շահ» հասկացության սահմանումը տրվում է մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի 2019 թ. ապրիլի

		առարկա՝ նկատի ունենալով, որ շահն է հանդիսանում տարբեր հարաբերությունների առարկա և ինքն իր հերթին չի ունենում առարկա, կամ հստակեցնել «հանրային շահ» և «հանրային շահի առարկա» հասկացություններն ու հարաբերակցությունը:		30-ի ՍԴՈ-1458 որոշման մեջ և Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1621/05/14 որոշման մեջ: Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ նշվում է, որ «Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ առհասարակ հանրային շահն այն սահմանադրական արժեքն է, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել»: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ սահմանվում է, որ «հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար»:

		Առաջարկում ենք հավելվածի 11-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված «Հանրային ծառայության պաշտոն» հասկացության բովանդակության փոխարեն հղում կատարել «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասին՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները: Բացի այդ, առաջարկվող կարգավորումով հանրային ծառայության պաշտոնի սահմանումը չի ներառում քաղաքական զսպվածության պահանջ, ինչը անհամապատասխանություն է առաջացնում ինչպես հավելվածի տեքստի (կետ 12), այնպես էլ «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան կարգավորման հետ:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Առաջարկում ենք հավելվածի 11-րդ կետի 7-րդ ենթակետը հստակեցնել, քանի որ իրավիճակը ինքնին չի կարող հանդիսանալ սեռական ոտնձգություն, այլ առնվազն այդպիսին իրավիճակի ստեղծմանն ուղղված վարքագիծը: Բացի այդ, հիմնավորման կարիք ունի նորմով սահմանված նպատակների առկայությունը՝ որպես վարքագծի կանոնների ասպեկտից սեռական ոտնձգության առկայությունը հաստատված համարելու համար պարտադիր հատկանիշ դիտելը. կարծում ենք՝ սեռական բնույթի ֆիզիկական կամ խոսքային ոտնձգության փաստը ինքնին բավարար է	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում Նախագծում առկա «սեռական ոտնձգություն» եզրույթի սահմանումը խմբագրվել է՝ համապատասխանեցնելով այն Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին

		հակահիրավական վարքագծի առկայությունը հաստատված համարելու համար: Միևնույն ժամանակ, կարծում ենք՝ հարկ է ակտում բացահայտել «ֆիզիկական դրսևորում ունեցող սեռական բնույթի գործողություններ» արտահայտության բովանդակությունը:		կոնվենցիայի 40-րդ հոդվածի կարգավորումներին:
		Առաջարկում ենք հավելվածի 12-րդ կետի 10-րդ ենթակետում որպես հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոնի բաղադրիչ դիտել ոչ թե *չհրապարակված պաշտոնեական տեղեկատվությունը*, այլ *պաշտոնեական տեղեկատվություն չհրապարակելը*, իսկ 11-րդ ենթակետում և հավելվածի հետագա տեքստում դիտարկել «Հանրային ռեսուրսների *բարեխիղճ* օգտագործում» ձևակերպման օգտագործման նպատակահարմարությունը:	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		Առաջարկում ենք հավելվածում բացահայտել ***գնահատանք*** տերմինի բովանդակությունը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում «գնահատանք» եզրույթը հանվել է Նախագծից:
		Առաջարկում ենք հավելվածի 13-րդ և 14-րդ կետերում օգտագործել միաժամանակ «տարբերանշաններ» և/կամ «խորհրդանշաններ» եզրույթները՝ նկատի ունենալով, որ պետական մարմինները ևս ունենում են խորհրդանիշներ: Բացի այդ, առաջարկում ենք հավելվածի 14-րդ կետը խմբագրել այն համատեքստում, որ	Չի ընդունվել	Դրույթը քննարկումների արդյունքում խմբագրվել է: Միաժամանակ, հարկ է նշել, որ օտարերկրյա պատվիրակությունների հետ հանդիպումներից հետո ծառայողական

		հարգալիրության և գնահատանքի բաղադրիչի խախտում չեն կարող համարվել, օրինակ, ՀՀ մասնակցությամբ միջազգային կազմակերպությունների խորհրդանիշների կամ տարբերանշանների օգտագործումը, դիցուք՝ ՄԱԿ-ի կամ ԵԽ-ի խորհրդանիշով գրիչների կամ այլ իրերի օգտագործումը, կամ պատմական որոշակի եղելություններին կամ իրադարձություններին նվիրված խորհրդանիշների օգտագործումը, օրինակ, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի խորհրդանիշ հանդիսացող «Անմոռուկ»-ի օգտագործումը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ հանրային ծառայողը կարող է ընդգրկված լինել արտասահմանյան պատվիրակության կազմում, որը, մասնակցելով համապատասխան պետության պաշտոնական արարողություններին, որպես արարողության մաս կարող է հարգանքի տուրք մատուցել տվյալ երկրի խորհրդանիշին, օրինակ՝ հոտնկայս լինել համապատասխան երկրի օրհներգի կատարման ժամանակ:		գործունեության համար նախատեսված տարածքներում այդ պատվիրակությունների խորհրդանիշները և տարբերանշանները ցուցադրել չի թույլատրվում՝ համաձայն կանոնի նոր խմբագրման:
		Հավելվածի 16-րդ կետում առաջարկում ենք «գործունեությամբ» բառը փոխարինել «գործողություններով» բառով՝ նկատի ունենալով, որ *գործունեությունը* ավելի նեղ է, հիմնականում վերաբերում է տևական աշխատանքին, չի ներառում հանրային ծառայողի մեկանգամյա վարքագիծը և վստահաբար թույլ չի տալիս պնդել, որ վերաբերում է նաև ծառայությունից դուրս ոչ մասնագիտական	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		ոլորտում կատարվող ցանկացած գործողության. դիցուք՝ Հր. Աճառյանի Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի համաձայն գործունեությունը բնորոշվում է որպես որևէ բնագավառում տևական աշխատանքի կատարելը՝ կատարվող աշխատանքը, իսկ Է. Աղայանի Արդի հայերենի բացատրական բառարանում՝ որպես աշխատանքի որևէ բնագավառում գործելը (մանկավարժական, գիտական), մարդու ակտիվության այնպիսի պրոցես, որի ընթացքում իրականացվում է նրա այս կամ այն դիրքորոշումը միջավայրի, մարդկանց, խմբերի կամ խնդիրների նկատմամբ, որոնք նրան առաջադրում է կյանքը:		
		Առաջարկում ենք նախագծում բացահայտել հավելվածի 22-րդ կետով սահմանված «համայնքի խոցելի խմբեր» եզրույթի բովանդակությունը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում «համայնքի և համայնքի տարբեր» եզրույթը հանվել է Նախագծից:
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 25-րդ կետով սահմանված «այլ անձանց» բովանդակությունը, քանի որ վերջինիս չափազանց լայն մեկնաբանությունը կարող է հանգեցնել հանրային ծառայողի վրա անհիմն պարտականություններ դնելուն՝ խոչընդոտներ ստեղծելով վերջինիս բնականոն գործունեության համար:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. «այլ անձանց» եզրույթը փոխարինվել է «այլ հանրային ծառայողների» եզրույթով:
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 27-րդ հոդվածով սահմանված «անհրաժեշտության դեպքում»	Չի ընդունվել	«Անհրաժեշտության դեպքում» ձևակերպումը,

		ձևակերպումը, քանի որ այն չափազանց գնահատողական է և կարող է հանգեցնել կամայական մեկնաբանությունների՝ դրանից բխող հետևանքներով:		կարծում ենք, տեղին է ընտրված, քանի որ կախված հանրային ծառայողի պարտականությունների և լիազորությունների շրջանակներից՝ նրա կողմից առարկությունների և առաջարկությունների ներկայացման դեպքերը և կարգը կարող են տարբերվել: Հաշվի առնելով, որ դրույթը սահմանում է իմպերատիվ, այլ ոչ հայեցողական պահանջ հանրային ծառայողների համար, հնարավոր չէ թվարկել այն դեպքերը, երբ հանրային ծառայողը պարտականություն կունենա մասնագիտական առարկություններ և առաջարկություններ ներկայացնելու: Միաժամանակ, կարծում ենք, որ ձևակերպումը կամայական

				մեկնաբանությունների տեղիք տալ չի կարող: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Առաջարկում ենք հավելվածի 28-րդ կետում «դրսևորման հետ կապված» բառերը փոխարինել «առնչությամբ» բառով, բացի այդ, առաջարկում ենք քննարկվող նորմը դիտարկել որպես վարքագծի խրախուսելի կանոն, այլ ոչ պարտադիր, այլապես հանրային ծառայողի վրա կդրվի անհիմն պարտավորություն բոլոր դեպքերի համար:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Առաջարկում ենք հավելվածի 29-րդ կետը հստակեցնել, քանի որ «այլ ոլորտներ» հասկացությունը չափազանց լայն է և կարող է կամայական մեկնաբանությունների ենթարկվել, բացի այդ՝ առաջարկում ենք խմբագրել «իր աշխատավայր հանդիսացող հանրային ծառայության» արտահայտությունը (ինչպես սույն կետում, ակնպես էլ նախագծի այլ մասերում):	Ընդունվել է մասամբ	Նախագծում սահմանված կանոններն ուղղված են ինչպես հանրային ծառայության ընթացքում, այնպես էլ՝ դրանից դուրս հանրային ծառայողների վարքագծի կանոններին: Հետևաբար, քննադատական մտահոգություններ արտահայտելիս հարգալից և զուսպ լինելու պահանջն ուղղված է անձի՝ և՛ որպես

				հանրային ծառայողի, և՛ որպես մասնավոր անձի վարքագծին:
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 30-րդ և 31-րդ կետերում օգտագործվող «թափանցիկություն» և «թափանցիկ» հասկացությունները՝ հանրային ծառայողների համար ապահովելու հստակություն առ այն, թե ինչպիսի վարքագծի դեպքում սույն պահանջը կհամարվի պահպանված:	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Առաջարկում ենք հավելվածի 34-րդ կետում «ապահովել» բառից առաջ լրացնել «իր լիազորությունների սահմաններում» բառերը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		Առաջարկում ենք հավելվածի 35-րդ կետում «պաշտոնական» բառը փոխարինել «պաշտոնական» բառով:	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը հանվել է Նախագծից:
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 38-րդ կետի պահանջները, քանի որ հանրային ծառայողը կարող է, օրինակ, իրավասու մարմնին հայտնել մեկ այլ ծառայողի կարգապահական խախտման մասին, որոնք, կարծում ենք, պետք է նշվեն որպես բացառություն:	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը վերաբերում է հանրային ծառայողի կողմից գործընկերոջ վերաբերյալ քննադատություն արտահայտելուն, այլ ոչ՝ կարգապահական հնարավոր խախտումների վերաբերյալ դիտարկումներ կատարելուն: Հանրային ծառայողի կողմից

				գործընկերոջ կարգապահական առերևույթ խախտման վերաբերյալ իրավասու մարմնին տեղեկացնելու գործընթացի կարգավորումը չի ընդգրկվում սույն Նախագծի շրջանակներում:
		Առաջարկում ենք հավելվածի 41-րդ կետում «չներկայացնել» բառը փոխարինել «ներկայացնել» բառով, բացի այդ, առաջարկում ենք ավելացնել նաև հոգեբանական բռնության և այլ սպառնալիքների արգելքը: Միևնույն ժամանակ առաջարկում ենք սահմանել սույն կանոնից բացառությունները, քանի որ որոշ հանրային ծառայության պաշտոններից է բխում օրենքով սահմանված դեպքերում ֆիզիկական ուժ գործադրելու լիազորությունը, ինչպես նաև անհրաժեշտ է հաշվի առնել անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը:	Ընդունվել է մասամբ	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Միաժամանակ, «չներկայացնել» բառը չի փոխարինվել «ներկայացնել» բառով, քանի որ վերջինս քեարականական տեսանկյունից չի համապատասխանում դրույթի տրամաբանությանը:
		Հավելվածի 42-րդ կետում առաջարկում ենք սահմանել կանոնից բացառությունները՝ քանի որ որոշ հանրային պաշտոնների դեպքում առկա է ծառայողական համազգեստ, բացի այդ, գտնում ենք, որ եթե հանրային ծառայողի կողմից կատարվող աշխատանքի բնույթից չի բխում հագուստի այս կամ այն տեսակը կրելու	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		անհրաժեշտությունը, նման դեպքերում հանրային ծառայողը ծանրաբեռնվում է պարտականություններով: Կարծում ենք առավել նպատակահարմար է սահմանել հագուստի վերաբերյալ արգելքները: Բացի այդ, «գրասենյակային հագուստ» հասկացությունն ինքնին ևս հստակեցման կարիք ունի, քանի որ անորոշ է:		
		Առաջարկում ենք հավելվածի 44-րդ կետում «աշխատանքի վայրում» բառը փոխարինել «աշխատասենյակում» բառով, կամ սահմանել բացառություն՝ ծխելու համար հատուկ նախատեսված վայրերում ծխելը թույլատրելի լինելու մասին:	Չի ընդունվել	«Աշխատանքի վայրում» բառը «Աշխատասենյակում» բառով փոխարինելու վերաբերյալ առաջարկը չի ընդունվել, քանի որ արգելքը չի վերաբերում միայն աշխատասենյակին: Միաժամանակ, քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է;
		Առաջարկում ենք հավելվածի 47-րդ կետի կարգավորումները համապատասխանեցնել Սահմանադրության 29-րդ հոդվածի կարգավորումներին, քանի որ խտրականության որոշ տեսակներ ներառված չեն քննարկվող կետով: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ սահմանադրական նորմը կրկնելու անհրաժեշտությունը բացակայում է: Բացի այդ, հավելվածի 46-րդ և 47-րդ կետերով սահմանված կարգավորումները խտրականության մասով համանման են, և կրկնության կարիքը բացակայում է:	Ընդունվել է մասամբ	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Միաժամանակ, խտրականության տեսակները, համապատասխանեցնելով Սահմանադրության համապատասխան դրույթին, ենթակա են Նախագծում ներառման՝

				առավելագույն որոշակիություն ապահովելու նպատակով:
		Հավելվածի 48-րդ կետում օգտագործվող «պահպանել անաչառությունը այլ անձանց հետ հարաբերություններում» ձևակերպումն ըստ էության կրկնում է նույն հավելվածի 45-րդ կետը. նշվածի համատեքստում վկայակոչված կետերը վերանայման կարիք ունեն:	Չի ընդունվել	Նախագծի 45-րդ կետոն ուղղված է հանրային ծառայողի՝ իր պարտականությունները կատարելիս առաջացող հարաբերությունների կարգավորմանը, մինչդեռ 48-րդ կետն ուղղված է հանրային ծառայողի՝ այլ մասնավոր անձանց հետ հարաբերությունների կարգավորմանը: Դրույթների բովանդակության մեջ կրկնություն առկա չէ:
		Առաջարկում ենք խմբագրել հավելվածի 49-րդ կետը, քանի որ խիստ գնահատողական է ու հակասում է մասնագիտական առաջխաղացման դեպքում արժանիքներով առաջնորդվելու, ռեսուրսների ճիշտ կառավարման և այլ կարևոր սկզբունքների, որոնք ընկած են հանրային ծառայության հիմքում:	Չի ընդունվել	Մասնագիտական առաջխաղացման ընթացակարգը սահմանվում է այլ իրավական ակտերով և հիմնված է անձի՝ մասնագիտական և այլ արժանիքների գնահատման վրա: Սակայն Նախագծում առկա՝ քննարկվող դրույթի

				էությունը կայանում է հանրային ծառայողի կողմից իր գործընկերներին ըստ արժանիքների՝ հավասար հնարավորություններ ընձեռելուն և խտրականությունը բացառելու մեջ:
		Առաջարկում ենք հավելվածի 51-րդ կետը վերանայել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ գրավոր հանձնարարություններ տալու իրավասության բացակայության համատեքստում: Միևնույն ժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ սույն կետում օգտագործվող իրական կամ հնարավոր շահերի բախման հասկացությունները բացահայտված չեն օրենսդրությամբ: Բացի այդ, առաջարկում ենք սույն կետում և հավելվածի մյուս կետերում հստակեցնել «պաշտոնական հաղորդակցություն միջոցներ» հասկացության բովանդակությունը, տեսակները:	Ընդունվել է մասամբ	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Միաժամանակ, հարկ է նշել, որ դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում և կհստակեցվի «պաշտոնական հաղորդակցության միջոցներ» եզրույթը:
		Առաջարկում ենք սահմանել, թե հանրային ծառայողը ինչ վարքագիծ պետք է դրսևորի նաև այն դեպքում, երբ արդեն իսկ առաջացել է հավելվածի 52-րդ հոդվածով նախատեսված իրավիճակը:	Չի ընդունվել	Շահերի բախման իրավիճակի վերաբերյալ կարգավորումները սահմանված են օրենսդրական

				մակարդակում՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով:
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 54-րդ կետով նախատեսված «պաշտոնական կարգավիճակի բարելավում» ձևակերպման բովանդակությունը:	Չի ընդունվել	Քննարկվող եզրույթը խմբագրվել է. «պաշտոնական» բառը փոխարինվել է «պաշտոնական» բառով: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Նվեր հասկացությունը նախագծում պահպանելու պարագայում առաջարկում ենք հավելվածի 56-րդ կետից հանել «Օրենքի իմաստով» բառերը, քանի որ այդ դեպքում քննարկվող կետում օրենքին հղում կատարելը դառնում է առարկայազուրկ: Բացի այդ, առաջարկում ենք հանել «, եթե նման նվերը, այդ թվում՝ հյուրասիրությունը, ողջամտորեն չէր տրամադրվի հանրային ծառայող չհանդիսացող կամ հանրային պաշտոն չզբաղեցնող անձի» բառերը, քանի որ դրանք արդեն իսկ մտնում են քննարկվող հասկացության բնութագրի մեջ:	Չի ընդունվել	Դրույթում մանրամասնվում է «ոչ թույլատրելի նվեր» հասկացության բովանդակությունը, մինչդեռ Նախագծի հիմնական հասկացություններում ներառված է «նվեր» եզրույթը: Հետևաբար, «օրենքի իմաստով» արտահայտության առկայությունը դրույթում հստակ իմաստ ունի և հղում է կատարում «Հանրային

				ծառայության մասին» օրենքին:
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 57-րդ կետում օգտագործվող «սոցիալապես ընդունելի սահմաններում» ձևակերպման բովանդակությունը՝ նկատի ունենալով որոշակիությունն ու կանխատեսելիությունը և ՏՀԶԿ՝ հանրային ծառայողների էթիկայի սկզբունքների պահանջները, մասնավորապես՝ տվյալ դեպքում թույլատրելի վարքագծի սահմանագծի մասին հանրային ծառայողների իրազեկվածությունն ապահովելու անհրաժեշտությունը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է. երկրորդ նախադասությունը հանվել է Նախագծից:
		Նվեր քարտը չի կարող դիտվել դրամական միջոցի փոխարկվող այլ գործիք, ուստի առաջարկում ենք հավելվածի 60-րդ կետից հանել «նվեր քարտեր» բառերը՝ նկատի ունենալով, որ վերջինս փոխարկվում է ոչ թե դրամական միջոցի, այլ գույքային համարժեքի: Բացի այդ, պետք է հստակեցնել, թե որ դեպքերում է նման նվերներ ստանալը արգելվում՝ նկատի ունենալով իր ընտանիքի անդամի կողմից կամ համապատասխան արհմիության կողմից տարբեր առիթներով նվերներ ստանալու դեպքերը որպես բացառություն նախատեսելու անհրաժեշտությունը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Առաջարկում ենք հստակեցնել սույն նախագծում կիրառվող «անմիջական ղեկավար» և «վերադաս» հասկացությունների բովանդակությունը:	Չի ընդունվել	Յուրաքանչյուր պարագայում պաշտոնի անձնագրում նշում է կատարվում անմիջական

				ղեկավարի կամ վերադասի վերաբերյալ: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Առաջարկում ենք հավելվածի 61-րդ կետում սահմանել այն բացառությունները, որոնց դեպքում հանրային ծառայողը պարտավոր չէ տեղեկացնել նվերի մասին:	Չի ընդունվել	Դրույթի տրամաբանությունը յուրաքանչյուր տեսակի նվերի ստացման դեպքում դրա վերաբերյալ անմիջական ղեկավարին կամ վերադասին տեղեկացնելն է՝ առանց բացառությունների: Առաջարկը հանդիսանում է դրույթի բուն տրամաբանությունից շեղում:
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 62-րդ կետում գործածվող «հրապարակային» եզրույթի իմաստը:	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Առաջարկում ենք հավելվածի 63-րդ կետով սահմանված արգելքը տարածել նաև կուսակցությունների, քաղաքական կազմակերպության կամ շարժման հետ կապված մասնավոր կազմակերպությունների վրա	Չի ընդունվել	Կուսակցություններն իրավասու չեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես

		(օրինակ՝ կազմակերպության 100 % բաժնեմասը պատկանում է քաղաքական կուսակցությանը): Բացի այդ, առաջարկում ենք առանձին կետով համանման արգելք սահմանել նաև ցանակացած այլ մասնավոր կազմակերպության վերաբերյալ:		նաև լինելու առևտրային իրավաբանական անձի հիմնադիր կամ մասնակից: Հետևաբար, դրույթում սահմանված արգելքն այլ մասնավոր կազմակերպությունների վրա տարածելու վերաբերյալ առաջարկը տեղին չէ: Միաժամանակ, ցանկացած այլ մասնավոր կազմակերպությունների վերաբերյալ համանման արգելք սահմանելու անհրաժեշտություն առկա չէ, քանի որ նման դեպքերը նույնանում են շահերի բախման իրավիճակների հետ, որոնք կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Շահերի բախման վերաբերյալ ընդհանուր տիպային դրույթներ է պարունակում նաև սույն Նախագիծը:
		Առաջարկում ենք հավելվածի 63-րդ կետով արգելել քարոզը՝ անկախ քարոզի վայրից, քանի որ «իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		մարմնում կամ մարմնից դուրս» ձևակերպումը փաստացի արտահայտում է նույն իմաստը:		Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ «Հանրային ծառայության մասին» օրենքը սահմանում է, որ հանրային ծառայողներն իրավունք ունեն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգով մասնակցելու նախընտրական քարոզչությանը՝ պահպանելով քաղաքական զսպվածությունը: Դրույթը համապատասխանեցվել է «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումներին:
		Բացի այդ, առաջարկում ենք Նախագծի 62-65 կետերը վերանայել այն համատեքստում, որ նախատեսվող արգելքները չեն կարող գերազանցել հանրային ծառայողների քաղաքական չեզոքության ու զսպվածության առնչությամբ «Հանրային ծառայության մասին» օրենքով և Ընտրական օրենսգրքով նախատեսված սահմանափակումներն ու արգելքները:	Ընդունվել է	Նշված դրույթները համապատասխանեցվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումներին:

		Միևնույն ժամանակ, 62-րդ, 65-րդ կետերը հարկ է դիտարկել նաև խոսքի ազատության իրավունքի սահմանափակման համատեքստում (որպես չափանիշ կարող է դիտարկվել խնդրո առարկա հարցի վերաբերյալ ՄԻԵԴ համապատասխան պրակտիկան (ի թիվս այլնի տե՛ս Case of Karapetyan and Others v. Armenia (Application no. 59001/08), Case of Baka v. Hungary (Application no. 20261/12)):		
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 68-րդ կետով նախատեսված «մշակել» և «տնօրինել» հասկացությունների բովանդակությունը:	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Առաջարկում ենք հստակեցնել հավելվածի 71-րդ կետով սահմանված հետևյալ կարգավորման բովանդակությունը՝ « դրա հետ կապված հարցադրումները կատարել առանց ուղղակիորեն եզրակացությանը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հղում կատարելու», քանի որ հստակ չէ, թե ինչ հարցադրումների և ում ուղղված հարցադրումների մասին է խոսքը:	Չի ընդունվել	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ եզրակացությունները հրապարակման ենթակա չեն, դրանց վերաբերյալ հարցադրումները չպետք է իրականացվեն նշված եզրակացությանը հղում կատարելով, կամ ուղղակիորեն վերարտադրելով Հանձնաժողովի դիտարկումները: Հարցադրումներն անհրաժեշտ է

				իրականացնել հնարավորին ճկուն կերպով՝ առանց Հանձնաժողովի կարծիքն ուղղակիորեն շարադրելու:
		Առաջարկում ենք հավելվածի 72-րդ կետում «, գույքն» բառի փոխարեն օգտագործել «և այլ գույքը» բառերը, քանի որ գույք հասկացությունը արդեն իսկ ներառում է նյութատեխնիկական, ֆինանսական, այդ թվում՝ տեղեկատվական միջոցները:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Առաջարկում ենք հավելվածի 75-րդ կետում հստակեցնել «լուրջ գործառնական սխալ» հասկացությունը՝ միաժամանակ սահմանելով, թե «լուրջ» չափանիշը ինչպես է գնահատվելու:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթում «լուրջ» բառը փոխարինվել է «էական» բառով: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Առաջարկում ենք հավելվածի 80-րդ կետում «աջակցել» բառից առաջ լրացնել « իր իրավասության սահմաններում» բառերը, քանի որ հակառակ դեպքում անհիմն պարտավորություն է դրվում հանրային ծառայողի վրա:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Առաջարկում ենք հավելվածի 82-րդ և 83-րդ կետերով նախատեսված պարտավորությունները ձևակերպել որպես ընդհանուր պարտականություն՝ չսահմանափակվելով միայն սոցիալական ցանցերով.	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում Նախագծից հանվել է 83-րդ կետը:

		միայն սոցիալական ցանցերում հաղորդակցվելիս նման արգելք սահմանելը բավարար չէ և նման վարքագիծ դրսևորելը անթույլատրելի է հանրային ծառայողի համար ցանկացած դեպքում: Բացի այդ, հարկ է նշել, որ առկա է հակասություն Նախագծի 29-րդ և 82-րդ կետերի միջև: Մասնավորապես, 82-րդ կետն առհասարակ արգելում է աշխատավայր հանդիսացող հանրային ծառայության գործունեությունը, գործառույթները քննարկել, մեկնաբանել կամ քննադատել, իսկ նույն Նախագծի 29-րդ կետը պարտավորեցնում է աշխատավայր հանդիսացող հանրային ծառայության և այլ ոլորտներում առկա հանգամանքների կամ գործունեության վերաբերյալ քննադատական մտահոգություններ արտահայտելիս լինել հարգալից և զուսպ: Միևնույն ժամանակ, վերոնշյալ կետերը ևս հարկ է դիտարկել խոսքի ազատության իրավունքի սահմանափակման համատեքստում:		82-րդ կետը ոչ միայն չի հակասում Նախագծի 29-րդ կետին, այլ փոխլրացնում է դրան: Նորմը ուղղված չէ օրենքով սահմանված իրավունքները կամ քննադատություններ անելու իրավունքը սահմանափակելուն: Սույն կանոնով սահմանափակվում են այն գործողությունները, որոնք արատավորում են հանրային ծառայության հեղինակությունը:
		Առաջարկում ենք հավելվածի 87-րդ կետը վերանայել այն հաշվառմամբ, որ հանրային ծառայողը երաշխիք տրամադրելու իրավասություն չունի. քաղաքացիական օրենսգրքի 383-րդ հոդվածի համաձայն երաշխիք կարող է տրամադրել միայն բանկը, այլ վարկային հաստատությունը կամ ապահովագրական կազմակերպությունը: Միևնույն ժամանակ, եթե խոսքը երաշխավորության մասին է, ապա առաջարկում ենք վերանայել այլ հանրային ծառայողի (ոչ վերադասի)	Ընդունվել է մասամբ	Քննարկվող դրույթը վերաբերում է հանրային ծառայողի վարքագծին և ուղղված է աշխատանքային հարաբերություններում մասնավոր վեճերի և տարաձայնությունների հնարավոր նվազեցմանը: Առկա չէ որևէ արգելք՝ նման

		կապակցությամբ սահմանված արգելքը կամ լրացուցիչ հիմնավորել՝ նկատի ունենալով նաև այն, որ պայմանագրի ազատությունը համարվում է «սահմանադրական ազատություն» և բխում է Սահմանադրությամբ երաշխավորված մարդու այնպիսի հիմնարար իրավունքից, ինչպիսին տնտեսական գործունեության ազատությունն է: Ուստի, պայմանագրի ազատության սահմանափակում նախատեսելիս պետք է հաշվի առնել հիմնարար իրավունքների ու ազատությունների սահմանափակմանը ներկայացվող պահանջները (սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ (նպատակի լեգիտիմություն, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը), այդ իրավունքի սահմանափակման ծավալներն ու սահմանները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակին, այսինքն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար): Բացի այդ, պետք է նկատի ունենալ, որ Սահմանադրական դատարանը բազմիցս փաստել է, որ ***որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով***:		սահմանափակումը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանելու: Դրույթի խախտումն առաջացնում է հստակ հետևանք, մասնավորապես՝ կարգապահական պատասխանատվության առաջացում: Միաժամանակ, հարկ է նշել, որ «մեկ այլ ծառայող» եզրույթը ներառում է ցանկացած երկու հնարային ծառայողի, այդ թվում՝ վերադաս-ենթակա հարաբերությունների մեջ գտնվող:
		Առաջարկում ենք հավելվածի 91-րդ կետում «համար» բառը փոխարինել «դեպքում» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Առաջարկում ենք սահմանել, որ հավելվածի 92-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները վերաբերում են ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում կամ դրանց առնչությամբ տեղի ունեցած դեպքերին, այլապես ձևակերպումը անորոշ է, չափազանց լայն՝ դրանից բխող ռիսկերով: Նույն հիմնավորմամբ առաջարկում ենք հավելվածի 93-րդ կետում ևս հստակեցնել, որ խոսքը վերաբերում է ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում կատարված դեպքերին, իսկ «բացառել» բառից առաջ լրացնել «աշխատանքային հարաբերություններում» բառերը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Առաջարկում ենք համաձայնեցնել հավելվածի 49-րդ և 98-րդ կետերի կարգավորումները, քանի որ բոլոր գործընկերների նկատմամբ հավասար վերաբերմունք դրսևորելու և նորանշանակ հանրային ծառայողների նկատմամաբ յուրահատուկ մոտեցում ցուցաբերելու մասին կարգավորումները հակասում են միմյանց, եթե հաշվի առնենք, որ 98-րդ հոդվածով նախատեսված աջակցությունը լայն հասկացություն է և ներառում է նաև մասնագիտական աջակցությունը:	Չի ընդունվել	Նախագծի 49-րդ դրույթը վերաբերում է հանրային ծառայողի կողմից մյուսների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքին, իսկ 98-րդ դրույթը՝ աջակցությանը: Գործընկերների նկատմամբ վերաբերմունքը յուրաքանչյուր պարագայում պետք է զերծ լինի խտրականություններից և նույնատիպ լինի բոլորի հանդեպ: Սակայն, միաժամանակ, նորանշանակ գործընկերներն ունենում են

				առավել մեծ աջակցության կարիք գործնական հարաբերություններում ինտեգրվելիս, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր հանրային ծառայող պարտավոր է հնարավորինս աջակցել նորանշանակ գործընկերներին՝ խնդիրները հաղթահարելու և գործնական հարաբերությունները կարգավերոլու հարցերում: Որևէ խտրականություն, ինչպես նաև դրույթներում հակասություն առկա չէ:
		Առաջարկում ենք հանել հավելվածի 100-րդ կետով սահմանված կարգավորումը, քանի որ նման պարտավորություն հանրային ծառայողի վրա դրված չէ «Հանրային ծառայության մասին» օրենքով կամ աշխատանքային օրենսգրքով: Փոխարենը կարող է հղում կատարվել աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի կարգավորումներին՝ գործատուի գույքի պաշտպանությանն սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես գործատուին տեղեկացնելու պահանջի և գույքին բարեխղճորեն վերաբերվելու մասով:	Չի ընդունվել	Դրույթով սահմանված կարգավորումը բնույթով խրախուսելի է և ներառված է Խրախուսելի կանոնների շարքում: Կանոնը բխում է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներից:

		Առաջարկում ենք նաև սահմանել խրախուսական բաղադրիչի նպատակն ու դրանում ներառվող կանոններին հետևելու առավելությունները:	Չի ընդունվել	Խրախուսական բաղադրիչների նպատակը ներկայացված է Նախագծի 10-րդ կետում:
		Միևնույն ժամանակ, Նախագծում տեղ գտած մի շարք արտահայտություններ, հասկացություններ հստակեցման, պարզաբանման կարիք ունեն՝ բացառելու համար տարատեսակ մեկնաբանումը, կամայական կիրառումն ու չարաշահումները, դիցուք՝ Նախագծի 16-րդ կետում օգտագործվող «հանրային ծառայության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ», 83-րդ կետում կիրառված «բացահայտ փողոցային բառապաշար» արտահայտությունները և այլն:	Չի ընդունվել	Նշված եզրույթները օգտագործվում են տարբեր օրենքներում, օրինակ՝ «Հայաստանի Հանրապետությանատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածը սահմանում է,. «Ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում դատավորը պարտավոր է զերծ մնալ դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց»: Եզրույթներն օգտագործվում են նաև «Դատախազության մասին»

				օրենքում: Որոշ ձևակերպումներ քննարկումների արդյունքում արդեն իսկ խմբագրվել են, իսկ մյուսներն, անհրաժեշտության դեպքում կհստակեցվեն հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Առաջարկում ենք Նախագծի հիմնավորման մեջ ավելացնել «**Առաջարկվող կարգավորման բնույթը**» պարբերությունը, բացի այդ՝ «**Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**» պարբերության փոխարեն նախատեսել «**Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր**» վերտառությամբ պարբերությունը:	Ընդունվել է մասամբ	«Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ» կետը փոփոխությունների չի ենթարկվել, քանի որ առաջարկում նշված իրավական ակտն ինքնին հանդիսանում է ռազմավարական փաստաթուղթ և ենթակա է ներառման կետի բովանդակության, այլ ոչ վերնագրի մեջ:
9.	ՀՀ արտաքին գործերի նախարարություն ելից 1113/11710-22 առ 22.03.2022թ.	Նախագծի 1-ին կետում «Տիպային կանոնները» բառերը փոխարինել «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները (այսուհետ՝ Տիպային կանոններ)» բառերով:	Ընդունվել է մասամբ	«Տիպային կանոնները» բառերը փոխարինվել են «Հանրային ծառայողների վարքագծի տիպային

				կանոնները (այսուհետ՝ Կանոններ)» բառերով:
		Նախագծի 2-րդ կետում «Սույն փաստաթղթի» բառերը փոխարինել «Տիպային կանոնների սահմանման» բառերով:	Ընդունվել է մասամբ	«Սույն փաստաթղթի» բառերը փոխարինվել են «Կանոնների» բառով:
		Նախագծի 5-րդ կետում հստակեցնել «համապատասխան մարմիններ» բառերը՝ հաշվի առնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված «պետական մարմիններ» և «տեղական ինքնակառավարման մարմիններ» հասկացությունները:	Ընդունվել է մասամբ	«Համապատասխան մարմիններ» ձևակերպումը փոխարինվել է «հանրային իշխանության համապատասխան մարմիններ» եզրույթով: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Նախագծի 24-րդ և 25-րդ կետերում «պետական մարմնի» բառերից հետո լրացնել «կամ տեղական ինքնակառավարման մարմնի» բառերով՝ հաշվի առնելով, որ հանրային ծառայությունն ընդգրկում է նաև համայնքային ծառայությունը:	Ընդունվել է մասամբ	«Պետական մարմնի» բառերը փոխարինվել են «հանրային իշխանության համապատասխան մարմնի» բառերով:
		Նախագծի 51-րդ կետում նշված է, որ հանրային ծառայողը պարտավոր է իր անմիջական ղեկավարին, իսկ անմիջական ղեկավարի բացակայության դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		ներկայացնել հայտարարություն շահերի բախման հանգամանքների վերաբերյալ: Առաջարկում ենք հանրային ծառայողի անմիջական ղեկավարի բացակայության դեպքում հայտարարությունը ներկայացնել անմիջական ղեկավարի վերադասին կամ տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին:		
		Նախագծի 55-րդ, 74-րդ, 76-րդ կետերում «վերադասին կամ անմիջական ղեկավարին» բառերն առաջարկում ենք փոխարինել «անմիջական ղեկավարին կամ նրան փոխարինող անձին» բառերով:	Չի ընդունվել	Հանրային ծառայողի անմիջական ղեկավարի և վերադասի տարանջատումը բխում է «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումներից:
10.	ՀՀ առողջապահության նախարարություն ելից ԱԱ/05/6275-2022 առ 25.03.2022թ.	Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի՝ հանձնաժողովն ընդունում է հանրային ծառայողի վարքագծի **տիպային կանոնագիրքը:** Իր հերթին, «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հանրային ծառայողների՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի **տիպային կանոնները** սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Միևնույն ժամանակ, նախագծի վերնագրում և հետագա շարադրանքում կիրառվում է «տիպային կանոններ» ձևակերպումը: Հաշվի առնելով առկա տարբերությունը՝ առաջարկում եմ հստակեցնել՝ արդյո՞ք «տիպային	Չի ընդունվել	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում սահմանված «տիպային կանոնագիրք» և «Հանրային ծառայության մասին» օրենքում սահմանված «տիպային կանոններ» եզրույթները նույնական են և բովանդակային առումով համընկնում են: «Կոռուպցիայի կանխարգելման

		կանոնագիրք»-ը և «տիպային կանոններ»-ը բովանդակային առումով համընկնում են: Եթե այո, ապա որպես լիազորող նորմ բավարար է նշել «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասը: Իսկ եթե առկա են բովանդակային տարբերություններ, ապա տիպային կանոնագիրքը պետք է ընդունվի այլ իրավական ակտի շրջանակներում:		հանձնաժողովի մասին» օրենքի դրույթն առ այն, որ Հանձնաժողովն ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը, հանդիսանում է տեխնիկական վրիպակ. «կանոնագիրք» բառին պետք է փոխարիներ «կանոններ» բառը: Նախագծում որպես հիմք է ընդունվել «Հանրային ծառայության մասին» օրենքում առկա ձևակերպումը:
11.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ելից 01/04.1/1834-2022 առ 24.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
12.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ելից ՄՆ/ԳԽ/7903-2022 առ 25.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	

13.	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ելից 03/20.1/1949-2022 առ 24.03.2022թ.	Նախագծի հավելվածի 11-րդ կետի 6-րդ ենթակետում «քաղաքական չեզոքություն» բառերից հետո լրացնել «քաղաքական զսպվածություն» բառերը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
14.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ելից 5/11.4/4700-2022 առ 28.03.2022թ.	**7-րդ կետում** նախատեսված «այնպես էլ ծառայողական պարտականություններից դուրս» եզրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածին: Առաջարկվում է տարանջատել, թե հանրային ծառայողի կանոններից որոնք են կիրառվելու ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում, իսկ որոնք պարտականություններից դուրս, կամ կանոնների կիրառումը կամ տարածումը սահմանել հանրային ծառայություն իրականացնելու ընթացքում՝ ծառայողի համար սահմանված աշխատանքային ժամերին:		Սույն Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից հաստատված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի տիպային կանոնները, որոնք միջազգային մակարդակում վարքագծի կանոններ են սահմանում հանրային ծառայողների համար: Նշված կանոնները ևս բովանդակում են այնպիսի դրույթներ, որոնք ուղղված են հանրային ծառայողների վարքագծի կանոնակարգմանը՝ ծառայողական պարտականությունների կատարումից դուրս:

				Միաժամանակ, հարկ է նշել, որ Նախագծով սահմանված կանոններն առավելագույնս միտված են չխոչընդոտելու հանրային ծառայողների՝ որպես մասնավոր անձանց հիմնական իրավունքների իրացմանը:
		11-րդ կետի 5-րդ ենթակետի «Հանրային շահ՝ սահմանադրական արժեք, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել» նախադասությունը հակասում է Սահմանադրության 2-րդ գլխի 27-րդ հոդվածին:	Չի ընդունվել	Սահմանադրության 27-րդ հոդվածը վերաբերում է մարդու հիմնական իրավունք հանդիսացող անձնական ազատությանը, որն առնչություն չունի Նախագծի նշված կետի հետ: Միաժամանակ, «հանրային շահ» հասկացության սահմանումը տրվում է մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի 2019 թ. ապրիլի 30-ի ՍԴՈ-1458 որոշման մեջ և Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1621/05/14 որոշման մեջ: Սահմանադրական

				դատարանի վերոնշյալ որոշման մեջ նշվում է, որ «Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ առհասարակ հանրային շահն այն սահմանադրական արժեքն է, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել»: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ սահմանվում է, որ «հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար»: Հետևապես՝ տեղին չէ դիտարկումն այն մասին, որ հանրային շահը չի կարող հանդիսանալ

				որպես սահմանադրական արժեք: Ընտրված ձևակերպումները բխում են իրավական ակտերով արդեն իսկ սահմանված ձևակերպումներից և չեն հակասում դրանց իմաստին:
		12-րդ կետում՝ 10-րդ ենթակետի «Հիրապարակված պաշտոնական տեղեկատվություն» բառերը փոխարինել «**Հրապարակման ոչ ենթակա պաշտոնական տեղեկատվություն**» բառերով՝ 8-րդ էջում նշված տվյալ բաժնի վերնագրին համապատասխան: Անհրաժեշտ է հստակեցնել:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		12-րդ կետի 11-րդ ենթակետում «ռեսուրսների» բառից հետո լրացնել «նպատակային» բառով:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		14-րդ կետը սկսել «Աշխատանքի վայրում» բառերով: Անհասկանալի է ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում խաչի կամ Աստվածաշնչի առկայությունը հանդիսանում է արդյո՞ք այլ խորհրդանիշների մեծարում և ցուցադրում:	Ընդունվել է մասամբ	Առաջարկի առաջին մասի հիման վրա կատարվել են համապատասխան փոփոխություններ: Առաջարկի երկրորդ մասի վերաբերյալ հարկ է նշել, որ մեջբերված խորհրդանիշերը և տարբերանշանները՝ Աստվածաշունչը և խաչը, չեն համարվում դրույթի

				իմաստով ընդունելի խորհրդանիշեր կամ տարբերանշաններ, այսինքն՝ չեն հանդիսանում Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշեր, սահմանված չեն օրենսդրությամբ:
		15-րդ կետը՝ «բոլոր հանրային ծառայողների, քաղաքացիների և հասարակության բոլոր անդամների արժանապատվությունը» անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածին՝ հանրային ծառայողի, քաղաքացու և հասարակության բոլոր անդամների տարանջատումը չի բխում ՀՀ Սահմանադրությունից և հակասում է նրան:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		16-րդ կետը՝ «ոչ հարիր» վարքագիծ եզրույթը շատ լայն է և սուբյեկտիվ գնահատողական եզրույթ, ինչը չի կոնկրետացվում և յուրաքանչյուր դեպքում կարող է գործիք հանդիսանալ հանրային ծառայողի նկատմամբ ներգործելու համար, չունի կոնկրետ սահմանում և ինչ պետք է հասկանալ «ոչ հարիր» եզրույթ ասելով:	Չի ընդունվել	Սույն դրույթում օգտագործված «ոչ հարիր» եզրույթը կհստակեցվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		19-րդ կետը՝ ունի խմբագրման կարիք ունի, առաջարկվում է լրացնել «անկողմնակալ դիտորդի մոտ» եզրույթը, քանի որ մի շարք դեպքերում հանրային ծառայողի կողմից չնայած օրենքին համապատասխան	Չի ընդունվել	Դրույթում առկա ձևակերպումներն օբյեկտիվորեն ենթադրում են անկողմանակալ

		գործելու պարագայում կարող է հասարակության անդամներից ոմանց մոտ սուբյեկտիվ վերաբերմունքից ելնելով ստեղծել անօրինականության խրախուսման կամ դրա նկատմամբ հանդուրժողականության կամ օրինավոր վարքագծի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի տպավորություն:		դիտորդների կողմից ընկալմանը, հետևաբար կարիք չկա նորմն ավելորդ ծանրաբեռնելու: Միաժամանակ, մի շարք իրավական ակտերում ևս, այդ թվում՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում, նույնատիպ կարգավորումներում ավելորդ անգամ չի օգտագործվում «անկողմնակալ դիտորդի մոտ» արտահայտությունը (տե՛ս «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը):
		22-րդ կետը՝ «հատկապես խոցելի խմբերի կարիքների նկատմամբ» ենթակա է խմբագրման, քանի որ դա կդիտվի որպես խտրականության կամ հովանավորչության դրսևորում սոցիալական որոշակի խմբերի կամ շերտերի նկատմամբ, ինչն ուղղակիորեն հակասում է օրինականության սկզբունքին և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 7-րդ հոդվածին:	Չի ընդունվել	Դրույթի ձևակերպումը չի վկայում խտրականության կամ հովանավորչության հնարավորության առկայության մասին, քանի որ այն վերաբերելի է հասարակության բոլոր անդամներին: Հասարակության խոցելի խումբը շեշտված է

				առանձնահատուկ կերպով, քանի որ յուրաքանչյուր պարագայում նման խմբին պատկանող անձինք ունեն որոշ չափով տարբերակված վերաբերմունքի կարիք: Դա ամենևին չի վերաբերում խտրականության կամ հովանավորչության հնարավոր դրսևորմանը:
		27-րդ կետը՝ «իսկ դրանց ընդունումից հետո՝ կատարել դրանց պահանջները:» սահմանափակում է հանրային ծառայողի իրեն վերաբերելի ընդունված պահանջների նկատմամբ առարկություններ և բողոքներ ներկայացնելու, այդ թվում դատական կարգով բողոքարկելու իրավունքը և հակասում է ՀՀ սահմանադրության 61-րդ հոդվածին:	Չի ընդունվել	Սույն դրույթի տրամաբանությունն ընդունման ենթակա քաղաքականությունների, ուղեցույցերի, որոշումների և կազմակերպաիրավական բնույթի այլ ակտերի վերաբերյալ առողջ քննադատական մտքի գեներացումն է՝ մի կողմից, և արդեն ընդունված քաղաքականությունների, ուղեցույցերի և որոշումների կատարման ծառայողական կարգապահությունն է՝ մյուս կողմից:

		28-րդ կետը՝ առաջարկվում է «պարտավոր է» փոխարինել «կարող է» եզրույթով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Միաժամանակ, քննարկումների արդյունքում դրույթը տեղափոխվել է:
		30-րդ կետը՝ լրացնել «բացառությամբ 66-ից 71-րդ կետերով նախատեսված դեպքերից:» բառերով:	Ընդունվել է մասամբ	Դրույթի ձևակերպման մեջ ավելացվել է «բացառությամբ օրենսդրությամբ և տվյալ մարմնի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի» արտահայտությունը:
		32-րդ կետը՝ «կեղծ տեղեկատվություն» եզրույթը քրեորեն պատժելի արարք է, ինչն ուղղակիորեն սահմանված է մասնավորապես նոր քրեական օրենսգրքի 445, 457 հոդվածներով:	Ընդունվել է	«Կեղծ» բառը փոխարինվել է «իրականությանը չհամապատասխանող» բառերով:
		34-րդ կետը՝ «պարտավոր է ապահովել հանրության ներառականությունը որոշումների կայացման հարցում» ունի խմբագրման կարիք, քանի որ հանրության նեռականության ապահովման պահանջը սահմանվում է օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով, իսկ ներառելը որպես վարքագծի կանոններում նպատակահարմար չէ. քանի որ մի շարք որոշումներ ընդունելիս հանրության ներառականության	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է. «ներառականություն» եզրույթը փոխարինվել է «մասնակցություն» եզրույթով:

		ապահովման պահանջ օրենսդրորեն սահմանված չէ, մասնավորապես անհատական ակտեր ընդունելիս:		
		2-րդ գլխի 37-րդ կետում ուղղել «միջողներն» և 50-րդ կետում «փորխկապակցված» բառերը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		38-րդ կետը՝ «չբարձրացնել ձայնը» հարաբերական եզրույթ է, ունի հստակեցման կարիք և անհրաժեշտ է սահմանել չափորոշիչներ կամ փոփոխել «չգոռալ», «չբղավել» բառերով:	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		41-րդ կետը՝ ֆիզիկական ուժի գործադրման կարգն ու պայմանները սահմանված են օրենսդրությամբ, մասնավորապես նոր քրեական օրենսգրքի 32-40 հոդվածներով, ուստի առաջարկվում է խմբագրել և լրացնել՝ «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		46-րդ, 47-րդ, 83-րդ կետերը ՝ քրեորեն պատժելի արարք է և արդեն իսկ սահմանված է քրեական օրենսգրքով, ուստի տարանջատելը և առանձին ընդգրկելը նպատակահարմար չէ, ստացվում է, որ հակառակ դեպքում այլ քրեորեն պատժելի արարքներ հանրային ծառայողը կարող է կատարել:	Ընդունվել է մասամբ	Քննարկվող դրույթներում առկա գործողությունների իրավական հետևանքները և դրանց կատարման համար պատասխանատվության տեսակների վերաբերյալ հարցերը կարգավորվում են քրեաիրավական ոլորտում, սակայն դա ամենևին չի բացառում ոտնձգություններ իրականացնելու արգելքը միաժամանակ որպես

				վարքագծի տիպային կանոն սահմանելը, որը հետագայում հիմք կհանդիսանա հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման ակտեր (կանոնագրքեր) ընդունելու և դրանցում իրավական հետևանքներ սահմանելու: Առհասարակ, հանրային ծառայողի նկատմամբ քրեաիրավական պատասխանատվությունը չի բացառում միևնույն արարքի համար նրա նկատմամբ իրավական պատասխանատվության այլ միջոցների, այդ թվում՝ կարգապատահական պատասխանատվության կիրառումը: Միաժամանակ, հարկ է նշել, որ քննարկումների

				արդյունքում 83-րդ կետը հանվել է Նախագծից:
		60-րդ կետը՝ առաջարկվում է լրացնել «ծառայողական պարտականությունների հետ կապված» բառերով:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		61-րդ կետը՝ տարբերակում դրված չէ ծառայողական պարտականությունների հետ կապված թե այլ անձնական, մասնավոր կյանքի հետ կապված նվերների ընդունումը, ինչը որևէ կերպ առնչություն չունի ծառայողական պարտականությունների կատարման հետ:	Չի ընդունվել	Կանոնը վերաբերում է հանրային ծառայողի վարքագծին՝ նրա ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում: «Նվեր» եզրույթը սահմանված է ինչպես Նախագծի հիմնական հասկացություններում, այնպես էլ «Հանրային ծառայության մասին» օրենքում, և վերաբերում է հանրային ծառայողի՝ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակահատվածին:
		63-րդ կետը առաջարկվում է սկսել «Ծառայողական պարտականությունները կատարելիս» բառերով: Հանել «կամ մարմնից դուրս» բառերը:	Չի ընդունվել	Առաջարկն ինքնին հակասում է հանրային ծառայողի քաղաքական զսպվածության սկզբունքին,

				որը վերաբերում է հանրային ծառայողի վարքագծին՝ ինչպես ծառայողական պարտականությունները կատարելիս, այնպես էլ այդ պարտականություններից դուրս:
		64-րդ կետը սկսել «Մարմնի ներսում» բառերով:	Չի ընդունվել	Առաջարկն ինքնին հակասում է հանրային ծառայողի քաղաքական զսպվածության սկզբունքին, որը վերաբերում է հանրային ծառայողի վարքագծին՝ ինչպես ծառայողական պարտականությունները կատարելիս, այնպես էլ այդ պարտականություններից դուրս:
		65-րդ կետը՝ հակասում է «Հանրային ծառայության մասին» օրենքի 27.1 հոդվածին և ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածին, քանի որ հանրային ծառայողի քաղաքական գործունեությունը արդեն իսկ կարգավորված է օրենքով:	Չի ընդունվել	Հանրային ծառայողն ունի քաղաքական գործունեությամբ զբաղվելուն առնչվող որոշակի իրավունքներ, որոնք, սակայն, սահմանափակված են

				«Հանրային ծառայության մասին» օրենքով: Մասնավորապես, վերոնշյալ օրենքը սահմանում է հանրային ծառայողի՝ քաղաքական զսպվածության և քաղաքական չեզոքության պարտականությունները: Անկախ այն հանգամանքից, որ հանրային ծառայողին թույլատրվում է մասնակցել նախընտրական քարոզարշավներին, վերոնշյալ սահմանափակումներն, այնուամենայնիվ, գործում են: Նույնիսկ քաղաքական գործունեություն իրականացնելիս հանրային ծառայողը պարտավոր է հետևել օրենսդրությամբ և սույն Նախագծով սահմանված որոշակի սահմանափակումներին:
		84-րդ կետում «լուսանկարներ» բառից հետո ավելացնել « և տեսագրություններ» բառերը, քանի որ ըստ նման	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		կարգավորման հանրային ծառայողը կարող է տեսագրություն հրապարակել, իսկ լուսանկար ոչ:		
		86-րդ կետը՝ 35-րդ կետի կրկնությունն է:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. 35-րդ կետը հանվել է Նախագծից:
		87-րդ կետը՝ հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածին, 21-րդ հոդվածի «5» և «8» կետերին, 25-րդ հոդվածին, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածին: Մասնավորապես, կարող է «մեկ այլ հանրային ծառայողի» կարգավիճակում լինել հանրային ծառայողի ընտանիքի անդամները (հայր, մայր, քույր, եղբայր, ամուսին, զավակներ):	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը վերաբերում է հանրային ծառայողի վարքագծին և ուղղված է աշխատանքային հարաբերություններում մասնավոր վեճերի և տարաձայնությունների հնարավոր նվազեցմանը: Առկա չէ որևէ արգելք՝ նման սահմանափակումը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանելու: Դրույթի խախտումն առաջացնում է հստակ հետևանք, մասնավորապես՝ կարգապահական պատասխանատվության առաջացում: Միաժամանակ, հարկ է նշել,

				որ «մեկ այլ ծառայող» եզրույթը ներառում է ցանկացած երկու հնարային ծառայողի, այդ թվում՝ վերադաս-ենթակա հարաբերությունների մեջ գտնվող:
		104-րդ կետը տեղափոխել 2-րդ գլուխ՝ «ԿԱՆՈՆՆԵՐ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ» ենթագլուխ:	Չի ընդունվել	Դրույթում քննարկվող կանոնը վերաբերում է ոչ միայն ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, այլև՝ բոլոր հանրային ծառայողներին: Հետևապես, դրույթը տեղափոխելը տեղին չէ:
		105-րդ կետից առաջարկվում է հանել «հատկապես օրենսդրությամբ նախատեսված հարկերի, տուրքերի և կումունալ վճարումների գծով պարտավորությունները,» բառերը:	Չի ընդունվել	Դրույթի նպատակը օրինապահ և օրինակելի վարքագծի ձևավորումն է հանրային ծառայողի մոտ՝ անկախ այն հանգամանքից, թե նշված պարտավորությունների չկատարման համար ինչպիսի իրավական հետևանքներ են նախատեսված:

		106-րդ կետը առաջարկվում է հանել, քանի որ այն կարգավորվում է այլ իրավական ակտով:	Չի ընդունվել	Հանրային ծառայողի վարքագծի կանոնների՝ միասնական եղանակով ամրագրումը չի բացառում այլ իրավական ակտերում նմանատիպ բովանդակությամբ դրույթների առկայությունը: Բացի դրանից, Նախագծում առկա քննարկվող դրույթն առավելապես էթիկական նշանակություն ունի:
15.	ՀՀ պաշտպանության նախարարություն ելից ՊՆ/510/1522-2022 առ 30.03.2022թ.	նախագծով հաստատվող հավելվածի՝ 1) «Բարեկրթություն» գլխի 44-րդ կետի «աշխատանքի վայրում ծխել» բառերից հետո լրացնել «, բացառությամբ «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերի» բառերը և կետադրական նշանը՝ հաշվի առնելով նշված օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կարգավորումները:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է. «աշխատանքի վայրում ծխել» արտահայտությունից հետո ավելացվել են «բացառությամբ ծխելու համար սահմանված տարածքների» բառերը:
		«Շահերի կառավարում» գլխի 51-րդ կետը համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին:	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը լիովին համապատասխանում է «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասին:

16.	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ելից 01/16/6502-2022 առ 25.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
17.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ելից ԳՍ/7337-2022 առ 25.03.2022թ.	Նախագծի հավելվածի 12-րդ կետի 12)-րդ ենթակետը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «12) Կոռուպցիոն բնույթի դեպքերի և այլ խախտումների վերաբերյալ հաղորդման ներկայացում,»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 25-րդ կետը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ. «25) Հանրային ծառայողը պարտավոր է պետական մարմնի հեղինակությունը պահպանելու հարցում լինել սթափ և հետևողական, բացահայտել և հնարավորինս վերացնել իր և այլ անձանց կողմից թույլ տված սխալները և բացթողումները»:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		27-րդ կետի «առարկություններ» բառը փոխարինել «առաջարկություններ» բառով:	Ընդունվել է մասամբ	Քննարկվող դրույթը խմբագրվել է. «առարկություններ» բառից հետո ավելացվել են «և առաջարկություններ» բառերը:
		Նախագծի հավելվածի 32-րդ կետը առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		«32. Հանրային ծառայողը պարտավոր է բացառել չճշտված, կեղծ և ապակողմնորոշող տեղեկատվության տրամադրումը և այլ հանրային ծառայողներից չպահանջել ու չտարածել նման տեղեկատվություն»:		
		35-րդ և 54-րդ կետերի «պաշտոնական» բառերը փոխարինել «պաշտոնական» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		36-րդ կետի «միջողներն» բառը փոխարինել «միջոցներն» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		41-րդ կետի «ապառնալիք» բառը փոխարինել «սպառնալիք» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		43-րդ կետում «թմրամիջոցներ» բառից հետո լրացնել «ոգելից խմիչքներ» բառերը:	Չի ընդունվել	Հանրային ծառայողն աշխատավայրից դուրս՝ որպես քաղաքացի հանդես գալիս, կարող է օգտագործել ոգելից խմիչքներ, ի տարբերություն թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի, որոնց վտանգավորություն ու ազդեցությունն առավել մեծ է: Միաժամանակ, հարկ է նշել, որ աշխատավայրում արգելվում է ինչպես թմրամիջոցների և

				հոգեներգործուն նյութերի, այնպես էլ ոգելից խմիչքների ազդեցության տակ գտնվելը:
		47-րդ կետից հանել «ծննդյան» բառը:	Չի ընդունվել	Դրույթում «ծննդյան» բառը փոխարինվել է «ծնունդի» բառով՝ համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրության 29-րդ հոդվածին:
		50-րդ կետում ուղղել «փորխկապակցված» բառը՝ գրելով՝ «փոխկապակցված»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 57-րդ կետով սահմանվում է, որ Հանրային ծառայողը պարտավոր է խուսափել Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված թույլատրվող նվերներ ընդունելուց, եթե կարող է ընկալվել, որ դրանք ի զորու են ազդել իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա՝ հաշվի առնելով իրավիճակի բնույթը և հարաբերությունները նվիրատուի հետ: Նույն օրենքով սահմանված թույլատրելի համարվող ցանկացած նվերի կամ հյուրասիրության տեսակը և արժեքը պետք է լինի սոցիալապես ընդունելի սահմաններում և իրավիճակի հետ համադրելի:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		Սակայն չի հստակեցվում, թե որ չափն է համարվում սոցիալապես ընդունելի: Առաջարկում ենք սահմանել օրենքով սահմանված թույլատրելի համարվող ցանկացած նվերի կամ հյուրասիրության տեսակի և արժեքի սոցիալապես ընդունելի սահմանները:		
		69-րդ կետի «տեսագրել» բառը փոխարինել «չտեսագրել» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		87-րդ կետով սահմանված պահանջը հստակեցման կարիք ունի՝ ծառայողական պարտավորությունների հետ կապ չունեցող անձնական հարաբերությունները սահմանափակելու մասով, դրա վերահսկման մեխանիզմների սահմանման անհրաժեշտության առումով:	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը վերաբերում է հանրային ծառայողի վարքագծին և ուղղված է աշխատանքային հարաբերություններում մասնավոր վեճերի և տարաձայնությունների հնարավոր նվազեցմանը: Առկա չէ որևէ արգելք՝ նման սահմանափակումը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանելու: Դրույթում ամրագրված վարքագծի տիպային կանոնը հետագայում հիմք կհանդիսանա հանրային իշխանության համապատասխան

				մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման ակտեր (կանոնագրքեր) ընդունելու և դրանցում իրավական հետևանքներ սահմանելու: Միաժամանակ, հարկ է նշել, որ «մեկ այլ ծառայող» եզրույթը ներառում է ցանկացած երկու հնարային ծառայողի, այդ թվում՝ վերադաս-ենթակա հարաբերությունների մեջ գտնվող:
		96-րդ կետի «հետևիլ» և «փորձիլ» բառերը փոխարինել համապատասխանաբար «հետևի» և «փորձի» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		101-րդ կետը նպատակահարմար կլինի ընդգրկել «Կանոններ ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց համար» բաժնում:	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը վերաբերում է բոլոր հանրային ծառայողներին, այլ ոչ միայն ղեկավար պաշտոն զբաղեցնող անձնաց:
		102-րդ կետը խմբագրման կարիք ունի անհասկանալի է «վարքագիծ ցուցաբերելուց խուսափելու համար» բառակապակցությունը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		110-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «110. Վարքագծի սույն կանոնների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը»:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		Սահմանել վարքագծի կանոններ նաև սահմանափակումների իմաստով և սահմանել հանրային ծառայողի իրավունքները՝ նյութատեխնիկական և ֆինանսական ապահովվածության վերաբերյալ, զրպարտությունից նրա պաշտպանվածությունը ապահովելու, նրա նկատմամբ խախտումների հայտնաբերման դեպքում օբյեկտիվությունը պահպանելու առումով:	Չի ընդունվել	Հանրային ծառայողների իրավունքների վերաբերյալ կարգավորումները սահմանված են «Հանրային ծառայության մասին» օրենքով և այլ օրենսդրական ակտերով և վերաբերելի չեն Նախագծի տրամաբանությանը:
18.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ելից 09/4554-2022 առ 25.03.2022թ.	Նախագծի 95-րդ կետում առաջարկում ենք հստակեցնել «պարտադիր գործուն քայլեր ձեռնարկել» ձևակերպումը, քանի որ նշված խմբագրումից պարզ չէ, թե հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը իր ենթակայությամբ աշխատող հանրային ծառայողների կողմից կոռուպցիոն բնույթի դեպքերի և այլ խախտումների վերաբերյալ հաղորդումներ ստանալու դեպքում որ մարմնին պետք է դիմի և ինչ ժամկետներում:	Չի ընդունվել	Հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու կարգը և ժամկետները հստակ սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
		Նախագծի 109-րդ կետի 2-րդ նախադասությունը լրացուցիչ քննարկման և խմբագրման կարիք ունի, քանի որ համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի՝	Չի ընդունվել	Պատասխանատվության առավել խիստ միջոցները ենթադրում են կարգապահական պատասխանատվությունից

		«յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ»:		բնույթով տարբերվող միջոցներ՝ վարչական, քրեական: Միաժամանակ, հարկ է նշել, որ քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
19.	ՀՀ ֆինանսների նախարարություն ելից 01/16/4936-2022 առ 28.03.2022թ.	Հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ Հանրային ծառայողների՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները **սահմանում է** Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ հայտնում ենք, որ անհրաժեշտ է Նախագծի վերնագրում «հաստատելու» բառը փոխարինել «սահմանելու» բառով, համապատասխան փոփոխություններ կատարելով նաև բովանդակության մեջ:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հաշվի առնելով, որ նորմատիվ բնույթի իրավական ակտերը ենթակա են պաշտոնական հրապարակման՝ անհրաժեշտ է Նախագծի 2-րդ կետում «հրապարակմանը» բառից առաջ լրացնել «պաշտոնական» բառը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 44-րդ կետում «աշխատանքի վայրում ծխել» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «բացառությամբ սահմանված վայրերի» բառերը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Հավելվածի մի շարք կետեր (օրինակ՝ 46-րդ, 47-րդ կետեր) նախատեսում են այնպիսի սահմանափակումներ, որոնք արդեն իսկ նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով) և կրում են համապարտադիր բնույթ:	Չի ընդունվել	Քննարկվող դրույթներում առկա գործողությունների իրավական հետևանքները և դրանց կատարման համար պատասխանատվության տեսակների վերաբերյալ հարցերը կարգավորվում են քրեաիրավական ոլորտում, սակայն դա ամենևին չի բացառում ոտնձգություններ իրականացնելու արգելքը միաժամանակ որպես վարքագծի տիպային կանոն սահմանելը, որը հետագայում հիմք կհանդիսանա հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման ակտեր (կանոնագրքեր) ընդունելու և դրանցում իրավական հետևանքներ սահմանելու: Առհասարակ, հանրային ծառայողի նկատմամբ քրեաիրավական

				պատասխանատվությունը չի բացառում միևնույն արարքի համար նրա նկատմամբ իրավական պատասխանատվության այլ միջոցների, այդ թվում՝ կարգապատահական պատասխանատվության կիրառումը:
20.	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին ելից 01/005/1153-2022 առ 24.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
21.	ՀՀ կրթության տեսչական մարմին ելից 01/02.1/224-2022 առ 24.03.2022թ.	2-րդ կետի 4-րդ ենթակետում «բարեվարքության» բառը փոխարինել «բարեվարքությունը» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		8-րդ կետում «բաղադրիչ» բառը փոխարինել «բաղադրիչներ» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		11-րդ կետի 2-րդ ենթակետը տեղափոխել 1-ին ենթակետ:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		28-րդ կետում «պարտավոր է» բառը փոխարինել «կարող է» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		63-րդ կետում «մարմնից դուրս» բառերից հետո լրացնել «պարտականությունները կատարելիս» բառերը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		83-րդ կետում «բացահայտ փողոցային» բառերը փոխարինել «անպարկեշտ» բառով:	Չի ընդունվել	Քննարկվումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		II գլխում առկա «ՎԱՐՔԱԳԻԾԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁ» անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԻ ՎԱՐՔԱԳԻԾԸ»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		III գլխի անվանման մեջ «ԽՐԱԽՈՒՍԵԼԻ» բառը տեղափեխել «ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ» բառից հետո: Առկա են նաև վրիպակներ:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		10-րդ կետից հանել «~~չհամապատասխանելու~~» բառը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		50-րդ կետում գրված է «փորխկապակցված», պետք է լինի «փոխկապակցված»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		96-րդ կետում գրված է «հետևիլ», «փորձիլ», պետք է լինի «հետևի», «փորձի»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
22.	ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	

	ելից ՔՏՄ/06.1.4/3999-22 առ 23.03.2022թ.			
23.	ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին ելից 01/06.1/3214-2022 առ 25.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
24.	ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին ելից 01/13/380-2022 առ 25.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
25.	ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին ելից 01/5149-2022 առ 29.03.2022թ.	Առաջարկվում է հստակեցնել Նախագծի 7-րդ կետի «ծառայողական պարտականություններից դուրս» արտահայտությունը՝ սահմանելով այդ դեպքերի կամ բացառությունների շրջանակը, այլապես պարզ չի ծառայողական պարտականություններից դուրս որ դեպքերում կարող են սահմանվել հանրային ծառայողի վարքագծի կանոնները:	Չի ընդունվել	«Ծառայողական պարտականություններից դուրս» ձևակերպումը որոշակի է և հստակ արտահայտում է իրավիճակը: Առանձնահատուկ բացառություններն առկայության պարագայում սահմանման են ենթակա հատուկ դրույթներում: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի

				տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Տարընթերցումից ու տարընկալումից, խուսափելու անհրաժեշտությունից ելնելով՝ Նախագծի 11-րդ կետի 2-րդ ենթակետում «...և դրանից դուրս» արտահայտությունը ևս հստակեցնել՝ մանրամասնելով պաշտոնական պարտականություններից դուրս հանրային ծառայողի բարեվարք գործելակերպը:	Չի ընդունվել	«Պաշտոնական պարտականություններից դուրս» ձևակերպումը որոշակի է և վերաբերում է հանրային ծառայողի՝ որպես մասնավոր անձի վարքագծին: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Տարընթերցումից ու տարընկալումից, կոռուպցիոն և այլ ռիսկերից խուսափելու անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկվում է Նախագծի 51-րդ կետում «անմիջական ղեկավարին, իսկ անմիջական ղեկավարի բացակայության դեպքում» բառերը փոխարինել «անմիջական ղեկավարին կամ վերադասին, իսկ անիջական ղեկավարի կամ վերադասի բացակայության դեպքում» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
26.	ՀՀ հաշվեքննիչ պալատ ելից ՀՊԵ-140 առ 24.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
27.	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	

	ելից 01-302 առ 25.03.2022թ.			
28.	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ելից ԳԲ/35.2-Ղ4-1/925-2022 առ 28.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
29.	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով ելից 01/11/132-2022 առ 28.03.2022թ.	Նախագծի 1-ին կետով հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 55-րդ կետով սահմանվում է. «Հանրային ծառայողը պարտավոր է իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, մասնավոր հատվածում հետագա աշխատանքի անցնելու առաջարկը ընդունելու դեպքում, անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր իրազեկել:»: Հասկանալի չէ, թե ինչ հետևանքների կհանգեցնի սույն դրույթով նախատեսված կանոնը հանրային ծառայողի կողմից չպահպանելը, քանի որ մասնավոր հատվածում հետագա աշխատանքի անցնելու առաջարկն ընդունելու դեպքում հանրային ծառայողն աշխատանքի կանցնի մասնավոր հատվածում, այլևս չի հանդիսանա հանրային ծառայող, և այս դեպքում նրա նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառել հնարավոր չի լինի: Գտնում ենք, որ Հավելվածի 55-րդ կետով նշված կանոնի սահմանման դեպքում	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է: Ինչ վերաբերում է հանրային ծառայողների կողմից վարքագծի կանոնները խախտելու իրավական հետևանքներին, ապա Նախագիծը լրացվել է նոր դրույթով, ըստ որի՝ կանոնների խախտումն ինքնին չի առաջացնում իրավական հետևանքներ: Իրավական հետևանքները ենթական են սահմանման Կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության համապատասխան

		անհրաժեշտ կլինի սահմանել նաև այդ կանոնը չպահպանելու հետևանքները:		մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման ակտերում (կանոնագրքերում):
		Հավելվածի 63-րդ կետով սահմանվում է. «Հանրային ծառայողը պարտավոր է չդրսևորել հովանավորչություն որևէ կուսակցության, քաղաքական կազմակերպության կամ շարժման նկատմամբ, որը, ի թիվս այլի, ներառում է հանրային իշխանության մարմինների տարածքում և տեղեկատվական նյութերում կուսակցությունների լոգոներ կամ թեկնածուների տարբերանշաններ ցուցադրելը, քարոզարշավի նյութեր պատրաստելը, քաղաքական միջոցառումներ կազմակերպելը և վարչական, կազմակերպչական կամ այլ առումով դրանց նպաստելը, ինչպես նաև իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնում **կամ մարմնից դուրս որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ քարոզ իրականացնելը:»:** Նշված դրույթով հանրային ծառայողներն առհասարակ զրկվում են որևէ պայմաններում որևէ թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ դեմ քարոզչություն (այդ թվում՝ նախընտրական) իրականացնելուց այն դեպքում, երբ ընտրական գործընթացների կապակցությամբ հիմնական կանոնակարգումները սահմանող «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. Նախագծի դրույթները համապատասխանեցվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի տրամաբանությանը:

		սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) նախատեսում է հանրային ծառայողների կողմից քարոզչության իրականացման հնարավորություն՝ Ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումների պահպանմամբ: Այսպես, Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանվում են նախընտրական քարոզչության սահմանափակումները, որի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «…Արգելվում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ՝ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝ 1) հանրային ծառայության մեջ գտնվողներին… **իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.»:** Նախագծի նշված կանոնակարգման պայմաններում այն հակասության մեջ կգտնվի Ընտրական օրենսգրքի հիշատակված և մի շարք այլ կանոնակարգումների հետ:		

		Հավելվածի 108-րդ կետով սահմանվում է. «Հանրային ծառայողի կողմից վարքագծի կանոնների խախտում թույլ տալը հաշվի է առնվում նրա **ատեստավորման**, ծառայողական առաջխաղացման, պաշտոնի նշանակման ժամանակ:»: Հաշվի առնելով, որ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ատեստավորման ինստիտուտը վերացվել է, առաջարկում ենք Հավելվածի 108-րդ կետից «ատեստավորման,» բառը և կետադրական նշանը հանել:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
30.	ՀՀ կենտրոնական բանկ եից 06-04/0243-22 առ 25.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
31.	ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով ելից 697-2022 առ 30.03.2022թ.	«Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով սահմանվում է. *«1. **Պետական պաշտոն զբաղեցնող անձանց** (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները սահմանվում են **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:***	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		1. *Պատգամավորի, դատավորի, դատախազի, քննիչի վարքագծի կանոնները սահմանվում են այլ իրավական ակտերով:* 4. ***Հանրային ծառայողների՝*** *սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի տիպային կանոնները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:*»: Միաժամանակ, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ *հանձնաժողովը ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը:* Նախագծի 1-ին կետի համաձայն՝ *տիպային կանոնները (…) հանդիսանում են* ***հանրային ծառայության բարեվարքության համակարգի տարր***, իսկ Նախագծի 4-րդ կետով սահմանված է, որ *տիպային կանոններն ընկած են* ***հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների*** *վարքագծի կանոնների միասնական համակարգի հիմքում:* Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի կարգավորումներից բացառել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վերաբերյալ կարգավորումները:		
		Նախագծի 2-րդ կետով սահմանվում է փաստաթղթի նպատակը, այն է՝ ապահովել հանրային ծառայողի բարեվարք վարքագիծը, նպաստել ծառայողի կողմից իր պարտականությունները կատարելիս էթիկայի բացառիկ վարքագիծ դրսևորելուն (…):	Չի ընդունվել	Նախագծի 2-րդ կետը սահմանում է հանրային ծառայողի վարքագծի կանոնների՝ առավել հստակ նպատակները: Այն

		Կարծում ենք՝ Նախագծի նպատակն է իրավասու մարմինների համար տիպային, այսինքն՝ նմուշային փաստաթուղթ ստեղծելը, որն էլ իր հերթին հիմք կհանդիսանա Օրենքով սահմանված նպատակներին հասնելու համար:		հանգամանքը, որ տիպային կանոններն ընկած են հանրային ծառայողների վարքագծի կանոնների միասնական համակարգի հիմքում և որ դրանք հիմք են հանդիսանում հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման և սահմանման համար, ամրագրված է Նախագծի այլ դրույթներում:
		Նախագծի 3-րդ կետով սահմանվում են վարքագծի սկզբունքները: Հաշվի առնելով այն, որ դրանք, ըստ էության, կրկնում են Օրենքի 22-րդ հոդվածով սահմանված նույն վարքագծի սկզբունքները՝ կարծում ենք, որ Նախագծով նույն կարգավորումը նախատեսելը չունի նորմատիվ բեռ:	Չի ընդունվել	Օրենքի որոշակի դրույթների ներառումը Նախագծում միտված է ապահովելու իրավական ակտի որոշակիությունը:

		2. Նախագծի 8-րդ կետի համաձայն՝ *տիպային կանոններն ունեն պարտադիր և խրախուսելի բաղադրիչ:* Այս կապակցությամբ ուշագրավ է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *հանրային ծառայողի հիմնական պարտականություններն են (...) 3) հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին հետևելը (...):* Նշվածից բխում է, որ հանրային ծառայության վարքագծի կանոններին հետևելը ուղղակի պարտականություն է, որից բացառություններ սահմանելը հակասում է Օրենքին: Նման պայմաններում խնդրահարույց է թվում «խրախուսելի» կանոնների նախատեսումը: Ասվածն առավել ակնհայտ է այն պարագայում, որ Նախագծի «Հանրային ծառայողների վարքագծի խրախուսելի կանոններ» վերտառությամբ 3-րդ բաժնում որպես խրախուսելի կանոններ նշված են, ըստ էության, պարտադիր բնույթ կրող կանոններ:	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի խրախուսելի կանոնները նպատակ են հետապնդում օրինակելի վարքագծի այնպիսի սկզբունքային նորմեր սահմանելու, որոնց հետևելը կբխի հանրային ծառայողի ընդհանուր բարեվարքությունից և բարեխղճությունից: Խրախուսելի կանոններին հետևելը կվկայի հանրային ծառայողի՝ վարքագծի սկզբունքներին առավելագույնս հետևելու հանգամանքի մասին: Խրախուսելի կանոններն առավել ընդհանրական և հայեցողական բնույթ են կրում՝ ի տարբերություն վարքագծի պարտադիր կանոնների:
		Նախագծի 11-րդ կետով սահմանված հիմնական հասկացությունները մեծամասամբ կրկնում են արդեն իսկ առկա օրենսդրական կարգավորումներին:	Չի ընդունվել	Օրենքի որոշակի դրույթների ներառումը Նախագծում միտված է

		Հետևաբար, առաջարկում ենք Նախագիծը չծանրաբեռնելու նպատակով խմբագրել նշված կետը՝ նախատեսելով միայն այն հասկացությունները, որոնք Օրենքով կարգավորված չեն:		ապահովելու իրավական ակտի որոշակիությունը:
		Նախագծի 12-րդ կետով սահմանվում են հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոնների բաղադրիչները, որոնք Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով բխում են հանրային ծառայության վարքագծի սկզբունքներից: Նշվածի արդյունքում կանոնների բաղադրիչները մասնակի համընկնում են վարքագծի սկզբունքների հետ: Արդյունքում՝ կանոնների թվարկման մոտեցումը հստակ չէ: Այդ կապակցությամբ առաջարկում ենք, կանոնների սահմանման համակարգվածությունն ապահովելու նպատակով, դրանք տարանջատել՝ դասակարգելով ըստ վարքագծի սկզբունքերի, կամ սահմանել վարքագծի ընդհանուր կանոններ և վարքագծի կանոններ ի պաշտոնե գործելիս՝ որպես օրինակ ընդունելով դատավորների վարքագծի կանոնների դասակարգումը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի 30-րդ կետի համաձայն՝ *հանրային ծառայողը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս՝ ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն:* Նման ձևակերպման պայմաններում պարզ չէ՝ ինչպես է մեկնաբանվելու հանրային ծառայողի	Չի ընդունվել	Հանրային ծառայողի՝ իր լիազորություններն իրականացնելիս հաշվետվողականությունը պետք է դրսևորվի հանրության առջև, ինչը,

		«հաշվետվողականությունը» և ում առջև: Նախագծի «Հաղորդակցությունը հանրային լրատվամիջոցներով և սոցիալական ցանցերով» վերտառությամբ մասում առաջարկում ենք հստակեցնել, որ պաշտոնական հարցազրույց տալու իրավունք ունի իրավասու հանրային ծառայողը կամ վերադասի կողմից այդպիսի հանձնարություն կամ համաձայնություն ունեցողը:		կարծում ենք, դրույթի տրամաբանությունից ակնհայտ է: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Նախագծի 84-րդ կետի համաձայն՝ *հանրային ծառայողը պարտավոր է խուսափել սոցիալական ցանցերում անձնական այնպիսի* ***լուսանկարներ*** *հրապարակելուց, որոնք կարող են հանրային ծառայությունը վարկաբեկող լուրերի տարածման պատճառ հանդիսանալ:* Առաջարկում ենք քննարկման առարկա դարձնել նշված կարգավորումը ոչ միայն լուսանկարների, այլ սոցիալական ցանցերում ակտիվ գործունեության այլ դրսևորումների, ինչպես օրինակ՝ հրապարակային գրառումների, հրապարակումների վրա տարածելու հարցը:	Ընդունվել է մասամբ	Նման կարգավորումներ առկա են «Հաղորդակցությունը հանրային լրատվամիջոցներով և սոցիալական ցանցերով» գլխում: Միաժամանակ, հարկ է նշել, որ քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է և «լուսանկարներ» բառից հետո ավելացվել են «և տեսագրություններ» բառերը:
		Նախագծի 108-րդ կետի համաձայն՝ *հանրային ծառայողի կողմից վարքագծի կանոնների խախտում թույլ տալը հաշվի է առնվում նրա ատեստավորման,*	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		ծառայողական առաջխաղացման, պաշտոնի նշանակման ժամանակ: Օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ *վարքագծի կանոնների խախտումը* ***կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն (…)****:* Վերոնշյալի հաշվառմամբ՝ առաջարկում ենք 108-րդ կետը խմբագրել այնպես, որ ատեստավորման, ծառայողական առաջխաղացման, պաշտոնի նշանակման ժամանակ հաշվի առնվի ոչ թե վարքագծի կանոնների խախտում, այլ՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելը: Այս կապակցությամբ հարկ է նաև նշել, որ նշված հարաբերությունները Օրենքի կարգավորման առարկա են:		
		Նախագծի 110-րդ կետի համաձայն՝ *սույն վարքագծի կանոնների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը:* Նորմի բովանդակությունը հաշվի առնելով՝ առաջարկում ենք այն տեղափոխել Նախագծի ընդհանուր դրույթներ բաժին:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Առաջարկում ենք քննարկման առարկա դարձնել հանրային ծառայողների հագուստի, գործընկերների, ղեկավարների և ենթակաների հետ հաղորդակցման, հանձնարարությունների կատարման և ներքին կարգապահությանն առնչվող այլ հարաբերությունները կարգավորելու հարցը:	Չի ընդունվել	Առանձին մարմիններում՝ հանրային ծառայողների ներքին կարգապահությանն առնչվող հարցեր կարգավորվում են ներքին կարգապահական

				ակտերով, որոնք առավելապես համապատասխանեցված են լինում տվյալ մարմնի կարիքներին և պահանջներին: Սույն Նախագծի նպատակն ընդհանրական և տիպային կանոնների սահմանումն է բոլոր հանրային ծառայողների համար:
		Նախագծի 107-րդ կետի համաձայն՝ *հանրային ծառայողները անձնական պատասխանատվություն են կրում վարքագծի կանոնների պահպանման համար:* Կարծում ենք՝ հստակ չէ «անձնական պատասխանատվություն» իրավական հասկացության մեկնաբանությունը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից: Սակայն, միաժամանակ, հարկ ենք համարում պարզաբանում ներկայացնել առաջարկի վերաբերյալ: Անձնական պատասխանատվությունը ենթադրում է, որ հանրային ծառայողը կարող է վարքագծի կանոնները խախտելու համար ենթարկվել կարգապահական պատասխանատվության

				միայն իր կողմից կատարված արարքի համար: Տվյալ հասկացությունը և դրա մեկնաբանությունը հանրաճանաչ են և կիրառվում են իրավունքի տարբեր ոլորտներում:
		Քանի որ վարքագծի տիպային կանոնների խախտումը կարող է կարգապահական վարույթի հարուցման հիմք հանդիսանալ առաջարկում ենք լրացուցիչ ուշադրություն դարձնել դրույթների հստակությանը, կանխատեսելիությանը և մատչելիությանը: Որոշ դրույթներ այս տեսանկյունից լրացուցիչ քննարկման կարիք ունեն, օրինակ՝ Նախագծի 14-րդ կետի համաձայն՝ *հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ ՀՀ պետական խորհրդանիշներից և պետական մարմինների կանոնադրությամբ հաստատված տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանշի* ***մեծարումից****, ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում դրանց ցուցադրումից:* Նշված կետում հստակ չէ «մեծարում» բառի բեռը:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթում առկա «մեծարում» եզրույթը հանվել է:
		Նախագծում առկա են որոշակի կրկնաբանություններ, օրինակ՝ Նախագծի 45-րդ կետում միաժամանակ օգտագործվում են անաչառություն և անկողմնակալություն, իսկ վերնագրում	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		օբյեկտիվություն արտահայտությունները, որոնք իրենց իմաստով նույնանում են:		
32.	Միգրացիոն ծառայություն ելից 01/03/943-2022 առ 21.03.2022թ.	2-րդ կետի 1-ին ենթակետում «բարեվարք վարքագիծը» բառերը փոխարինել «բարեվարքությունը» բառով:	Չի ընդունվել	«Բարեվարքություն» և «բարեվարք վարքագիծ» եզրույթներն իմաստային առումով տարբերվում են, այդ իսկ պատճառով Նախագծում գործածված են որպես իրարից անկախ և տարանջատված հասկացություններ: Ավելին, «բարեվարքություն» բառը սահմանված է որպես հիմնական տերմին:
		35-րդ կետում «պաշտոնական դիրքը» բառերը՝ «պաշտոնեական դիրքը» բառերով:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		11-րդ կետում տալ «Էթիկա» հասկացության սահմանումը՝ հաշվի առնելով դրա գործածությունը փաստաթղթում (2-րդ կետի 2-րդ ենթակետ, 6-րդ կետ, 11-րդ կետի 4-րդ ենթակետ): Ըստ այդմ, վերնագրում «վարքագծի տիպային կանոններ» բառերը փոխարինել «վարքագծի և էթիկայի տիպային կանոններ» բառերով:	Չի ընդունվել	Վարքագծի տիպային կանոնների վերնագիրը սահմանված է «Հանրային ծառայության մասին» օրենքով: Միաժամանակ, «էթիկա» բառը Նախագծում հաճախ չի կիրառվում և չի հանդիսանում հիմնական հասկացություն, հետևաբար

				չունի Նախագծում առանձնահատուկ մեկնաբանման կարիք: Այդուհանդերձ, որպեսզի կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Նշված կետում օգտագործվող հիմնական հասկացությունները վերադասավորել հետևյալ հաջորդականությամբ՝ «Հանրային ծառայության պաշտոն», «Հանրային շահ», «Բարեվարքություն», «Էթիկա» (լրացում), «Վարքագծի կանոններ», «Էթիկայի կանոններ» (լրացում), «Նվեր», «Հյուրասիրություն», «Սեռական ոտնձգություն»:	Չի ընդունվել	Ներկայացված առաջարկի տրամաբանությունը հիմնավոր չէ:
		12-րդ կետում հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոնները ձևավորող բաղադրիչները համալրել նոր՝ «պրոֆեսիոնալիզմ և խնդիրներ լուծելու կարողություն, վստահելիություն (հուսալիություն)», «ազնվություն», «հեղինակություն, բարի համբավ և բարոյական հատկանիշներ»:	Չի ընդունվել	Ներկայացված առաջարկը հիմնավոր չէ: Միաժամանակ, հարկ է նշել, որ առաջարկում թվարկված կանոններն, ըստ էության, ներառվում են Նախագծում ամրագրված վարքագծի տիպային կանոնների տրամաբանության շրջանակներում:

		«II. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆՈՆՆԵՐ» բաժնի «ԲԱՐԵԽՂՃՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻՆ» գլուխը համալրել «Հանրային ծառայողը պարտավոր է ձգտել բարձրացնել մարմնի հեղինակությունը իրեն տրված հանձնարարությունների պատշաճ կատարման ճանապարհով, այդ թվում՝ պետական այլ մարմինների և կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակեպությունների ներկայացուցիչների հետ շփվելիս և որպես ներկայացուցիչ հանդես գալիս» նոր կետով: Բացի այդ, ցանկալի է մարմինների համար ամրագրել նորանշանակ հանրային ծառայողներին տիպային կանոնների վերաբերյալ իրազեկելու հետ կապված պարտավորություն:	Չի ընդունվել	Առաջարկում ներառված դրույթն, ըստ էության, ներառվում է Նախագծի «Հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոններ» բաժնի «Բարեխղճություն և հավատարմություն հանրային շահի նկատմամբ» գլխի 22-րդ կետի շրջանակներում և արտահայտում է նույնաբնույթ իմաստ:
33.	ՀՀ կադաստրի կոմիտե ելից ՍԹ/2916-2022 առ 25.03.2022թ.	«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասով և «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն է սահմանված վարքագծի կանոնների (տիպային կանոնների հիման վրա ընդունված) խախտման համար: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի «Տիպային կանոնների դրույթները խախտելու համար նախատեսված պատասխանատվությունը» վերնագրով IV գլուխը և սահմանել, որ կարգապահական	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. Նախագծից հանվել է 4-րդ գլուխը և ավելացվել է նոր դրույթ, ըստ որի՝ իրավական հետևանքները ենթակա են սահմանման Կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության համապատասխան

		պատասխանատվության հիմքը տիպային կանոնների հիման վրա ընդունված վարքագծի կանոնների խախտումն է:		մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման կանոններում (կանոնագրքերում):
34.	Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե ելից 01/610/379-2022 առ 22.03.2022թ. առ 15.05.2022թ. N 01/497-2022	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
35.	ՀՀ քաղաքաշինության կոմիտե ելից 01/19/2905-2022 առ 28.03.2022թ.	Նախագծի նախաբանում հղում է կատարված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետին, որի համաձայն Հանձնաժողովն **ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքն,** ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասին, որի համաձայն հանրային ծառայողների՝ օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի **տիպային կանոնները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը**: Այս առումով, Նախագծի վերնագիրը և դրույթներն օրենքին համապատասխանեցման կարիք ունեն:	Չի ընդունվել	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի դրույթն առ այն, որ Հանձնաժողովն ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը, հանդիսանում է տեխնիկական վրիպակ. «կանոնագիրք» բառին պետք է փոխարիներ «կանոններ» բառը: Այդ իսկ

				պատճառով որպես հիմք են ընդունվել «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթը և ձևակերպումները:
		Հաշվի առնելով, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով «Նվեր» հասկացությունն արդեն իսկ սահմանված է, առաջարկվում է Նախագծի հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետում նոր սահմանման փոխարեն հղում կատարել նշված օրենքին: Նույնը վերաբերում է նաև «հանրային ծառայության պաշտոն» հասկացությանը:	Չի ընդունվել	Օրենքի որոշակի դրույթների ներառումը Նախագծում միտված է ապահովելու իրավական ակտի որոշակիությունը:
		Նախագծի հավելվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված են վարքագծի կանոնները, որոնք կարգավորում են հանրային ծառայողի բարեվարք գործելակերպը պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում **և դրանից դուրս:** Այս առումով հստակեցման կարիք ունի «դրանից դուրս» եզրույթը, քանի որ պարզ չէ, խոսքը ինչին է վերաբերում՝ ծառայությունն ավարտելուն հաջորդող որոշ ժամանակահատված ևս, թե օրինակ անձնական կյանքին:	Չի ընդունվել	Պաշտոնեական պարտականությունների կատարումից դուրս» ձևակերպումը վերաբերում է հանրային ծառայողի՝ որպես մասնավոր անձի վարքագծին: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		«Սեռական ոտնձգություն» սահմանումը հստակեցման կարիք ունի, քանի որ թեև արժանապատվության նվաստացումը, վախեցնելը, թշնամությունը,	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ.

		ստորացումը ևս անընդունելի վարքագիծ են, բայց ոչ միշտ են դիտարկվում որպես սեռական ոտնձգություն:		«սեռական ոտնձգություն» եզրույթի սահմանումը խմբագրվել է և համապատասխանեցվել Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի 40-րդ հոդվածի կարգավորումներին:
		Նախագծի հավելվածի 33-րդ կետում առաջարկվում է «Հանրային ծառայողը պարտավոր է» բառերից հետո լրացնել «Օրենքով նախատեսված դեպքում» բառերով, հակառակ պարագայում տվյալ կետի դրույթը տարածելի կլինի նաև հայտարարագրման պարտականություն չունեցող ծառայողների համար:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 33-րդ կետը լրամշակման կարիք ունի, քանի որ ստացվում է, որ հանրային ծառայողը կարող է քննադատել հանրային իշխանության մեկ այլ մարմնի գործունեությունը, կամ այդ մարմնի գործունեության հետ կապված տարածել ոչ պաշտոնական լուրեր:	Չի ընդունվել	33-րդ կետը ներկայացված առաջարկի հետ առնչություն չունի, ինչպես նաև չի բխում այլ դրույթների բովանդակությունից:
		Նախագծի 60-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է չընդունել որևէ նվեր դրամական միջոցի, կամ դրամական միջոցի	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		փոխարկվող այլ գործիքի տեսքով (օրինակ՝ նվեր քարտեր, վիրտուալ տարադրամներ, բանկային մուրհակներ, ճամփորդական չեկեր և այլն): Ձևակերպումից հստակ չէ, թե նվեր քարտը, որում առկա դրամական միջոցի չափը չի գերազանցում թույլատրելի 60.000 դրամը, դրամական միջոցի փոխարկելու անհնարինության դեպքում կարող է համարվել վարքագծի կանոնների խախտում, թե ոչ:		
		Նախագծի 61-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է բոլոր դեպքերում և անկախ նվերի, այդ թվում՝ հյուրասիրության և ոչ նյութական առավելության արժեքից, անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել ստացված նվերի, այդ թվում՝ հյուրասիրության և ոչ նյութական առավելության մասին: Մինչդեռ Նախագծով նախատեսված չէ, թե ինչ պետք է նախաձեռնի անմիջական ղեկավարը: Միաժամանակ առաջարկում ենք քննարկել «անմիջական ղեկավար» բառը «բարեվարքության հարցերով կազմակերպիչ» բառով փոխարինելու հարցը և հստակեցնել «պաշտոնական հաղորդակցման միջոցներ» եզրույթը:	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների կարգավորման շրջանակից դուրս է այն գործողությունների սահմանումը, որոնք ուղղված են լինելու կանոնների իրագործման ապահովմանը և դրանց խախտման դեպքում իրավական հետևանքների առաջացմանը: Նման կարգավորումներն ամրագրման են ենթակա «Հանրային ծառայության մասին» օրենքում, հանրային իշխանության առանձին մարմինների ներքին ակտերում և հանրային իշխանության

				համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման կանոններում (կանոնագրքերում):: «Անմիջական ղեկավար» բառերը հնարավոր չէ «բարեվարքության հարցերով կազմակերպիչ» բառերով փոխարինել, քանի որ հանրային ծառայողների նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնում են նրանց անմիջական ղեկավարները և վերադասները. բարեվարքության հարցերով կազմակերպիչներն ունեն այլ գործառույթներ:
		Նախագծի 82-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է սոցիալական ցանցերում չմեկնաբանել, չքննադատել, չքննարկել իր աշխատավայր հանդիսացող հանրային իշխանության մարմնի գործառույթները, որոշումները, գործունեությանն առնչվող խնդիրները և իրավական հարցերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ չտարածել	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:

		ոչ պաշտոնական լուրեր: Հաշվի առնելով, որ «մեկնաբանել» եզրույթն իրենից ենթադրում է նաև պարզաբանումներ, խմբագրական մեկնություններ կամ լուսաբանումներ տալը, առաջարկում ենք Նախագծի 82-րդ կետում հստակեցնել կամ փոխարինել «մեկնաբանել» բառը:		
		Նախագծի 84-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է խուսափել սոցիալական ցանցերում անձնական այնպիսի լուսանկարներ հրապարակելուց, որոնք կարող են հանրային ծառայությունը վարկաբեկող լուրերի տարածման պատճառ հանդիսանալ: Իրավական որոշակիությունից ելնելով՝ անհրաժեշտ է հստակեցնել «հանրային ծառայությունը վարկաբեկող» հասկացությունը: Օրինակ՝ հանգստի կամ ժամանցի վայրերից արված անձնական լուսանկարները կարող են ենթադրել վարքագծի կանոնների խախտում, թե ոչ:	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
36.	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ելից 11/320 առ 28.03.2022թ.	Հավելվածի 1-ին կետում «Տիպային կանոնները» բառերը փոխարինել «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները (այսուհետ՝ Տիպային կանոններ)» բառերով:	Ընդունվել է ի գիտություն	Քննարկվումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		11-րդ կետի 6-րդ ենթակետում «չեզոքություն» բառից հետո ավելացնել «, քաղաքական զսպվածություն» բառերով՝ համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		12-րդ կետի 10-րդ ենթակետում «Չհրապարակված» բառը փոխարինել «Հրապարակման ոչ ենթակա կամ չհրապարակված» բառերով՝ համապատասխան փոփոխություն կատարելով նաև նշված բաղադրիչի վերնագրում՝ հաշվի առնելով դրանով նախատեսված կանոնների բնույթը:	Չի ընդունվել	Քննարկվումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		13-րդ կետում «պետական խորհրդանիշները» բառերը փոխարինել «խորհրդանիշները» բառով՝ համաձայն Սահմանադրության 21-րդ հոդվածի՝ համապատասխան փոփոխություն կատարելով նաև 14-րդ կետում, իսկ «կանոնադրությամբ հաստատված» բառերը փոխարինել «օրենսդրությամբ նախատեսված» բառերով:	Ընդունվել է մասամբ	«Կանոնադրությամբ հաստատված» բառերը փոխարինվել են «օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված» բառերով: Ինչ վերաբերում է «պետական խորհրդանիշները» «խորհրդանիշները» բառով փոխարինելուն, ապա առաջարկը չի ընդունվել, քանի որ առանձին իրավական ակտերով Հայաստանի Հանրապետության խորհրդանիշները համարվում են «պետական խորհրդանիշներ» (տե՛ս, օրինակ, «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքը):

		22-րդ կետում «, համայնքի և համայնքի» բառերը փոխարինել «և դրա» բառերով:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում «համայնքի և համայնքի» բառերը հանվել են Նախագծից:
		29-րդ կետում «ծառայության» բառը փոխարինել «իշխանության մարմնում» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		51-րդ կետում «անմիջական ղեկավարին, իսկ անմիջական ղեկավարի» բառերը փոխարինել «վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերջիններիս» բառերով՝ համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի:	Ընդունվել է մասնակի	Առաջարկն ընդունվել է, սակայն քննարկումների արդյունքում դրույթը ենթարկվել է խմբագրման:
		Նույն կետում «Նախքան» բառից հետո ավելացնել «վերադասի կամ» բառերով, իսկ «գրավոր հանձնարարությունը» բառերը փոխարինել «առաջարկություն» բառով՝ համաձայն «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասի:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		61-րդ կետում «անմիջական« բառից առաջ ավելացնել «վերադասին կամ» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

37.	ՀՀ ոստիկանություն ելից 1/21/25159-22 առ 28.03.2022թ.	«Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները հաստատելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մի շարք դրույթներ, մասնավորապես, դրանում օգտագործվող հիմնական հասկացությունները և մի շարք այլ կետերում ամրագրված նորմեր հակասում են ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշակիության սկզբունքին: Դրանք կրում են ընդհանրական բնույթ և չունեն հանրային ծառայողների համար սահմանված հստակ իրավունքների և պարտականությունների շրջանակ, ինչով պայմանավորված՝ տարընկալումների տեղիք են տալիս: Նախագծում կիրառվող անորոշ ձևակերպումներն իրավակիրառողի համար կարող են խնդիրներ առաջացնել ծառայողների կողմից նշված կանոններով սահմանված պահանջները չպահպանելու դեպքերի քննության ժամանակ՝ ինչպես իրավակիրառող մարմնի համար՝ հանրային ծառայողի կողմից նշված վարքագծի կանոնների խախտումների փաստի ապացուցման տեսանկյունից, այնպես էլ հանրային ծառայողի իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Օրինակ՝ Նախագծի Հավելվածի 16-րդ կետով՝ նախատեսված է հանրային ծառայողի պարտավորություն սահմանող դրույթ, համաձայն որի՝ «Հանրային ծառայողը պարտավոր է ցանկացած պայմաններում և իրավիճակներում իր	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների կարգավորման շրջանակից դուրս է այն գործողությունների սահմանումը, որոնք ուղղված են լինելու կանոնների իրագործման ապահովմանը և դրանց խախտման դեպքում իրավական հետևանքների առաջացմանը: Նման կարագավորումներն ամրագրման են ենթակա «Հանրային ծառայության մասին» օրենքում, հանրային իշխանության առանձին մարմինների ներքին ակտերում և հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման կանոններում (կանոնագրքերում):

		գործունեությամբ, գործնական, մասնագիտական և բարոյական հատկանիշներով զերծ մնալ հանրային ծառայության հեղինակությանը ոչ հարիր կամ այն վարկաբեկող, հանրային ծառայության նկատմամբ հանրության վստահությունը նվազեցնող կամ հանրային ծառայողի անկողմնակալության, անաչառության և անկախության նկատմամբ կասկած հարուցող վարքագիծ դրսևորելուց»: Սույն դրույթում անհասկանալի է, թե ինչպես պետք է ապացուցվի «կասկած հարուցող վարքագիծ դրսևորելու» պահանջը չկատարելու փաստը:		Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Նախագծի 41-րդ կետում «չներկայացնել» բառից հետո առաջարկվում է լրացնել «, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի» բառերով:	Ընդունվել է	Դրույթում կատարվել է համապատասխան լրացում՝ շարադասության փոփոխությամբ:
		Տարընկալումների տեղիք է տալիս և իրավակիրառ պրակտիկայում ապացուցման տեսանկյունից խնդրահարույց է նաև Նախագծի 50-րդ կետը, համաձայն որի՝ «հանրային ծառայողը պարտավոր է խուսափել այնպիսի գործողությունից կամ որոշման կայացումից, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես ուղղակի կամ անուղղակի անձնական շահով կամ Օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի շահով առաջնորդվել»: Հասկանալի չէ, թե իրավակիրառ պրակտիկայում ինչ ծավալի բովանդակություն է ներառում «որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես ուղղակի	Չի ընդունվել	Կանոնի ձևակերպումը համապատասխանում է «Հանրային ծառայության մասին» օրենքում շահերի բախմանը վերաբերելի ձևակերպումներին:

		կամ անուղղակի անձնական շահով կամ Օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի շահով առաջնորդվելու» ձևակերպումը:		
		Մեկ այլ օրինակ՝ նախագծում օգտագործվող հիմնական հասկացություններում անորոշ են «հանրային շահ», «նվեր», «հյուրասիրություն» հասկացությունները: Այսպես, «նվեր» եզրույթը Նախագծում բնորոշվում է որպես «ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոն չզբաղեցնող անձի: Այն ընդգրկում է նաև ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված գույքը կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետևանքով անձը ստանում է օգուտ կամ առավելություն:», իսկ «Հյուրասիրություն» եզրույթը սահմանվում է որպես «նվերի տեսակ, որը առաջարկվել, տրվել կամ ստացվել է պաշտոնական հարաբերություններ սկսելու, դրանք ամրապնդելու կամ զարգացնելու նպատակով: Այն ընդգրկում է, բայց չի սահմանափակվում ընդունելության, ժամանցային, սոցիալական կամ սպորտային միջոցառումների հրավերներով և առաջարկներով, և տրվում է հյուրասիրողի ներկայությամբ:»:	Չի ընդունվել	«Նվեր» հասկացությունը սահմանված է «Հանրային ծառայության մասին» օրենքով, և Նախագծում պահպանվել է նույն ձևակերպումը: Քննարկումների արդյունքում «հյուրասիրություն» եզրույթը հանվել է Նախագծից: Այդուհանդերձ, առաջարկի վերաբերյալ հարկ ենք համարում որոշակի դիատրկումներ կատարել: Հանրային ծառայողներին տրվող «հյուրասիրության» հասկացության վերաբերյալ առկա են մի շարք միջազգային ստանդարտներ: Մասնավորապես՝ Նախագծի համար հիմք է հանդիսացել Թրանսփարենսի ինթերնեշնլ

				կազմակերպության կողմից մշակված Համաշխարհային հակակոռուպցիոն ուղեցույցում առկա ձևակերպումը: «Հանրային շահ» հասկացության սահմանումը տրվում է մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի 2019 թ. ապրիլի 30-ի ՍԴՈ-1458 որոշման մեջ և Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1621/05/14 որոշման մեջ: Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ նշվում է, որ «Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ առհասարակ հանրային շահն այն սահմանադրական արժեքն է, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել»: Միաժամանակ, Վճռաբեկ

				դատարանի վերոնշյալ որոշմամբ սահմանվում է, որ «հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար»:
		Այնուհետև, Նախագծի «Նվերների ընդունման արգելք» նախատեսող 56-րդ դրույթում ամրագրված է այն, որ «հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ Օրենքի իմաստով ոչ թույլատրելի նվեր, այդ թվում՝ հյուրասիրությունը ընդունելուց կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն տալուց, եթե նման նվերը, այդ թվում՝ հյուրասիրությունը, ողջամտորեն չէր տրամադրվի հանրային ծառայող չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի»: Նշված բովանդակությամբ հանրային ծառայողի պարտավորություն սահմանելը խնդրահարույց է իրակիրառ պրակտիկայում ապացուցման տեսանկյունից, մասնավորապես՝ անհասկանալի է, թե ինչպես, ինչ եղանակով է որոշվելու կամ ապացուցվելու նվերի կամ հյուրասիրության արգելքի խախտման փաստը հաստատելու համար էական նշանակություն	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում «հյուրասիրություն» եզրույթը հանվել է Նախագծից: Այդուհանդերձ, առաջարկի վերաբերյալ հարկ ենք համարում որոշակի դիատրկումներ կատարել:

		ունեցող նախապայմանը՝ «եթե նման նվերը, այդ թվում՝ հյուրասիրությունը, ողջամտորեն չէր տրամադրվի հանրային ծառայող չհանդիսացող հանրային պաշտոն զբաղեցնող անձի»:		
		Խնդրահարույց է նաև Նախագծի 70-րդ կետը, որով նախատեսվում է հանրային ծառայողի գիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքի սահմանափակում, մասնավորապես ամրագրված է հետևյալը. «Հանրային ծառայողը պարտավոր է իր աշխատանքային և պաշտոնեական պարտականություններից չբխող հետազոտություններում կամ աշխատություններում չօգտագործել այնպիսի տեղեկատվություն, որը, թեև ենթակա է հրապարակման, սակայն դեռևս չի հրապարակվել տվյալ պետական մարմնի կողմից:»: Սույն դրույթը, կարծում ենք, հակասում է ոչ միայն «Հանրային ծառայության մասին օրենքի» 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բացառությանը՝ հանրային ծառայողի կողմից գիտական, կրթական և ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու իրավունքին, այլև «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետին, համաձայն որի գիտնականը և գիտական աշխատողն իրավունք ունեն ազատորեն օգտագործել, տարածել և փոխանակել գիտական տեղեկատվություն, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված պետական,	Չի ընդունվել	Դրույթն ամենևին միտված չէ հանրային ծառայողի կողմից գիտական, կրթական և ստեղծագործական գործունեությամբ զբաղվելու իրավունքի սահմանափակմանը: «Հրապարակման ենթակա, սակայն պետական մարմնի կողմից դեռևս չհրապարակված» են հանդիսանում այնպիսի տեղեկությունները, որոնք օբյեկտիվ իրականության մեջ՝ հանրային ծառայությունից դուրս, հայտնի լինել չէին կարող հանրային ծառայողին և վերջինս դրանց ծանոթացել է պետական մարմնում իր ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում:

		ծառայողական, առևտրային և այլ գաղտնիք համարվող տեղեկատվության: Բացի այդ, անձը, ով զբաղվում է գիտական գործունեությամբ և միաժամանակ հանդիսանում է հանրային ծառայող, գիտական, ստեղծագործական նպատակով համապատասխան տեղեկատվությունը կարող է ձեռքբերած լինել ոչ միայն ի պաշտոնե, այլև՝ օրենքով սահմանված այլ եղանակով:		Միաժամանակ, տվյալ տեղեկությունները պետք է դեռևս հրապարակված չլինեն տվյալ պետական մարմնի կողմից: Դրույթի սահմանման նպատակը սահմանափակելն է հանրային ծառայողին՝ ծառայողական պարտականությունների ընթացքում հայտնի դարձած ոչ գաղտնի տեղեկությունների հրապարակային օգտագործումը, քանի դեռ դրանք պաշտոնապես չեն հրապարակվել պետական մարմնի կողմից:
		Նախագծի 91-րդ կետով նախատեսված է հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի պարտավորություն՝ «վարքագծի Պարտադիր կանոնների խախտումների համար անհապաղ իրականացնել օրենքով նախատեսված համապատասխան գործողություններ»: «Օրենքով նախատեսված համապատասխան գործողություններ» ձևակերպումը նույնպես վերացական է, հստակեցված չեն, թե օրենքով ինչ	Չի ընդունվել	Նախագիծը լրացվել է նոր դրույթով, ըստ որի՝ կանոնների խախտումն ինքնին չի առաջացնում իրավական հետևանքներ: Իրավական հետևանքները ենթական են սահմանման Կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության

		տեսակի և ում հետ կապված գործողություններ են սահմանված և ինչ միջոցառումներ պետք է ձեռնարկի հանրային ծառայողի ղեկավար պաշտոն զբաղեցնողը՝ վարքագծի պարտադիր կանոնների խախտման համար: Այս առումով անհասկանալի է նաև, թե ում կողմից կատարված խախտումների համար պետք է հանրային ծառայողի ղեկավար պաշտոն զբաղեցնողն իրականացնի համապատասխան գործողություններ (իր անմիջական ենթակայի, թե ցանկացած այլ հանրային ծառայողի): Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները շարադրել հստակ, ամրագրել կոնկրետ պահանջ, որի չպահպանելը կամ չհետևելը կարող է դիտվել որպես վարքագծի կանոնի խախտում, հակառակ դեպքում՝ նշված ձևակերպումները կարող են դառնալ տարընկալումների և իրավունքների չարաշահումների պատճառ:		համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման ակտերում (կանոնագրքերում):
38.	ՀՀ վիճակագրական կոմիտե ելից Ե/398-22 առ 25.03.2022թ.	12-րդ կետի 2-րդ ենթակետում «Օրինականություն» բառից հետո առաջարկվում է ավելացնել «և պարտաճանաչություն,» բառերը:	Չի ընդունվել	«Օրինականություն» եզրույթը Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ ամրագրված սկզբունք է, մինչդեռ «պարտաճանաչություն» հասկացությունն իրավական կատեգորիա չէ:

		19-րդ կետում՝ «օրինավոր» բառից հետո առաջարկվում է ավելացնել «և պարտաճանաչ» բառերը:	Չի ընդունվել	«Օրինականություն» եզրույթը Սահմանադրությամբ ամրագրված սկզբունք է, մինչդեռ «պարտաճանաչություն» հասկացությունն իրավական կատեգորիա չէ: Հետևաբար՝ տեղին չէ նաև «պարտաճանաչ» եզրույթի կիրառումը:
		83-րդ կետում «կրոնական» բառից հետո առաջարկվում է ավելացնել «,ինչպես նաև սեռատարիքային, պաշտոնեական, անձնական և մասնագիտական կարողությունների տարբերություններից բխող» բառերը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		108-րդ կետում «ատեստավորում» բառից հետո առաջարկվում է ավելացնել «կատարողականի գնահատման» բառերը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
39.	Ջրային կոմիտե ելից 01/04/1066-2022 առ. 22.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
40.	Քաղաքացիական ավիացիայի կոմիտե ելից 1.1/11.1/1101-2022 առ 22.03.2022թ.	2-րդ «Հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոններ» անվանումով գլխի 12-րդ կետի 10-րդ «Չհրապարակված պաշտոնական	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		տեղեկատվություն» բովանդակությամբ ենթակետը շարադրել ավելի հասկանալի խմբագրությամբ:		
		69-րդ կետում «տեսագրել» բառը փոխարինել «չտեսագրել» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
41.	Պետական գույքի կառավարման կոմիտե ելից 01/15.1/1971-2022 առ 24.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
42.	Միասնական սոցիալական ծառայություն ելից 02/ԻՓ/15486-2022 առ 30.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
43.	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն Անտառային կոմիտե ելից Ե/1/301-22 առ 24.03.2022թ.	Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների (այսուհետ՝ Կանոններ) ընդհանուր դրույթներում սահմանված է, որ Կանոններով սահմանվում են հանրային ծառայողի վարքագծի կանոնները ինչպես ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ ծառայողական պարտականություններից դուրս: Կարծում եմ, որ խնդրահարույց է ծառայողական պարտականություններից դուրս տիպային կանոնների սահմանումը:		Սույն Նախագծի մշակման համար հիմք ենք հանդիսացել Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից հաստատված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի տիպային կանոնները, որոնք միջազգային մակարդակում վարքագծի կանոններ են սահմանում հանրային ծառայողների

				համար: Նշված կանոնները ևս բովանդակում են այնպիսի դրույթներ, որոնք ուղղված են հանրային ծառայողների վարքագծի կանոնակարգմանը՝ ծառայողական պարտականությունների կատարումից դուրս: Միաժամանակ, հարկ է նշել, որ Նախագծով սահմանված կանոններն առավելագույնս միտված են չխոչընդոտելու հանրային ծառայողների՝ որպես մասնավոր անձանց հիմնական իրավունքների իրացմանը:
		Կանոնների ընդհանուր դրույթներում սահմանված է, որ Կանոնները ունեն պարտադիր և խրախուսելի բաղադրիչ: Խրախուսելի բաղադրիչը իրենից ներկայացնում է օրինակելի չափանիշների շարք, որը պարտադիր նվազագույնից ավելին է և բնորոշում է գերազանցությունը հանրային ծառայության համակարգում: Ընդ որում, Խրախուսելի կանոների թվարկումը սպառիչ չէ: Հանրային ծառայողը չի կարող պատժվել Խրախուսելի կանոններին չհետևելու համար, սակայն ցանկալի է, որ նա ձգտի հասնել այդ նորմերին: Կարծում եմ խրախուսելի Կանոնների բաղադրիչը	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի խրախուսելի կանոնները նպատակ են հետապնդում օրինակելի վարքագծի այնպիսի սկզբունքային նորմեր սահմանելու, որոնց հետևելը կբխի հանրային ծառայողի ընդհանուր բարեվարքությունից և բարեխղճությունից:

		անհրաժեշտ չէ, քանի որ նախ սպառիչ չեն, բացի այդ վերջիններս չպահպանելու դեպքում ոչ մի իրավական հետևանք տեղի չի ունենում: Նաև որպես խրախուսանք որևէ իրավական հետևանք չի ունենում:		Խրախուսելի կանոններին հետևելը կվկայի հանրային ծառայողի՝ վարքագծի սկզբունքներին առավելագույնս հետևելու հանգամանքի մասին: Միաժամանակ, հարկ է նշել, որ Նախագիծը լրացվել է նոր դրույթով, ըստ որի՝ կանոնների խախտումն ինքնին չի առաջացնում իրավական հետևանքներ: Իրավական հետևանքները ենթական են սահմանման Կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման ակտերում (կանոնագրքերում):
		Կանոններից կարծում եմ անհրաժեշտ է հանել «քաղաքական չեզոքություն և քաղաքական զսպվածություն» բաղադրիչը, քանի որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն քաղաքական չեզոքությունն ու քաղաքական	Չի ընդունվել	Թեև «Հանրային ծառայության մասին» օրենքը բովանդակում է հնարային ծառայողների քաղաքական

		զսպվածությունը բավարար պայմաններ են հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու համար, ուստի չեն կարող դիտարկվել վարքագծի պարտադիր կանոն:		գործունեության վերաբերյալ դրույթներ, այնուամենայնիվ, տիպային կանոններում սահմանվել են առավել որոշակի ընդհանրական կանոններ, որոնք հիմք կհանդիսանան հետագայում առանձին կանոններում (կանոնագրքերում) ընդգրկման:
		Կանոնների 18-րդ կետում առաջարկում եմ ավելացնել նաև տվյալ մարմնի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավական ակտերը:	Չի ընդունվել	Կանոնում տրված է ավելի լայն սահմանում: Մասնավորապես, ներառված է նաև «այլ իրավական ակտեր» եզրույթը, որը ենթադրում է նաև մարմնի կանոնադրությամբ սահմանված ակտերը:
		Կանոնների 27-րդ կետով սահմանված է, որ հանրային ծառայողը պարտավոր է անհրաժեշտության դեպքում մասնագիտական առարկություններ ներկայացնել նախատեսվող քաղաքականությունների, ուղեցույցերի կամ որոշումների վերաբերյալ՝ նախքան դրանց ընդունումը, իսկ դրանց ընդունումից հետո՝ կատարել դրանց պահանջները: Կարծում եմ, որ հանրային ծառայողը կաշկանդված չէ, միշտ կարող է	Չի ընդունվել	Քննարկվող դրույթով ամրագրված վարքագծի կանոնն իմպերատիվ եղանակով սահմանելը միտված է ընդունվող քաղաքականությունների և թվարկված այլ ակտերի վերաբերյալ առողջ

		անհրաժեշտության դեպքում մասնագիտական առարկություններ ներկայացնել նախատեսվող քաղաքականությունների, ուղեցույցերի կամ որոշումների վերաբերյալ:		քննադատական մտքի գեներացումանը մի կողմից, և կատարման ծառայողական կարգապահությանը՝ մյուս կողմից՝ դրանց ընդունվելու դեպքում:
		Կանոնների 40-րդ կետով սահմանված է, որ հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ արտոնյալ վերաբերմունք դրսևորելուց որևէ մեկի նկատմամբ՝ պայմանավորված հանրային ծառայության համակարգում այդ անձի ունեցած պաշտոնով: Առաջարկում եմ «պաշտոնով» բառից հետո լրացնել «կամ ունեցած կապերով» բառերը:	Չի ընդունվել	Քննարկվող դրույթով սահմանված վարքագծի կանոնի նպատակը հանրային ծառայության համակարգում խտրականության բացառումն է՝ ուղղակիորեն կապված անձի ունեցած պաշտոնի հետ:
		Կանոնների 42-44-րդ կետերը առաջարկում եմ հանել Կանոնների բարեկրթություն բաղադրիչից, քանի որ վերջիններս բոլոր գերատեսչությունների ներքին կարգապահական կանոններով նախատեսված են, ուստի դրանք չպահպանելու դեպքում խնդիր է առաջանալու՝ արդյոք հանրային ծառայողը ծառայողական պարտա-կանությունները չի իրականացրել կամ ոչ պատշաճ է իրականացրել, թե խախտել է վարքագծի կանոնները: Քանի որ Օրենքի համաձայն ծառայողական պարտականությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում	Չի ընդունվել	Նախագիծը լրացվել է նոր դրույթով, ըստ որի՝ կանոնների խախտումն ինքնին չի առաջացնում իրավական հետևանքներ: Իրավական հետևանքները ենթական են սահմանման Կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից

		կարգապահական պատասխանատվության ենթարկելը այլ գործընթաց է ենթադրում, իսկ վարքագծի կանոնների չպահպանելը՝ այլ գործընթաց:		հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման ակտերում (կանոնագրքերում): Տիպային կանոնները հիմք են հանդիսանալու հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հնարային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման և սահմանման համար, հետևաբար՝ հետագայում տիպային կանոնների և հանրային իշխանության մարմինների կանոնագրքերի միջև հակասություններ առաջանալ չեն կարող:
		Կանոնների «Անաչառություն, օբյեկտիվություն և խտրականության բացառում» բաղադրիչի 46-րդ կետում սահմանված է, որ հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ ցանկացած տեսակի, այդ թվում՝ սեռական ոտնձգության դրսևորումներից և խտրականություն	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		ցուցաբերելուց կամ նման տպավորություն ստեղծելուց: Առաջարկում եմ սեռական ոտնձգության դրսևորումներից զերծ մնալը նախատեսել ոչ թե վերոնշյալ բաղադրիչում, այլ «Բարեկրթություն» բաղադրիչում:		
		Կանոնների 51-րդ կետում «անմիջական ղեկավար» բառերն իր համապատասխան հոլովաձևերով ավելացնել «կամ վերադաս» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Կանոնների «Շահերի կառավարում» բաղադրիչի 55-րդ կետով սահմանված է, որ հանրային ծառայողը պարտավոր է իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, մասնավոր հատվածում հետագա աշխատանքի անցնելու առաջարկը ընդունելու դեպքում, անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր իրազեկել: Առաջարկում եմ տվյալ կանոնը նախատեսել ոչ թե վերոնշյալ բաղադրիչում, այլ «Բարեկրթություն» բաղադրիչում:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է և տեղափոխվել «Խրախուսելի կանոններ» բաժին:
		Կանոնների 56-րդ կետով սահմանված է, որ հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ Օրենքի իմաստով ոչ թույլատրելի նվեր, այդ թվում՝ հյուրասիրություն ընդունելուց կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն տալուց, եթե նման նվերը, այդ թվում՝ հյուրասիրությունը, ողջամտորեն չէր տրամադրվի հանրային ծառայող չհանդիսացող կամ հանրային պաշտոն չզբաղեցնող անձի:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ

		Օրենքի համաձայն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար թույլատրելի նվերներ են՝ 1) պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի ժամանակ տրվող նվերները կամ կազմակերպվող հյուրասիրությունը. 2) հրապարակային միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերները. 3) սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը. 4) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը. 5) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի հետևանքով. 6) օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրվող արարողակարգային նվերները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հյուրասիրությունը համարվում է թույլատրելի նվեր, ուստի առաջարկում եմ Կանոնների 56-րդ կետից հանել «հյուրասիրություն» բառը:		
		Առաջարկում եմ հանել Կանոնների 57-րդ կետը, քանի որ Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով հստակ սահմանված են թույլատրելի նվերների ցանկը, ուստի	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		դրանց ընդունելը չի կարող դիտարկվել վարքագծի կանոնների խախտում:		
		Կանոնների 59-րդ կետով սահմանված է, որ հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ իր գործառույթներն ու պարտականությունները իրականացնելու համար պետական բյուջեից բացի այլ աղբյուրից վարձատրություն ստանալուց: Առաջարկում եմ հանել տվյալ կանոնը, քանի որ Օրենքի համաձայն տվյալ կանոնը համարվում է անհամատեղելիության պահանջ, ուստի չի կարող դիտարկվել վարքագծի կանոն:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Կանոնների 60-րդ կետով սահմանված է, որ հանրային ծառայողը պարտավոր է չընդունել որևէ նվեր դրամական միջոցի, կամ դրամական միջոցի փոխարկվող այլ գործիքի տեսքով (օրինակ՝ նվեր քարտեր, վիրտուալ տարադրամներ, բանկային մուրհակներ, ճամփորդական չեկեր և այլն): Առաջարկում եմ տվյալ կանոնը հանել, քանի որ Օրենքի կարգավորումների համաձայն, եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված նվերը և թույլատրելի նվերն իր արժեքով գերազանցում է 60 000 Հայաստանի Հանրապետության դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն և հաշվառվում է որպես այդպիսին: Այսինքն օրենսդիրը նախատեսել է ցանկացած նվերի ընդունում, որի արշեքը չի գերազանցի 60 000 Հայաստանի Հանրապետության դրամը:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		Կանոնների 61-րդ կետից հանել «հյուրասիրություն» բառը՝ հաշվի առնելով 11-րդ կետի առաջարկությունը:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում «հյուրասիրություն» եզրույթը հանվել է Նախագծից:
		Կանոնների 67-րդ կետի իրավական հիմքը բացակայում է:	Չի ընդունվել	Առաջարկությունը խիստ անորոշ է:
		Կանոնների 70-րդ կետի սահմանափակման իրավական հիմքը բացակայում է:	Չի ընդունվել	Առաջարկությունը խիստ անորոշ է:
		Կանոնների 87-րդ կետի իրավական հիմքը բացակայում է:	Չի ընդունվել	Առաջարկությունը խիստ անորոշ է:
		Կանոնների 94-րդ կետով սահմանված է, որ հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է չտալ օրենսդրությանը հակասող, ինչպես նաև իր լիազորությունների շրջանակներից դուրս հանձնարարականներ: Օրենքի համաձայն տվյալ Կանոնը համարվում է հանձնարարական տալու սահմանափակում, ուստի չի կարող դիտարկվել վարքագծի կանոն:	Չի ընդունվելու	Նախագիծը լրացվել է նոր դրույթով, ըստ որի՝ կանոնների խախտումն ինքնին չի առաջացնում իրավական հետևանքներ: Իրավական հետևանքները ենթական են սահմանման Կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման ակտերում (կանոնագրքերում):

				Տիպային կանոնները հիմք են հանդիսանալու հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման և սահմանման համար: Հետևաբար, «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգավորման և հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների հիման վրա հանրային իշխանության առանձին մարմինների կողմից ընդունվող վարքագծի կանոններում (կանոնագրքերում) իրավական հետևանքներ կսահմանվեն հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից անթույլատրելի

				հանձնարարականներ տալու համար:
		Կանոնների 108-րդ կետից առաջարկում եմ հանել «ատեստավորման» բառը, քանի որ 2018 թվականի օրենսդրական փոփոխությունների արդյունքներով ատես-տավորման գործընթացը դուրս է եկել:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Կանոնների 109-րդ կետով սահմանված է, որ սահմանված պարտադիր կանոնների խախտումը կարող է առաջ բերել կարգապահական պատասխանատվություն՝ համապատասխան օրենսդրական ակտերով սահմանված կարգով: Սահմանված կարգապահական պատասխանատվությունը չի բացառում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության առավել խիստ միջոցների կիրառումը: Անհասկանալի է երկրորդ կարգավորումը, քանի որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն հանրային ծառայողների բարեվարքության պահանջների պահպանմանը հետևում են պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության մասին օրենքներով ստեղծված էթիկայի հանձնաժողովները, բացի այդ յուրաքանչյուր	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում վարքագծի տիպային կանոնների խախտման համար պատասխանատվության վերաբերյալ գլուխը հանվել է Նախագծից՝ համապատասխանեցնելով վերջինս «Հանրային ծառայության մասին» օրենքի տրամաբանությանը: Միաժամանակ, առաջարկության բովանդակության վերաբերյալ հարկ է նշել, որ հանրային ծառայողի

		խախտման համար մեկ կարգապահական տույժ կարող է սահմանվել:		նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը չի բացառում միևնույն արարքի համար նրա նկատմամբ իրավական պատասխանատվության այլ միջոցների, այդ թվում՝ քրեական կամ վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը:
		Առկա են որոշակի տեխնիկական խմբագրական թերություններ:	Չի ընդունվել	Առաջարկությունը խիստ անորոշ է:
44.	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե ելից 08.1/4864-2022 առ 31.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
45.	ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն ելից 01/13-6888-2022	Նախագծի 22-րդ կետով սահմանված է. «Հանրային ծառայողը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս զգայունություն ցուցաբերել հասարակության, համայնքի և համայնքի տարբեր՝ հատկապես խոցելի խմբերի կարիքների նկատմամբ»: Նշված կետի ձևակերպումից բխում է, որ իր ցանկացած	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է: Միաժամանակ, հարկ է նշել, որ հասարակության խոցելի խումբը շեշտվել է

	առ 25.03.2022թ.	լիազորություն իրականացնելիս հանրային ծառայողը պարտավոր է խոցելի խմբի կարիքների նկատմամբ զգայունություն ցուցաբերել: Այնուամենայնիվ, այդպիսի խմբերի կարիքների նկատմամբ զգայունություն ցուցաբերելը, օրինակ, կատարողական վարույթն իրականացնող հարկադիր կատարողի կողմից, կարող է դուրս լինել վերջինիս իրավասության շրջանակից և անհամատեղելի լինել նաև կատարողական վարույթում կողմերի իրավահավասարության ու մրցակցության սկզբունքների հետ: Ուստի կարծում ենք, հանրային ծառայողի համար հասարակության խոցելի խմբերի կարիքների նկատմամբ զգայունություն ցուցաբերելու պահանջը հարկ է ձևակերպել որպես բացառապես օրենքով հանրային ծառայողին վերապահված լիազորությունների շրջանակում զգայունություն ցուցաբերելու պահանջ:		առանձնահատուկ կերպով, քանի որ յուրաքանչյուր պարագայում նման խմբին պատկանող անձինք ունեն որոշ չափով տարբերակված վերաբերմունքի կարիք՝ իր լիազորությունների շրջանակներում: «Իր լիազորություններն իրականացնելիս» եզրույթը շեշված է դրույթում:
		Նախագծի 34-րդ կետով սահմանվում է հանրային ծառայողի պարտականությունը՝ ապահովել հանրության ներառականությունը որոշումների կայացման հարցում՝ համապատասխան օրենսդրական արգելքներ չլինելու պարագայում: Նշված ձևակերպումից ստացվում է, որ կանոնն ըստ էության պարտավորեցնում է վարչական մարմնի՝ վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձին ցանկացած վարչական ակտ կայացնելիս ապահովել վարչական վարույթում հանրության ներառականությունը՝ հիմք ընդունելով նաև այն	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. «ներառականություն» բառը փոխարինվել է «մասնակցություն» բառով:

		հանգամանքը, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքն այդպիսի ներառականության ապահովման առնչությամբ որևէ արգելք չի նախատեսում: Ավելին, նշված ձևակերպումից բխում է, որ վարչական վարույթի առանձին տեսակ հանդիսացող կատարողական վարույթում ևս ցանկացած որոշում կայացնելիս հարկադիր կատարողը պարտավոր է ապահովել հանրության ներառականությունը, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքը դա ուղղակիորեն արգելող նորմեր չունի: Նման կարգավորման նախատեսումը, սակայն, խիստ խնդրահարույց է առնվազն անհատական իրավական ակտերի ընդունման գործընթացի առնչությամբ, քանի որ անհատական իրավական ակտերը, այդ թվում՝ վարչական ակտերը, որպես կանոն, ընդունվում են կոնկրետ գործի կարգավորման նպատակով և վարույթի մասնակիցներից զատ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չեն շոշափում: Ավելին, Նախագծի քննարկվող կետում նշված «ներառականություն» ձևակերպումը ենթադրում է ոչ թե պարզապես վարույթի ընթացքին հանրության ներկայացուցիչների ներկայության ապահովում, այլ նաև վերջիններիս լսելու, նրանց որոշման կայացման գործընթացում որոշակի ազդեցություն ունենալու հնարավորության ընձեռում, ինչը անհամատեղելի է վարչական ակտի էության, ինչպես նաև կատարողական վարույթի հետ: Հաշվի առնելով նաև Սահմանադրության 6-րդ հոդվածով		

		սահմանված կարգավորումն առ այն, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, առաջարկում ենք Նախագծի 34-րդ կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանրային ծառայողը պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում և կարգով ապահովել հանրության ներառականությունը որոշումների կայացման հարցում»:		
		Նախագծի 36-րդ կետը հանրային ծառայողին պարտավորեցնում է ծառայողական պարտականությունները կատարելիս այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակհայտնել իր ինքնությունը: Ձևակերպումից պարզ չէ, թե «ինքնություն» հասկացությունն իրենից ինչ է ենթադրում: Բացի այդ, որոշ հանրային ծառայողներ, օրինակ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Թեժ գծի աշխատակիցները, ծառայողական պարտականությունների բերումով աշխատանքային օրվա ընթացքում հաղորդակցվում են հարյուրավոր քաղաքացիների հետ, ինչպիսի պայմաններում տվյալ աշխատակցի ինքնության վերաբերյալ տվյալների լայն շրջանակ իր հետ հաղորդակցվող բոլոր անձանց բացահայտելը կարող է խնդրահարույց լինել: Կարծում ենք՝ նման դեպքերում կարելի է սահմանափակվել պետական մարմնի համապատասխան	Ընդունվել է մասամբ	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		ստորաբաժանման և/կամ հանրային ծառայողի պաշտոնի հիշատակմամբ:		
		Նախագծի 41-րդ կետով առաջարկվում է սահմանել հանրային ծառայողի կողմից ֆիզիկական ուժ չգործադրելու կամ դրա վերաբերյալ ապառնալիք չներկայացնելու համընդհանուր արգելք: Մինչդեռ մի շարք հանրային ծառայողներ, օրինակ՝ հարկադիր կատարողները, ՀՀ օրենսդրությամբ լիազորված են որոշակի դեպքերում ֆիզիկական ուժ, հրազեն կամ հատուկ միջոցներ գործադրել, և առաջարկվող կարգավորման պայմաններում օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունն իրականացնելը կդիտվի որպես էթիկայի կանոնների խախտում: Ուստի առաջարկում ենք 41-րդ կետում ավելացնել «բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» արտահայտությունը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի 42-րդ կետը հանրային ծառայողին պարտավորեցնում է աշխատանքի ներկայանալ գրասենյակային ոճի հագուստով, պահպանել հագուստ կրելու վերաբերյալ՝ տվյալ մարմնի կողմից սահմանված կանոնները: Հաշվի առնելով այն, որ ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով մի շարք հանրային ծառայողներ, այդ թվում՝ հարկադիր կատարողները, պարտավոր են համազգեստ կրել, առաջարկում ենք կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանրային ծառայողը պարտավոր է աշխատանքի ներկայանալ գրասենյակային ոճի	Ընդունվել է մասամբ	«Հագուստ կրելու վերաբերյալ» արտահայտությունը փոխարինվել է «արտաքին տեսքին ներկայացվող՝ տվյալ մարմնի կողմից սահմանված կանոնները» ձևակերպմամբ, ինչը ենթադրում է օրենքով և այլ իրավական ակտերով

		հագուստով, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ համազգեստով, պահպանել հագուստ կամ համազգեստ կրելու վերաբերյալ օրենքով, այլ իրավական ակտերով կամ տվյալ մարմնի կողմից սահմանված կանոնները»:		սահմանված դեպքերում՝ համազգեստը:
		Նախագծի 52-րդ կետը հանրային ծառայողին պարտավորեցնում է խուսափել այնպիսի հարաբերություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում կամ որոնց առկայության պայմաններում ծառայողը հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարել իր պարտականությունները: Կարծում ենք, կետի ձևակերպումն անորոշ է, քանի որ «Հանրային ծառայության մասին» օրենքի համատեքստում շահերի բախման իրավիճակներ են նաև, օրինակ, հարկադիր կատարողի կողմից իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ կատարողական վարույթ իրականացնելը, ինչպիսի պայմաններում պարզ չէ, թե 52-րդ կետով սահմանված կանոնի պահանջը կոնկրետ ինչ վարվելակերպ է ենթադրում և թե կոնկրետ ինչ փաստական հանգամանքների դեպքում է կիրառման ենթակա:	Չի ընդունվել	Շահերի բախման հասկացությունը, դրա վերաբերյալ մանրամասն կարգավորումները և սահմանված պահանջները խախտելու դեպքում իրավական հետևանքներն ամրագրված են «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթներում:
		Նախագծի 53-րդ կետով սահմանվում է, որ հանրային ծառայողը պարտավոր է խուսափել այնպիսի գործառույթներ ստանձնելուց, որոնց իրականացման ընթացքում կանխատեսելի կլինեն հաճախակի շահերի բախման իրավիճակներ: Ձևակերպումից հստակ չէ՝	Ընդունվել է մասամբ	Քննարկվող դրույթը ենթարկվել է խմբագրման. ավելացվել է «իր լիազորությունները կատարելիս» եզրույթը՝

		խոսքը հանրային ծառայողի ծառայողական պարտականություններ /գործառույթներ/ ստանձնելո՞ւն է վերաբերում, թե՞ ծառայողական պարտականությունների զատ այլ գործառույթներին: Եթե այն վերաբերելի է ծառայողական պարտականություններին, ապա նման ձևակերպումը խիստ խնդրահարույց է, որովհետև հանրային ծառայողը պարտավոր է իրականացնել օրենքով և իր պաշտոնի անձնագրով իրեն վերապահված գործառույթները և իրավասու չէ զուտ ենթադրյալ կանխատեսման հիքմով հրաժարվել դրանք իրականացնելուց:		համապատասխան «Հանրային ծառայության մասին» օրենքի: Շահերի բախման հասկացությունը, դրա վերաբերյալ մանրամասն կարգավորումները և սահմանված պահանջները խախտելու դեպքում իրավական հետևանքներն ամրագրված են օրենսդրական մակարդակով՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի համապատասխան դրույթներում:
		Նախագծի 54-րդ կետն արգելում է հանրային ծառայողին տալ ոչ օբյեկտիվ երաշխավորություններ կամ անել միջնորդություններ իրեն կամ որևէ այլ անձի պաշտոնի նշանակելու (…) առնչությամբ: Կետի ձևակերպումը, կարծում ենք, խնդրահարույց է այն համատեքստում, որ հանրային ծառայողը որևէ իրավական ակտով լիազորված չէ նման միջնորդություններ կամ երաշխավորություններ անելու, հետևաբար՝ այդպիսի միջնորդությունների կամ երաշխավորությունների օբյեկտիվ կամ ոչ օբյեկտիվ լինելը գնահատելը և միայն ոչ օբյեկտիվությունը	Չի ընդունվել	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:

		էթիկայի կանոնների խախտում համարելը խնդրահարույց է:		
		Նախագծի 55-րդ կետը պարտավորեցնում է հանրային ծառայողին մասնավոր հատվածում հետագա աշխատանքի անցնելու առաջարկն ընդունելու դեպքում այդ մասին հայտնել անմիջական ղեկավարին կամ վերադասին: Նշված կետում օգտագործվող «մասնավոր հատված» ձևակերպումը, կարծում ենք, որոշակի չէ: Առաջարկում ենք այն փոխարինել «պետական և տեղական ինքնակառավարման մարմին չհանդիսացող ցանկացած այլ գործատուի մոտ» արտահայտությամբ:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		Նախագծի 61-րդ կետով սահմանվում է. «Հանրային ծառայողը պարտավոր է բոլոր դեպքերում և անկախ նվերի, այդ թվում՝ հյուրասիրության և ոչ նյութական առավելության արժեքից, անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել ստացված նվերի, այդ թվում՝ հյուրասիրության և ոչ նյութական առավելության մասին»: Նախագծի նշված կետի ձևակերպումից պարզ չէ՝ արդյոք այն վերաբերելի է նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա թույլատրելի համարվող նվերներին: Եթե այո, ապա արդյո՞ք համաչափ է և ողջամիտ է, օրինակ, ծառայողական պարտականությունների բերումով որևէ միջոցառման մասնակցելիս ստացված հյուրասիրության մասին գրավոր տեղեկացնելու պահանջը: Եթե ոչ, ապա կարծում ենք՝ հարկ է 61-րդ	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը վերաբերում է հանրային ծառայողների կողմից և՛ թույլատրելի, և՛ ոչ թույլատրելի նվերների ստացման դեպքերին: Յուրաքանչյուր պարագայում հանրային ծառայողը պարտավորվում է վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել ստացված նվերի մասին, քանի որ

		կետում նշել, որ բացառություն են կազմում թույլատրելի համարվող նվերները:		հանրային ծառայողը չէ այն սուբյեկտը, որը պետք է իրավասու լինի որոշելու՝ արդյոք նվերն իրապես հանդիսանում է թույլատրելի, թե ոչ: Հարցին ընթացք տալու լիազորությունը տրված է հանրային ծառայողի վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին:
		Նախագծի 67-րդ կետը հանրային ծառայողին արգելում է այլ նպատակներով օգտագործել, հրապարակել կամ այլ կերպ մատչելի դարձնել (այդ թվում՝ պաշտոնից ազատվելուց հետո) պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ իրեն հայտնի դարձած ոչ հրապարակային տեղեկատվությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Կարծում ենք՝ ծառայողական նպատակից զատ այլ նպատակով տեղեկատվությունն օգտագործելու արգելքը հավասարապես վերաբերելի է նաև պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ հանրային ծառայողին հայտնի դարձած հրապարակային տեղեկատվությանը, քանի որ հրապարակային տեղեկատվությունը ևս ծառայողական տեղեկատվություն է, իսկ «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը հանրային ծառայողին արգելում է ոչ	Չի ընդունվել	Դրույթը վերաբերում է մասնավորապես այն տեղեկություններին, որոնք հրապարակման ենթակա չեն այն մարմնի կողմից, որտեղ ծառայողական պարտականություններն է իրականացնում հանրային ծառայողը: Հրապարակային տեղեկություններն թույլատրվում է օգտագործել, հրապարակել կամ այլ կերպ մատչելի դարձնել, բացառությամբ սույն Նախագծով և այլ իրավական ակտերով

		ծառայողական նպատակով օգտագործել ծառայողական ցանկացած տեղեկատվություն:		սահմանված հատուկ դեպքերի:
		Նախագծի 92-րդ կետում սահմանվում է հանրային ծառայողի պարտականությունը՝ միջամտելու իրեն ենթակա ծառայողների հանդեպ ոտնձգության կամ այլ անարդար վերաբերմունքի ցանկացած դրսևորման դեպքում, իսկ 93-րդ կետում՝ նրանց զերծ պահելու ոչ հիմնավոր գործողություններ կատարելուց կամ որոշումներ կայացնելուց: Նշված կետերում օգտագործվող «միջամտել» և «զերծ պահել» հասկացությունները, կարծում ենք, որոշակի չէ և այդ ձևակերպումից պարզ չէ՝ ինչ է ակնկալվում հանրային ծառայողից: Առաջարկում ենք հստակեցնել ձևակերպումները կամ այդ կետերում ավելացնել «օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում» արտահայտությունը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
46.	Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ելից 01/13.6/1905-22 առ 06.04.2022թ.	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«2.* ***Նորմատիվ իրավական ակտերով սահմանված նորմերի անհիմն կրկնություններից խուսափելու նպատակով իրավական ակտում կիրառվում են հղումներ****: Հղումները նորմատիվ իրավական ակտի հոդվածներում, մասերում, կետերում, ենթակետերում, պարբերություններում նորմատիվ իրավական այլ ակտի հոդվածներին, մասերին, կետերին, ենթակետերին, պարբերություններին, ինչպես նաև նորմատիվ իրավական այլ ակտերին կամ*	Ընդունվել է	Նախագծում առկա «սեռական ոտնձգություն» եզրույթի սահմանումը խմբագրվել է՝ համապատասխանեցնելով այն Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի 40-րդ

		դրանց առանձին դրույթներին կիրառվում են նաև, երբ անհրաժեշտ է ընդգծել այդ դրույթների փոխադարձ կապը:»: Ի ապահովումն հիշյալ դրույթի՝ հարկ է արձանագրել, որ Հավելվածի մի շարք կետերում ուղղակիորեն կրկնվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) արդեն իսկ նախատեսված իրավակարգավորումներ: Մասնավորապես՝ ի թիվս այլնի, Օրենքի տարբեր հոդվածներին կրկնող կարգավորումներ են նախատեսված Հավելվածի 3-րդ կետում, 11-րդ կետի 1-ին և 6-րդ ենթակետերում: Այսպիսով, Հավելվածի 3-րդ կետով նախատեսված դրույթը նույնանում է Օրենքի 22-րդ հոդվածի իրավակարգավորման հետ, Հավելվածի 11-րդ կետի 1-ին ենթակետը՝ Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման, Հավելվածի 11-րդ կետի 6-րդ ենթակետը՝ Օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորմանը: Ավելին՝ օրինակ Հավելվածի 11-րդ կետի 7-րդ ենթակետը կրկնում է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով նախատեսված իրավակարգավորումը: Այսպիսով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը՝		հոդվածի կարգավորումներին:

		հարկ ենք համարում արձանագրել, որ Հավելվածի վկայակոչված կետերում և ենթակետերում ուղղակիորեն կրկնում են այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված նորմերը, ինչը խնդրահարույց է իրավական ակտի կառուցվածքի տեսանկյունից: Հավելվածի 11-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսվում է «սեռական ոտնձգություն» հասկացությունը: Մասնավորապես՝ սեռական ոտնձգությունը բնորոշվում է որպես *գենդերային խտրականության դրսևորումների տեսակ՝ խոսքային կամ ֆիզիկական դրսևորում ունեցող սեռական բնույթի գործողություններ կամ ցանկացած իրավիճակ, որն ուղղված է անձի արժանապատվությունը նվաստացնելուն, վախեցնելուն, թշնամությանը, սպորացմանը կամ նմանատիպ իրավիճակներին:* Նկատի ունենալով, որ Նախագծով սահմանվող հասկացությունը նույնանում է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով ամրագրված հասկացությանը՝ այնուամենայնիվ, պետք է արձանագրենք հետևյալը. Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 40-րդ հոդվածով սեռական ոտնձգությունը բնորոշվում է որպես *սեռական բնույթի* ***խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ***		

		դրսևորվող անցանկալի վարքագիծ, որը նպատակ ունի անձի արժանապատվությունը նվաստացնելուն կամ որը հանգեցնում է դրան, *մասնավորապես՝ ճնշող, թշնամական, սպորացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելով:* Կոնվենցիայի բացատրական զեկույցում նշվում է, որ խոսքային վարքագիծը վերաբերում է անձի կողմից ասված կամ արտաբերված բառերին կամ ձայներին, ոչ խոսքային վարքագիծը՝ արտահայտություններին կամ հաղորդակցման այնպիսի միջոցներին, որոնք չեն ներառում բառերի կամ ձայների արտաբերում, ինչպես օրինակ՝ դեմքի արտահայտությունը, ձեռքի շարժումները կամ խորհրդանիշները: Ֆիզիկական վարքագիծը վերաբերում է ցանկացած սեռական բնույթի վարքին և կարող է ներառել տուժողի մարմնի հետ կոնտակտ ենթադրող իրավիճակներ: Ուստի, կարող ենք արձանագրել, որ վարքագծի ոչ խոսքային և ֆիզիկական դրսևորումները չեն նույնանում: Եվրոպական միության խորհրդի 2000 թվականի նոյեմբերի 27-ի «Սահմանելով աշխատավայրում և զբաղվածության ոլորտում հավասար վերաբերմունքի համար ընդհանուր շրջանակի ստեղծում» 2000/78/EC դիրեկտիվի 2-րդ հոդվածի 3-րդ կետով ոտնձգությունը կամ հետապնդումը (անգլերեն՝ harassment) բնորոշվում է որպես *պաշտպանվող հատկանիշների հիմքով դրսևորվող անցանկալի վարքագիծ, որը ուղղված է կամ հանգեցնում է անձի արժանապատվությունը նվաստացնելուն և ճնշող, թշնամական, սպորացուցիչ,*		

		նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելուն: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ սեռական ոտնձգությունը բնորոշվում է հետևյալ հատկանիշների պարտադիր առկայությամբ՝ 1. վարքագծի սեռական բնույթը, 2. վարքագծի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական բնույթը, 3. վարքագծի անցանկալի լինելը, 4. տուժողի արժանապատվությունը նվաստացնելը՝ որպես վարքագծի նպատակ կամ հետևանք: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք սեռական ոտնձգության հասկացությունը խմբագրել՝ շեշտելով վարքագծի անցանկալի լինելու հանգամանքը, ամրագրելով ոչ միայն դրա խոսքային և ֆիզիկական, այլև ոչ խոսքային բնույթը, ինչպես նաև նախատեսելով այն վարքագիծը, որը ոչ միայն ուղղված է կամ նպատակ ունի տուժողի արժանապատվությունը նվաստացնելուն, այլ նաև, անկախ ոտնձգությունն իրականացնողի նպատակից, ունենում է նման արդյունք: Պետք է նաև հաշվի առնել, որ Հավելվածով սեռական ոտնձգություն հասկացությունն ամրագրելու նպատակը որոշակիորեն տարբերվում է Օրենքով այդ հասկացությունն ամրագրելու նպատակներից, մասնավորապես, Հավելվածն ուղղված է վարքագծի կանոնների սահմանմանը, ինչպես նաև այդ կանոնները խախտելու դեպքում պատասխանատվության միջոցներ		

		կիրառելու անհրաժեշտ գործիքակազմի ապահովմանը, իսկ Օրենքն ուղղված է կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման նպատակով ընդհանուր իրավական շրջանակի սահմանմանը, որը հիմք է հանդիսանում ոլորտում քաղաքականության և ռազմավարությունների մշակման համար: Ուստի, կարծում ենք, որ «գենդերային խտրականության դրսևորումների տեսակ» արտահայտությունը Նախագծով օգտագործելու նպատակահարմարությունը բացակայում է՝ նկատի ունենալով, որ սեռական ոտնձգությունը կարող է հանդես գալ որպես ոչ միայն գենդերային, այլև այլ պաշտպանվող հատկանիշների հիմքով խտրականության դրսևորում, մասնավորապես, ազգությամբ, ռասայով, առողջությամբ, սոցիալական դրությամբ և այլ հատկանիշներով պայմանավորված, կամ առանձին դեպքերում առհասարակ չհանդիսանալ խտրականության դրսևորում՝ նկատի ունենալով, որ հատկապես աշխատավայրում սեռական ոտնձգության տարածվածությունը պայմանավորվում է այդ թվում նաև գործատուի և աշխատողի միջև ստորադասական հարաբերություններով, որն առկա է, նույնիսկ եթե գործատուն և աշխատողը պատկանում են նույն սոցիալական խմբին:		
		Հավելվածի 14-րդ կետի համաձայն՝ *«Հանրային ծառայողը պարտավոր է **զերծ մնալ** ՀՀ պետական խորհրդանիշներից և պետական մարմինների կանոնադրությամբ հաստատված*	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է և «մեծարում» եզրույթը հանվել է

		տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանշի ***մեծարումից, ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում դրանց ցուցադրումից****:»* Իրավական որոշակիության սկզբունքը համարվում է օրենքի գերակայության հիմնական տարրերից մեկը (Beian-ն ընդդեմ Ռումինիայի (թիվ 1), § 39) : ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է օրինականության սկզբունքի հիմնական բաղադրատարր հանդիսացող իրավական որոշակիության սկզբունքին, մասնավորապես արձանագրելով՝ - « .... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՍԴՈ-630): - «ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը,		Նախագծից: Միաժամանակ, հարկ է նշել, որ սույն կանոնը վերաբերում է ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում դրանց ցուցադրմանը, այլ՝ ոչ առհասարակ, հետևապես չի կարող դիտարկվել որպես մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանափակում:

		իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի» (ՍԴՈ-1270): - «Մի շարք այլ որոշումների (ՍԴՈ-630, ՍԴՈ-1142) համատեքստում, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, Սահմանադրական դատարանը գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում» (ՍԴՈ-1439): Նախ գտնում ենք, որ վկայակոչված որոշումների լույսի ներքո «մեծարումից» եզրույթը խնդրահարույց է, քանի որ իրավահարաբերության մասնակցի համար կանխատեսելի լինել չի կարող, թե իր կողմից դրսևորված կոնկրետ որ վարքագիծը կարող է որակվել «մեծարում»: Ավելին՝ Հավելվածի վկայակոչված կետում ըստ էության նախատեսվում է, որ հանրային ծառայողը պարտավոր է **զերծ մնալ** ՀՀ պետական խորհրդանիշներից և պետական մարմինների կանոնադրությամբ հաստատված տարբերանշաններից բացի որևէ այլ խորհրդանշի **մեծարումից:**		

		ՀՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«2. Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:* Ըստ էության վկայակոչված կարգավորումը կարող է խնդրահարույց համարվել, քանի որ բովանդակային առումով այն նախատեսում է կրոնի կամ համոզմունքների ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով արտահայտելու ազատության սահմանափակում, ինչը Սահմանադրության 41-րդ հոդվածի համաձայն կարող է կատարվել միայն օրենքով և հստակ նախատեսված նպատակներով (պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով): Այս առումով գտնում ենք, որ նախատեսված իրավակարգավորումը կամ ենթակա է վերաձևակերպման (այն դեպքում, եթե դրանով նպատակ չի հետապնդվում սահմանափակել մտքի, խղճի և կրոնի ազատությունը), կամ եթե նպատակ է հետապնդվում հանրային ծառայողների համար նախատեսել մտքի, խղճի և կրոնի ազատության		

		սահմանափակում, ապա դա կարող է կատարվել բացառապես օրենքի մակարդակով:		
		Հավելվածի 19-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ այնպիսի վարքագիծ դրսևորելուց, որը կարող է ընկալվել որպես անօրինականության խրախուսում կամ դրա նկատմամբ հանդուրժողականություն, կամ անհարգալից վերաբերմունք **օրինավոր** վարքագծի նկատմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«2. Նորմատիվ իրավական ակտում **միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը,** տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»:* Հավելվածում որպես իրավաչափ վարքագծի բնորոշում օգտագործվում «օրինական» եզրույթը, ուստի նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները կիրառելու պահանջի պահպանման նկատառումներից ելնելով՝ առավել նպատակահարմար է միևնույն բառի կիրառումը:	Չի ընդունվել	«Օրինական» և «օրինավոր» բառերը համարվում են հոմանիշներ, սակայն, միաժամանակ, դրանցից յուրաքանչյուրն ունի իմաստային նրբերանգներ: Այսպես, «օրինական» բառը, համաձայն Անդրանիկ Վրդ. Կռանեանի հայերենի բառարանի, առաջին իմաստով նշանակում է «օրենքի համաձայն»: Երկրորդ իմաստով արդեն «օրինական» և «օրինավոր բառերը համընկնում են: Նախագծում կիրառվել են «օրինավոր վարքագիծ», «ղեկավարի օրինական պահանջներ», «աշխատակիցների օրինական շահեր» արտահայտությունները: Քանի որ «օրինավոր վարքագիծը» վերաբերում է առհասարակ հանրային ծառայողների և այլ անձանց

				վարքագծին, տվյալ վարքագիծը չի կարող սահմանված լինել և սահմանված չէ օրենսդրական ակտերով: Իսկ «աշխատակիցների օրինական շահերը» և «ղեկավարի օրինական պահանջները» օրենսդրական կատեգորիաներ են: Հետևապես, բառերի ընտրված կիրառելիությունը տեղին է:
		Հավելվածի 28-րդ կետով հանրային ծառայողի համար նախատեսվում է պարտավորություն վարքագծի կանոնների դրսևորման հետ կապված մասնագիտական խորհրդատվության համար դիմել բարեվարքության հարցերով կազմակերպչին: Նկատի ունենալով, որ բարեվարքության հարցերով կազմակերպչին դիմելը նախատեսված է որպես հանրային ծառայողի պարտավորություն՝ գտնում ենք, որ իրավահարաբերությունը ենթակա է առավել մանրամասն կարգավորման, մասնավորապես՝ առնվազն սահմանելով այն կոնկրետ դեպքերը, երբ ծագում է տվյալ պարտավորությունը: Հակառակ պարագայում կարող է ստեղծվել իրավիճակ, երբ հանրային ծառայողին վերագրվի վարքագծի խախտում՝	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է. բարեվարքության հարցերով կազմակերպչին դիմելը սահմանվել է որպես հայեցողական ինստիտուտ:

		պարտավորության չկատարման տեսքով, մինչդեռ վերջինս հնարավորություն չի ունեցել կանխատեսելու այն վարքագիծը, որը կհամարվեր իրավաչափ: Հիշյալը բխում է նաև իրավական որոշակիության վերաբերյալ վկայակոչված դիրքորոշումներից:		
		Կարծում ենք, որ Հավելվածի 32-րդ կետում օգտագործվող (երկու անգամ) «տեղեկատվություն» եզրույթը ենթակա է փոփոխման, քանի որ «տեղեկատվություն» նշանակում է տեղեկություն տալ:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. «տեղեկատվություն» բառը փոխարինվել է «տեղեկություններ» բառով:
		Հավելվածի 34-րդ կետում սահմանվում է, որ հանրային ծառայողը պարտավոր է ապահովել **հանրության ներառականությունը որոշումների կայացման հարցում՝ համապատասխան օրենսդրական արգելքներ չլինելու պարագայում:** Այս կարգավորմամբ բովանդակային առումով սկզբունքորեն տարբերվող կարգավորում է նախատեսված Սահմանադրության 6-րդ հոդվածից: Մասնավորապես՝ Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք **իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով**:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		Այսպիսով, սահմանադրական կարգավորումների լույսի ներքո հանրային ծառայողն իր գործողություններում սահմանափակված է Սահմանադրությամբ կամ օրենքներով նախատեսված լիազորություններով: Մինչդեռ, Հավելվածի համապատասխան կարգավորումը նախատեսում է տրամագծորեն տարբերվող վարքագիծ դրսևորելու պահանջ, ինչն ուղղակիորեն հակասում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասին:		
		Հավելվածի 36-րդ կետում նախատեսվում է, որ հանրային ծառայողը պարտավոր է ծառայողական պարտականությունները կատարելիս այլ անձանց հետ հաղորդակցության ժամանակ, այդ թվում՝ նամակագրությամբ կամ հեռախոսով հաղորդակցվելիս, **հայտնել իր ինքնությունը**: Ինքնության հայտնումը կարող է դրսևորվել հանրային ծառայողի անվան, ազգանվան և հայրանվան վկայակոչմամբ, ուստի գտնում ենք, որ հիշյալ ձևակերպմամբ դրույթը չի ապահովում ենթադրաբար հետապնդվող նպատակը (այլ անձի համար հանրային ծառայողի կարգավիճակի բացահայտում):	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 37-րդ կետում «միջողներն» բառը փոխարինել «միջոցներն» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Հավելվածի 38-րդ կետում նախատեսվում է, որ հանրային ծառայողը պարտավոր է գործընկերների հետ հարաբերություններում դրսևորել նրբանկատություն, չբարձրացնել ձայնն աշխատավայրում, գործընկերոջ վերաբերյալ քննադատություն արտահայտել միայն նրա ներկայությամբ՝ պարզաբանելով բոլոր հիմքերը: Գործընկերներ եզրույթի մեկնաբանության դեպքում դրա շրջանակներում կարող են ընդգրկվել ինչպես անմիջական ենթակայության տակ աշխատող աշխատակիցները, այնպես էլ ոչ անմիջական ենթակայության տակ աշխատող աշխատակիցները (օրինակ՝ վարչության պետի ոչ անմիջական ենթակայության տակ է գտնվում տվյալ վարչության կառուցվածքում ներառված բաժնի աշխատակիցը): Ստացվում է, որ ոչ անմիջական ենթակայության դեպքում վերադասը զրկված է աշխատակցի գործունեության վերաբերյալ քննադատություն արտահայտելու հնարավորությունից, մինչդեռ, նկատի ունենալով հանրային ծառայության տարբեր տեսակների սուբորդինացիոն կառուցվածքը՝ որոշ դեպքում նպատակահարմար չէ աշխատակցի (գործընկերոջ) ներկայությունը:	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը վերաբերում է հանրային ծառայողի՝ ինչպես անմիջական ենթակայության տակ աշխատող աշխատակիցների, այնպես էլ ոչ անմիջական ենթակայության տակ աշխատող աշխատակիցների հետ հարաբերություններին: Բարեկրթության սկզբունքից և բոլոր գործընկերների հանդեպ հարգանքի դրսևորումից ելնելով՝ հնարային ծառայողը պարտավոր է յուրաքանչյուր տեսակի քննադատություն հնչեցնել բացառապես տվյալ անձի ներկայությամբ՝ բացառելով այլ գործընկերների մոտ խոսակցությունները:
		Հավելվածի 39-րդ կետում «չխոչնդոտել» բառը փոխարինել «չխոչընդոտել» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Հավելվածի 41-րդ կետում նախատեսվում է, որ հանրային ծառայողը պարտավոր է չգործադրել ֆիզիկական ուժ կամ դրա վերաբերյալ սպառնալիք չներկայացնել: Կարծում ենք, որ նման ընդհանրական ձևակերպումը խնդրահարույց է հետևյալ պատճառաբանությամբ: «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ՝ Ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրումը: Ոստիկանության ծառայողի անհատակա ն պաշտպանության միջոցները, վերտառությամբ գլուխն ամբողջությամբ կարգավորում է ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժի գործադրման կարգը, հիմքերը, պայմաններն ու սահմանները: «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ և 34-րդ հոդվածներով նախատեսված են հարկային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի օգտագործման պայմաններն ու հիմքերը: ՀՀ օրենսդրությունը մի շարք դրույթներ է նախատեսում ֆիզիկական ուժի գործադրման թույլատրելիության, հիմքերի, կարգի և պայմանների վերաբերյալ, ուստի հանրային ծառայողների համար առանց բացառության ֆիզիկական ուժի գործադրման արգելքի նախատեսումը կարող է հանգեցնել սույն վարքագծի կանոնների և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի հակասության:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթներում կատարվել է լրացում:

		Այս առումով առավել նպատակահարմար է օրենքով նախատեսված դեպքերում որոշակի բացառությունների նախատեսումը: Նույն դիտարկումը վերաբերում է նաև 43-րդ հոդվածում նախատեսված թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր օգտագործման բացարձակ արգելքին: Թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր կարող են օգտագործվել նաև օրինակ բժշկական նպատակներով, ուստի բացարձակ արգելի նախատեսումը նպատակահարմար չէ:		
		Գտնում ենք, որ Հավելվածի 46-րդ կետում կիրառվող «խտրականություն» եզրույթն առավել նպատակահարմար է ձևակերպել որպես «խտրական վերաբերմունք»:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում «և խտրականություն ցուցաբերելուց» եզրույթը հանվել է Նախագծից:
		Հավելվածի 54-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է չտալ ոչ օբյեկտիվ երաշխավորություններ կամ չանել միջնորդություններ իրեն կամ որևէ այլ անձի պաշտոնի նշանակելու, առաջխաղացման, պաշտոնական կարգավիճակի բարելավման և այլ հարցերով, ինչպես նաև չդրդել որևէ մեկին նման երաշխավորություններ տալ կամ միջնորդություններ անել: Նախ հարկ ենք համարում արձանագրել, որ «ոչ օբյեկտիվ երաշխավորություններ» բառակապակցությունն իր խիստ գնահատողական լինելու հիմքով խնդրահարույց է իրավական	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:

		որոշակիության տեսանկյունից, մասնավորապես՝ պարզ չէ, թե որ երաշխավորությունը կարող է գնահատվել որպես օբյեկտից, որը՝ ոչ: Այս առումով առաջարկում ենք խուսափել խիստ գնահատողական ձևակերպումների գործածումից: Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ հանրային ծառայության որոշ դեպքերում խրախուսանքի միջոցներ կիրառող անձին դրա վերաբերյալ միջնորդություն, դիմում, զեկուցագիր, առաջարկ հասցեագրում է խրախուսման ենթակա ծառայողի անմիջական ղեկավարը (եթե վերջինս չի հանդիսանում խրախուսման միջոց կիրառող): Այսպիսով, նման բացարձակ սահմանափակման նախատեսումը խնդրահարույց է հանրային ծառայության կառուցվածքային-կազմակերպչական իրավահարաբերությունների լույսի ներքո:		
		Հավելվածի 55-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, մասնավոր հատվածում հետագա աշխատանքի անցնելու առաջարկը ընդունելու դեպքում, անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր իրազեկել: Կարգավորման ուսումնասիրությունից պարզ չէ՝ ինչով է պայմանավորված բացառապես մասնավոր հատվածում հետագա աշխատանքի անցնելու դեպքում ծանուցելու պարտականությունը, ինչով է պայմանավորված հանրային ծառայության այլ տեսակի անցնելու դեպքում նման պահանջի չնախատեսումը:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		Միաժամանակ, առաջարկը ընդունելու դեպքում հանրային ծառայողն անմիջապես պարտավոր է պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր իրազեկել այդ մասին իր վերադասին կամ անմիջական ղեկավարին: Նման կարգավորումից պարզ չէ՝ ինչ եղանակով պետք է իրականացվի գրավոր իրազեկումը, առհասարակ հասկանալի չէ հիշյալ կարգավորմամբ հետապնդվող նպատակը:		
		Հավելվածի 57-րդ հոդվածով ըստ էության նախատեսվում է Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված թույլատրելի համարվող նվերների շրջանակի սահմանափակում, մասնավորապես՝ Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ *«3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար թույլատրելի նվերներ են՝* *1) պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի ժամանակ տրվող նվերները կամ կազմակերպվող հյուրասիրությունը.* *2) հրապարակային միջոցառումների ժամանակ սովորաբար տրվող նվերները.* *3) սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.* *4) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.*	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:

		5) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի հետևանքով. *6) օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրվող արարողակարգային նվերները:* *4. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված և սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ կետերով նախատեսված նվերն իր արժեքով գերազանցում է 60 000 Հայաստանի Հանրապետության դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն և հաշվառվում է որպես այդպիսին: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները Կառավարության սահմանած կարգով պարտավոր են այն հանձնել պետությանը կամ համայնքին:»:* Մինչդեռ, Հավելվածի 57-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է խուսափել Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված թույլատրվող նվերներ ընդունելուց, **եթե կարող է ընկալվել, որ դրանք ի զորու են ազդել իր լիազորությունների պատշաճ իրականացման վրա**՝ հաշվի առնելով իրավիճակի բնույթը և հարաբերությունները նվիրատուի հետ: Նույն օրենքով սահմանված **թույլատրելի համարվող ցանկացած նվերի կամ**		

		հյուրասիրության տեսակը և արժեքը պետք է լինի սոցիալապես ընդունելի սահմաններում և իրավիճակի հետ համադրելի: Հավելվածով նախատեսված կարգավորումն ըստ էության սահմանափակում է Օրենքի 29-րդ հոդվածով հանրային ծառայողի թույլատրելի նվերներ ընդունելու իրավունքը, մինչդեռ հարկ է նկատել, որ Օրենսդրի կողմից սահմանված որոշակի չափանիշների նեղացումը/սահմանափակումը առավել ցածր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով ընդունելի չէ: Ավելին՝ օրենսդրի կողմից առանձնացվել է նվերների այն արժեքը, որը իրավական նշանակություն կարող է ունենալ, ուստի վարքագծի կանոնների շրջանակներում նման սահմանափակումների նախատեսումն արդարացված չէ:		
		Հավելվածի 59-րդ կետով նախատեսվում է, որ հանրային ծառայողը պարտավոր է զերծ մնալ իր գործառույթներն ու պարտականությունները իրականացնելու համար պետական բյուջեից բացի այլ աղբյուրից վարձատրություն ստանալուց: Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել*	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից, քանի որ, ըստ էության, քննարկվող իրավիճակը նույնանում է հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների խախտման իրավիճակի հետ:

		վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:»: Այսպիսով, վարքագծի կանոններով նախատեսված կարգավորումը կարող է հակասություններ առաջացնել Օրենքի 31-րդ հոդվածի իմաստով:		
		Հավելվածի 61-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է բոլոր դեպքերում և անկախ նվերի, այդ թվում՝ հյուրասիրության և ոչ նյութական առավելության արժեքից, անմիջական ղեկավարին պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել ստացված նվերի, այդ թվում՝ հյուրասիրության և ոչ նյութական առավելության մասին: Օրենքի 30-րդ հոդվածով սահմանվում է՝ *«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են Կառավարության սահմանած կարգով հայտնել սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված թույլատրելի նվերների ստացման մասին:* *2. Նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանում է Կառավարությունը:»:* Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով կարգավորված է հանրային ծառայողի ստացած նվերների մասին հայտնելու կարգը, ուստի իրավահարաբերությունները կարգավորված են Օրենքով և Կառավարության որոշմամբ: Նման պայմաններում առանձին վարքագծի կանոնի	Չի ընդունվել	«Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանվում է, որ նվերների հաշվառման և հանձնման կարգը սահմանում է Կառավարությունը, սակայն հարկ է նշել, որ նշյալ կարգը սահմանված չէ մինչ օրս: Այդ իսկ պատճառով, կարծում ենք, հարկավոր է որոշակի կարգավորումներ սահմանել հանրային ծառայողի կողմից նվերի վերաբերյալ անմիջական ղեկավարին կամ վերադաս անձին հայտնելու վերաբերյալ:

		նախատեսման նպատակահարմարությունը բացակայում է:		
		Հավելվածի 108-րդ կետով նախատեսված է, որ հանրային ծառայողի կողմից վարքագծի կանոնների խախտում թույլ տալը հաշվի է առնվում նրա ատեստավորման, ծառայողական առաջխաղացման, պաշտոնի նշանակման ժամանակ: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից* ***վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին,*** *իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:»:* Նույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ *«Այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտման կամ շահերի բախման իրավիճակի առկայության դեպքում Հանձնաժողովն իրավասու մարմնին կամ պաշտոնատար անձին առաջարկում է կարգապահական*	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում Նախագծից հանվել է վարքագծի տիպային կանոնների խախտման դեպքում պատասխանատվության վերաբերյալ 4-րդ գլուխը և ավելացվել է նոր դրույթ, ըստ որի՝ կանոնների խախտման իրավական հետևանքները ենթակա են սահմանման Կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման կանոններում (կանոնագրքերում):

		պատասխանատվության ենթարկել պաշտոն զբաղեցնող անձին, եթե նրա արարքում առկա չեն վարչական իրավախախտման կամ հանցագործության (այդ թվում՝ առերևույթ) հատկանիշներ: Հանձնաժողովը կարող է առաջարկել նաև ձեռնարկել խախտման հետևանքների կամ իրավիճակի չեզոքացմանն ուղղված քայլեր:»: Նախանշված դրույթների համակարգային վերլուծությունից բխում է, որ **վարքագծի կանոնների խախտման առկայություն կամ բացակայություն** հաստատվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից, սակայն պատասխանատվություն կիրառվում է այլ սուբյեկտի կողմից: Այս առումով էական է հստակեցնել, թե տվյալ կետի իմաստով որն է համարվում վարքագծի կանոնների խախտում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից եզրակացության ընդունումը, թե համապատասխան պաշտոնատար անձի կողմից պատասխանատվության կիրառումը: Հիշյալը հատկապես կարևորվում է անձի համար ոչ բարենպաստ որոշումների դեպքում դատական պաշտպանության միջոցից օգտվելու հնարավորության առումով:		

		Առաջարկում ենք Հավելվածի 109-րդ կետում նախատեսված կարգավորումը վերաձևակերպել, քանի որ նախ հասկանալի չէ՝ ինչ է նկատի առնվում առավել խիստ միջոց եզրույթի կիրառմամբ, այնուհետև պատասխանատվության տեսակների վերաբերյալ թվարկումն առավել ընդգրկուն է հետևյալ ձևակերպման դեպքում՝ *«Սահմանված կարգապահական պատասխանատվության ենթարկելը չի ազատում անձանց նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վարչական, քրեական կամ այլ պատասխանատվության կիրառումից:»:*	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում Նախագծից հանվել է վարքագծի տիպային կանոնների խախտման դեպքում պատասխանատվության վերաբերյալ 4-րդ գլուխը և ավելացվել է նոր դրույթ, ըստ որի՝ կանոնների խախտման իրավական հետևանքները ենթակա են սահմանման Կանոնների հիման վրա՝ հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող համանման կանոններում (կանոնագրքերում):
47.	ՀՀ պետական եկամուտների կոմիտե ելից 01/3-4/21021-2022 առ 11.04.2022թ.	Վարքագծի տիպային կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 11-րդ կետով սահմանված հասկացություններից առաջինում «նվերի» շրջանակն, ըստ էության, «(…) կամ այլ գործողություններ» ձևակերպման արդյունքում սահմանափակվում է միայն այլ անձի կողմից ակտիվ վարքագծի դրսևորմամբ՝ որոշակի գործողության կատարմամբ, մինչդեռ	Չի ընդունվել	Առաջարկության էությունը հասկանալի և ընդունելի է: Սակայն, միաժամանակ, «նվեր» եզրույթի սահմանումն ամրագրված է «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ

		պրակտիկորեն հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ հանրային ծառայողի կողմից որոշակի օգուտներ կամ առավելություններ ստանալը պայմանավորված լինի անձի կողմից որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալով, այսինքն պասիվ վարքագծի դրսևորմամբ՝ անգործությամբ: Ուստի առաջարկում ենք վկայակոչված ձևակերպման մեջ «գործողություններ» բառը փոխարինել «արարքներ» բառով:		հոդվածի 2-րդ մասում, ինչն էլ հիմք է հանդիսացել Նախագծում «նվեր» հասկացության նույնաբովանդակ սահմանման: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Կանոնների 11-րդ կետի 5-րդ ենթակետով հանրային շահը ձևակերպվում է որպես սահմանադրական արժեք, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային շահի պաշտպանության նպատակով կարող են սահմանափակվել ոչ միայն անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ առաջարկում ենք նշված ենթակետից «հիմնական» բառը հանել:	Չի ընդունվել	«Հանրային շահ» հասկացության սահմանումը տրվում է մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի 2019 թ. ապրիլի 30-ի ՍԴՈ-1458 որոշման մեջ և Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1621/05/14 որոշման մեջ: Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ նշվում է, որ «Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ առհասարակ հանրային շահն այն սահմանադրական

				արժեքն է, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել»: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ սահմանվում է, որ «հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար»:
		Կանոնների 11-րդ կետի 6-րդ ենթակետում «կարիերային առաջընթացով» բառերը առաջարկում ենք փոխարինել «ծառայողական առաջխաղացմամբ» բառերով:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Կանոնների 13-րդ կետում սահմանված է ընդհանուր արգելք հանրային ծառայողի կողմից ՀՀ պետական և պետական մարմինների կանոնադրություններով հաստատված խորհրդանիշների մեծարման վերաբերյալ: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		համարում ընդգծել, որ նախադասության առաջին մասի ձևակերպումն առավելապես պարունակում է իմպերատիվ պահանջ ուղղված հանրային ծառայողի վարքագծի ընդհանուր կանոններին, ոչ թե վերջինիս գործունեությանն ու վարքագծին ծառայողական պարտականությունները կատարելիս կամ ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում: Մինչդեռ, դիցուք, հանրային ծառայողը կարող է ունենալ, օրինակ, ընտանեկան խորհրդանիշներ, որոնց մեծարումը չի կարող բացասական հետևանք ունենալ նրա՝ որպես հանրային ծառայող ընկալման, կամ հանրային ծառայության հեղինակության համար, այլ խնդիր է դրա սահմանափակումը ծառայողական պարտականությունների կատարման տիրույթում: Հետևաբար, առաջարկում ենք նշված արգելքը սահմանել բացառապես ծառայողական պարտականությունները կատարելու, ի պաշտոնե հրապարակային հանդես գալու, ինչպես նաև ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքների համար:		
		Կանոնների 25-րդ կետում առաջարկում ենք ամրագրել իրավասու մարմինների կողմից ընդունված քաղաքականությունների կիրառման պարտականություն ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայողական պարտականությունների կատարումից կամ	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		հրապարակային գործունեությունից դուրս պետական մարմինների կողմից ընդունված քաղաքականության ուղղություններն ամրագրող ոչ նորմատիվ բնույթի փաստաթղթերը չեն կարող իմպերատիվ կերպով պայմանավորել անձանց վարքագիծը:		
		Կանոնների 39-րդ կետում արտոնյալ վերաբերմունքի դրսևորման արգելքի սահմանման մեջ զբաղեցրած պաշտոնի հետ մեկտեղ առաջարկում ենք ամրագրել նաև անձնական հարաբերությունները:	Չի ընդունվել	Նախագծում զետեղված «Օբյեկտիվություն և խտրականության բացառում» գլուխն արդեն իսկ բովանդակում է այնպիսի դրույթներ, որոնք, ըստ էության, վերաբերում են հանրային ծառայողի կողմից անձնական հարաբերությունների հիման վրա արտոնյալ կամ խտրական վերաբերմունք ցուցաբերել գործընկերների և այլ անձանց նկատմամբ:
		Կանոնների 40-րդ կետում «չներկայացնել» բառից հետո առաջարկում ենք լրացնել «բացառությամբ օրենքով նման լիազորությամբ օժտված լինելու իրավիճակների» բառերը:	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է և լրացվել է «բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» արտահայտությամբ:

		Կանոնների 66-րդ կետում «նախատեսված չէ» բառերից հետո առաջարկում ենք լրացնել հետևյալ ձևակերպումը. «իսկ նման տեղեկությունները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքում անմիջապես պաշտոնական հաղորդակցման միջոցներով գրավոր տեղեկացնել անմիջական ղեկավարին, վերադասին կամ գաղտնի տեղեկությունների պահպանությունն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին:»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Կանոնների 68-րդ կետով սահմանված դրույթի որոշակիության ապահովման տեսանկյունից առաջարկում ենք այն վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանրային ծառայողը պարտավոր է ձեռնպահ մնալ իր լիազորությունների կատարման հետ չառընչվող պետական կամ ծառայողական գաղտնիքի տեղեկակիրներին, տեղեկություններին, գաղտնաբառերին կամ հատուկ պահպանվող տարածքներին հասանելիություն ստանալուն ուղղված քայլերի ձեռնարկումից, ինչպես նաև առանց թույլտվության դրանց տեղեկակիրների պատճենահանումից, ձայնագրումից, լուսանկարումից կամ տեսագրումից:»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. դրույթը վերաշարադրվել է առաջարկի հիման վրա:
		Կանոնների 74-րդ կետում «լուրջ» բառն առաջարկում ենք փոխարինել «էական» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

48.	ՀՀ Լոռու մարզպետարան ելից 01 /114.3/01969-2022 առ 17.03.2022թ.	«I. Ընդհանուր դրույթներ» բաժնի ա) 2.-րդ կետի 2)-րդ ենթակետում «նպաստել» բառից հետո ավելացնել «հանրային» բառը, «էթիկայի բացառիկ վարքագիծ դրսևորելուն» բառերը փոխարինել «բարեվարքորեն գործելուն» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		2.-րդ կետի 4)-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «4) ամրապնդել հանրային ծառայության համակարգում բարեվարքությունը, իսկ կոռուպցիայի նկատմամբ զգոնությունը և անհանդուրժողականությունը»:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		2.-րդ կետի 5)-րդ ենթակետում «երաշխավորել» բառը փոխարինել «սահմանել» բառով:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է. «երաշխավորել» բառը փոխարինվել է «ապահովել» բառով:
		5-րդ կետում «համապատասխան» բառից առաջ ավելացնել «հանդիսանում» բառը, «և սահմանման» բառից հետո ավելացնել «համար,» բառը; «ելնելով» բառից հետո ավելացնել «այդ մարմինների» բառերը, իսկ «յուրաքանչյուր առանձին տեսակի ծառայողական» բառերը հանել:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		7-րդ կետում «կատարելու ընթացքում» բառերը փոխարինել «կատարելիս» բառերով:	Չի ընդունվել	Քննարկվող հատվածը հանվել է դրույթից:
		8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «8. Տիպային կանոններն ունեն երկու բաղադրիչ՝ պարտադիր և խրախուսելի:»:	Չի ընդունվել	Քննարկվող դրույթի ձևակերպումը տարընթերցումների կամ

				անորոշության տեղիք չի տալիս:
		10-րդ կետում «Խրախուսելի» բառից առաջ ավելացնել «Կանոնների» բառը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		«III. Հանրային ծառայողների վարքագծի պարտադիր կանոններ» բաժնի 12-րդ կետի 10)-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Հրապարակման ոչ ենթակա պաշտոնական տեղեկատվություն»; 12-րդ կետի 14)-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «14) Հանրային ծառայողի՝ որպես մասնավոր անձի, վարքագիծը,»:	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է. 10-րդ կետը շարադրվել է «պաշտոնեական տեղեկատվության չհրապարակում» ձևակերպմամբ, իսկ 14-րդ կետը՝ «հանրային ծառայողի՝ որպես մասնավոր անձի վարքագիծը» ձևակերպմամբ:
		«Բարեխղճություն և հավատարմություն հանրային շահին» բաժնի 25-րդ կետում «թույլ տված» բառերը փոխարինել «թույլ տրված» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		«Բարեկրթություն» բաժնի 37-րդ կետում «միջողներն» բառը փոխարինել «միջոցներն» բառով, իսկ 44-րդ կետում «սանիտարական» բառը փոխարինել «սանիտարահիգիենիկ» բառով:	Ընդունվել է մասամբ	Քննարկվող դրույթում «սանիտարական» բառը «սանիտարահիգիենիկ» բառով փոխարինելու վերաբերյալ առաջարկը չի ընդունվել, քանի որ

				իրավասու մարմինների կողմից ընդունված վերաբերելի իրավական ակտերում ևս կիրառվում է «սանիտարական կանոններ և նորմեր» եզրույթը:
		«Շահերի կառավարում» բաժնի 50-րդ կետում «առաջնորդվել» բառը փոխարինել «առաջնորդում» բառով:	Չի ընդունվել	Դրույթը շարադրված է «Հանրային ծառայության մասին»օրենքով սահմանված «շահերի բախում» ձևակերպմանը համապատասխան: Բացի դրանից, «առաջնորդում» եզրույթն առավելապես նշանակում է ինքնուրույն որևէ անձի կամ երևույթի առաջնորդելու գործընթաց, մինչդեռ դրույթի տրամաբանությունն այլ է:
		«Վարքագիծը որպես մասնավոր անձ» բաժնի բառերը վերնագրում փոխել «Հանրային ծառայողի՝ որպես մասնավոր անձի, վարքագիծը»:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթները հանվել են Նախագծից:
		«III. Հանրային ծառայողների վարքագծի խրախուսելի կանոններ» բաժնի 96-րդ կետում «հետևիլ» բառը փոխարինել «հետևել» բառով, իսկ «փորձիլ» բառը փոխարինել «փորձել» բառով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

49.	ՀՀ Շիրակի մարզպետարան ելից 01/02055-2022 առ 21.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
50.	ՀՀ Արագածոտնի մարզպետարան ելից 01/7.1/01345-2022 առ 23.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
51.	ՀՀ Արարատի մարզպետարան ելից 01/01529-2022 առ 23.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
52.	ՀՀ Սյունիքի մարզպետարան ելից 04/02031-2022 առ 25.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
53.	ՀՀ Կոտայքի մարզպետարան ելից 01/14/01663-2022 առ 25.03.2022թ.	Առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է ի գիտություն	
54.	ՀՀ Արմավիրի մարզպետարան ելից 01/17/01824-2022 առ 28.03.2022թ.	Հավելվածի համապատասխան համարակալումները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտի բաժիններն ու գլուխները համարակալվում են արաբական թվանշաններով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

55.	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ելից 01 /2035-2022 առ 28.03.2022թ.	II. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆՈՆՆԵՐ» բաժնի «ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔ» ենթաբաժնի 13-րդ կետում՝ կատարել հետևյալ լրացումը՝ 1) «13. Հանրային ծառայողը պարտավոր է հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները (դրոշը, զինանշանը, օրհներգը) և» բառերից հետո լրացնել «հարգել ու տիրապետել» բառերը:	Չի ընդունվել	Պետական լեզվին տիրապետելը չի հանդիսանում հանրային ծառայողի վարքագծի կանոնների շրջանակներում ընդգրկվող գործողություն: Նման հարաբերությունները ենթակա են կարգավորման այլ իրավական ակտերով:
		«II. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՆՈՆՆԵՐ» բաժնի «ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ենթաբաժնում կատարել հետևյալ լրացումները՝ 1) «39. Հանրային ծառայողը պարտավոր է գործընկերների և պետական այլ մարմինների աշխատակիցների հետ հարաբերվելիս լինել նրբանկատ, զուսպ,» բառերից հետո լրացնել «հարգալից, բարեկիրթ,» բառերը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		«44. Հանրային ծառայողին արգելվում է աշխատանքի վայրում ծխել,» բառերից հետո լրացնել «բացառությամբ ծխելու համար սահմանված տարածքների» բառերը:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		«IV. ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ» բաժնի 110-րդ կետի «առաջնահերթությունը:» բառից հետո լրացնել «Սույն նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո բոլոր պետական մարմինների «Կարգապահական ներքին	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում գլուխը հանվել է Նախագծից: Միաժամանակ, հարկ է նշել, որ Նախագծի 12-րդ կետով սահմանվել է, որ

		կանանոններում» կատարել համապատասխան լրացումներ և փոփոխություններ:» պարբերությունը:		«Կանոնների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը»: Դրույթում լրացում կատարելու առաջարկը չի ընդունվել, քանի որ Նախագծի 5-րդ կետի համաձայն՝ «Կանոնները հիմք են հանդիսանում հանրային իշխանության համապատասխան մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար համանման կանոնների (կանոնագրքերի) մշակման և սահմանման համար՝ ելնելով այդ մարմինների ծառայության առանձնահատկությունների g»: Վերոբերյալ դրույթի առկայությունն արդեն իսկ վկայում է այն մասին, որ հանրային ծառայողների վարքագծի տիպային

				կանոնների ընդունումից հետո հանրային իշխանության առանձին մարմինները պարտավորվելու են դրանց հիման վրա ընդունելու իրենց առանձին կանոնները (կանոնագրքերը):
56.	Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ	1-ին կետի համաձայն՝ տիպային կանոնները հանդիսանում են հանրային ծառայության բարեվարքության համակարգի տարր: Մինչդեռ, «Հանրային ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ բարեվարքության համակարգի տարր են հանդիսանում վարքագծի կանոնները:	Չի ընդունվել	Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները, անկախ այն հանգամանքից, որ դրանք հիմք են հանդիսանում հանրային իշխանության մարմինների կողմից հանրային ծառայության առանձին տեսակների համար կանոնների (կանոնագրքերի) սահմանման, ըստ էության կրկին հանդիսանում են վարքագծի ընդհանրական կանոններ: Հետևապես, տիպային կանոնները բարեվարքության համակարգի տարր համարելն արդարացված է:

		2-րդ կետում 2-րդ կետում «Սույն փաստաթղթի նպատակն է՝» բառերն առաջարկում ենք փոխարինել «Վարքագծի տիպային կանոնների հաստատման նպատակն է՝» բառերով:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է և շարադրվել հետևյալ ձևակերպմամբ. «Կանոնների սահմանման նպատակն է՝»:
		2-րդ կետն առաջարկում ենք խմբագրել՝ նկատի ունենալով, որ 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, ինչպես նաև 4-րդ ենթակետի առաջին մասը նույնաբովանդակ են, ուստի առաջարկում ենք դրանք շարադրել մեկ կետով, բացի այդ առաջարկում ենք խմբագրել հստակեցման ենթակա եզրույթները սույն կարծիքի սկզբնամասում մեր կողմից ներկայացված առաջարկների տրամաբանությամբ:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		6-րդ կետն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 7-րդ մասին, որից բխում է, որ հանրային ծառայողն առաջնորդվում է ոչ թե տիպային կանոններով, այլ դրանց հիման վրա ընդունված վարքագծի կանոններով:	Չի ընդունվել	Նախագծի 6-րդ կետը սահմանում է, որ տիպային կանոնները (...) հանրային ծառայողների (...) վարքագծի ԸՆԴՀԱՆՈՒՐ նորմերի և կանոնների ամբողջություն են (...): Հանրային իշխանության մարմինների կողմից հետագայում հանրային ծառայության առանձին տեսակների համար ընդունվող կանոնները

				(կանոնագրքերը) համապատասխանելուու են տիպային կանոններին՝ միաժամանակ հաշվի առնելով հանրային ծառայության տվյալ տեսակի առանձնահատկությունները: Հետևապես, ըստ էության, հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները հիմնարար նշանակություն և ազդեցություն ունեն, որոնցով պետք է առաջնորդվեն հանրային ծառայողները:
		7-րդ կետում «Տիպային կանոններով սահմանվում են» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Տիպային կանոնների հիման վրա» բառերով՝ նկատի ունենալով «Հանրային ծառայության մասին» օրենքի ձևակերպումները:	Չի ընդունվել	Դրույթը վերաբերում է ուղղակիորեն տիպային կանոններին, այլ ոչ դրանց հիման վրա սահմանվող կանոններին (կանոնագրքերին):
		10-րդ կետի հետևյալ նախադասությունը «Խրախուսելի բաղադրիչը (այսուհետ՝ Խրախուսելի կանոններ) իրենից ներկայացնում է օրինակելի չափանիշների շարք, որը պարտադիր նվազագույնից ավելին է և բնորոշում է	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ.

		գերազանցությունը հանրային ծառայության համակարգում» առաջարկում ենք լեզվական առումով խմբագրել, քանի որ առաջարկվող տեսքով անհասկանալի է: Բացի այդ, խնդրահարույց է «Հանրային ծառայողը չի կարող պատժվել խրախուսելի կանոններին չհետևելու համար» ձևակերպումը, քանի որ վարքագծի կանոնները՝ պարտադիր և խրախուսելի, միայն կարգապահական տույժի ենթարկելու հիմք են, իսկ պատիժը նախատեսված է քրեական օրենսգրքով նախատեսված չթույլատրվող արարք կատարելու դեպքում միայն: Միաժամանակ, 10-րդ կետում «որ նա ձգտի հասնել այդ նորմերին» բառերը առաջարկում ենք փոխարինել «համապատասխանել այդ նորմերին» բառերով:		քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		11-րդ կետի 5-րդ ենթակետում պարզ չէ՝ ում հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել, 6-րդ ենթակետում «հանրային ծառայության պաշտոն» հասկացության մեջ առաջարկում ենք լրացնել «քաղաքական զսպվածություն» բառերը՝ նկատի ունենալով «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասը, իսկ 11-րդ կետի 7-րդ ենթակետով առաջարկվող դրույթի վերաբերյալ նախ հարկ է քննարկել դրա՝ տիպային կանոններում նախատեսելու անհրաժեշտության հարցը՝ հաշվի առնելով, որ առաջարկվող ձևակերպմամբ «սեռական ոտնձգությունը» համարվում է գենդերային խտրականության տեսակ, մինչդեռ պարզ չէ՝ որն է այս մոտեցման հիմնավորումը: Միաժամանակ,	Չի ընդունվել	«Հանրային շահ» հասկացության սահմանումը տրվում է մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ Սահմանադրական դատարանի 2019 թ. ապրիլի 30-ի ՍԴՈ-1458 որոշման մեջ և Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/1621/05/14 որոշման մեջ: Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման մեջ նշվում է, որ «Սահմանադրության

		առաջարկվող ձևակերպումները խիստ անորոշ են ու հնարավորություն չեն տալիս անգամ մոտավոր կերպով կանխորոշել՝ որ գործողություններն են ներառվելու այս հասկացության ներքո: Այս համատեքստում է անհրաժեշտ դիտարկել նաև Նախագծի 46-րդ կետը, որտեղ կիրառվում է «սեռական ոտնձգության տպավորություն ստեղծել» ձևակերպումը:		վերլուծությունը վկայում է, որ առհասարակ հանրային շահն այն սահմանադրական արժեքն է, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել»: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշմամբ սահմանվում է, որ «հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հետագա զարգացման համար»: Ինչ վերաբերում է 6-րդ ենթակետին, ապա հարկ է նշել, որ քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից: 7-րդ ենթակետը ենթարկվել է խմբագրման. «սեռական

				ոտնձգություն» եզրույթի սահմանումը խմբագրվել է՝ համապատասխանեցնելով այն Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի 40-րդ հոդվածի կարգավորումներին:
		12-րդ կետի 7-րդ ենթակետում նախատեսված «շահերի կառավարումը» և դրան համապատասխանող պարբերությունում (50-55-րդ կետեր) վերջինիս նկարագրությունը հիմնականում անդրադառնում է շահերի բախմանը, որի սահմանումն ամբողջությամբ տրված է «Հանրային ծառայության մասին» օրենքում: Հիշյալ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ շահերի բախումը համարվում է բարեվարքության համակարգի տարր՝ ի թիվս վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների: Ուստի կարծում ենք՝ նշված կետերը անհրաժեշտ է հանել Նախագծից: Միաժամանակ, անհասկանալի է նույն կետի 14-րդ և 15-րդ ենթակետերով առաջարկվող ձևակերպումները: 14-րդ ենթակետն առաջարկում ենք համապատասխանեցնել օրենսդրությամբ կիրառվող տերմինաբանությանը, իսկ ինչ վերաբերում է 15-րդ	Չի ընդունվել	Որոշ դրույթներ ենթակա են մանրամասն սահմանման Նախագծում՝ առավելագույն որոշակիություն ապահովելու նպատակով: Ինչ վերաբերում է առհասարակ հանրային ծառայողների և հանրային ծառայության ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց վերաբերյալ նախատեսված կանոններին, ապա դրանք բովանդայաին առումով չեն նույնանում և պարունակում են առանձնահատկություններ:

		ենթակետին, ապա Նախագծում առանձնացված է բաժին՝ կանոններ ղեկավար պաշտոնների համար, սակայն կան կետեր, որոնք հենց այդ կանոնների կրկնությունն են և վերաբերում են բոլոր հանրային ծառայողներին, ուստի պարզ չէ ղեկավար պաշտոնների համար առանձին բաժին առնանձնացնելու նպատակը, եթե դրանով նախատեսված կանոնները կրկնվում են ամբողջ Նախագծում, օրինակ՝ 6-րդը, 49-րդը, 77-րդը և այլն:		
		13-րդ կետում «տարբերանշան» բառն անհրաժեշտ է խմբագրել՝ ելնելով այն հանգամանքից, որ Կառավարության 2018 թվականի «Պետական կառավարման համակարգի մարմնի կանոնադրության օրինակելի ձեվը սահմանելու մասին» N 624-Լ որոշման հավելվածներում կիրառվում է «խորհրդանիշ» բառը:	Ընդունվել է մասամբ	«Տարբերանշան» եզրույթը չի հանվել դրույթից, սակայն «խորհրդանշան» բառը փոխարինվել է «խորհրդանիշ» եզրույթով:
		Սույն կարծիքի 9-րդ կետում ներկայացված դիտարկումը վերաբերում է նաև Նախագծի 14-րդ կետին: Միաժամանակ այստեղ անհրաժեշտ է հստակեցնել «մեծարել» եզրույթը, քանի որ առաջարկվող ձևակերպումից ստացվում է, որ «ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում դրանց ցուցադրումը» տարբերվում է մեծարելուց, ուստի ավելի է խորանում «մեծարել» եզրույթի բովանդակության և հնարավոր դրսևորման անորոշությունը:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում «մեծարում» եզրույթը հանվել է Նախագծից:
		15-րդ կետն առաջարկում ենք համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» օրենքի 25-րդ	Չի ընդունվել	«Հանրային ծառայության մասին» օրենքում առկա՝

		հոդվածին՝ դուրս չգալով տիպային կանոնների կարգավորման առարկայի շրջանակներից:		հանրային ծառայողներ վարքագծի սկզբունքներն առավել լայնաբովանդակ են, մինչդեռ վարքագծի տիպային կանոնները միտված են առավել հստակեցնելու և կոնկրետացնելու տվյալ սկզբունքները: Նախագծի քննարկվող դրույթում առկա կարգավորումները չեն հակասում օրենսդրության տրամաբանությանը:
		17-րդ և 18-րդ կետերը բովանդակային առումով կրկնում են միմյանց, ուստի առաջարկում ենք 17-րդ կետը հանել Նախագծից: Նույնը վերաբերում է նաև Նախագծի 16-րդ և 19-րդ կետերին, քանի որ դրանք ևս նույնաբովանդակ են:	Չի ընդունվել	Նախագծի 17-րդ կետն առավել ընդհանրական բնույթ է կրում և սահմանում է իրավունքի գերակայության և օրինականության սկզբունքներ, մինչդեռ 18-րդ կետը մանրամասնում է հստակեցնում է օրինականության սկզբունքի էությունը: Միաժամանակ, Նախագծի 16-րդ կետն ուղղված է հանրային իշխանության մարմնի հեղինակության

				պահպանմանը, իսկ 19-րդ կետը՝ օրինականության սկզբունքի կիրարկմանը:
		22-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է իր լիազորություններն իրականացնելիս զգայունություն ցուցաբերել հասարակության, համայնքի և համայնքի տարբեր՝ հատկապես խոցելի խմբերի կարիքների նկատմամբ: Պարզ չէ՝ ինչ է ենթադրում զգայունության ցուցաբերումը: Եթե բառը կիրառվել է ընդունված իմաստով, ապա օրինակ, սոցիալական ոլորտում աշխատող հանրային ծառայողների համար կարող է տեղին չլինել, քանի որ խոցելի խմբերի նկատմամբ զգայական դառնալու դեպքում նրանք կդժվարանան իրենց պարտականությունները կատարել ինչպես հարկն է: Առաջարկում ենք խմբագրել այս կետը: Բացի այդ, «զգայունություն» բառը առաջարկում ենք փոխարինել «ունենալ համապատասխան կամ իրավաչափ արձագանք այս կամ այն հարցի նկատմամբ» բառերով:	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		26-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պարտավոր է ենթարկվել վերադասների, անմիջական ղեկավարի օրինական պահանջներին: Հարկ է նկատի ունենալ, որ, օրինակ, քաղաքացիական ծառայողի ենթակայության վերաբերյալ դրույթները, որոնք նաև տեղայնացվում են տվյալ քաղաքացիական ծառայողի պաշտոնի անձնագրում, ենթադրում են քաղաքացիական ծառայող-անմիջական ղեկավար	Չի ընդունվել	Առաջարկը փոքր-ինչ անորոշ է: Նախագծում առկա կարգավորումներում հաշվի են առնված հանրային ծառայության բոլոր տեսակների ընդհանուր կողմերը, մինչդեռ հանրային

		ուղիղ ենթակայություն: Հաշվի առնելով, որ Նախագծի հիման վրա պետք է հաստատվեն նաև քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները, անհրաժեշտ է, որ Նախագիծը հաշվի առնի հանրային ծառայության բոլոր տեսակների առանձնահատկությունները և խուսափի նման ձևակերպումներից:		իշխանության մարմինները հանրային ծառայության առանձին տեսակների համար կանոններ (կանոնագրքեր) սահմանելիս իրավասու կլինեն հաշվի առնելու տվյալ ծառայության առանձնահատկությունները:
		28-րդ կետում պարզ չէ «վարքագծի կանոնների դրսևորման հետ կապված» ձևակերպումը:	Ընդունվել է	«Դրևսորման հետ կապված» ձևակերպումը փոխարինվել է «առնչությամբ» եզրույթով: Այդուհանդերձ, դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		35-րդ կետը տարընկալումների տեղիք է տալիս: Նախ պարզ չէ «խնդիրներ» բառի բովանդակությունը Նախագծի համատեքստում, բացի այդ, որոշ դեպքերում մասնավոր կազմակերպությունները իրենց ծառայությունները մատուցելիս արտոնություններ, առավելություններ են սահմանում հանրային ծառայողների համար, օրինակ՝ մարզասրահներ:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		41-րդ կետում անհրաժեշտ է նախ հստակեցնել նախատեսված սահմանափակման շրջանակները, քանի որ կան հանրային ծառայողներ, ովքեր օրենքի	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:

		ուժով իրավասու են կիրառել ֆիզիկական ուժ, բացի այդ անհրաժեշտ է բացառություն նախատեսել, մասնավորապես՝ այն դեպքերի համար, երբ գործ ունենք անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության հետ:		
		48-րդ կետում նախատեսված կանոնը պետք է կիրառվի ոչ միայն մասնավոր անձանց պարագայում, այլ նաև պետական մարմինների հետ առաջացած հարաբերություններում, մասնավորապես՝ եթե հանրային ծառայողը դրական դիրքորոշում է հայտնել որևէ պետական մարմնի կողմից առաջադրված հարցի վերաբերյալ, ապա միևնույն փաստական հանգամանքների պարագայում համանման որոշում պետք է ընդունի նաև մյուս պետական մարմնի դեպքում:	Չի ընդունվել	Առաջարկում ներկայացված դիտարկումներն իրենց բովանդակությամբ արդեն իսկ ներառված են տիպային կանոնների «Օբյեկտիվություն և խտրականության բացառում» գլխի այլ դրույթներում:
		58-րդ կետում «Ոչ նյութական առավելություն կարող է լինել, օրինակ, արտոնյալ դիրքը կամ բարիքներից արագ օգտվելու հնարավորությունը, ինչի դեպքում դրանց դրամական արժեքը ակնհայտ չէ» ձևակերպման վերաբերյալ հարց է առաջանում՝ որքանով է այն սույն Նախագծի կարգավորման առարկա հանդիսանում:	Չի ընդունվել	Նշված կարգավորման սահմանումը դուրս չէ տիպային կանոնների տրամաբանության շրջանակից՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրույթը ոչ նյութական առավելության դրսևորման սպառիչ ցանկ չի սահմանում, այլ որպես օրինակ նշում է մեկը:

		87-րդ կետը ուղղակի միջամտում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված պայմանագրի ազատության սկզբունքին, հետևաբար այդպիսի միջամտությունը սույն իրավական ակտի շրջանակներում կարող է հարուցել նախատեսվող սահմանափակման սահմանադրականության հարց, հետևաբար կարծում ենք, որ նախատեսված դրույթը պետք է սահմանվի Օրենքով:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		108-րդ կետով առաջարկվող դրույթը անհրաժեշտ է սահմանել համապատասխան օրենքներով, որոնցով կարգավորվում են նշված կետում նկարագրված գործընթացները: Այսպիսի սահմանափակումները տիպային կանոնների կարգավորման առարկա հանդիսանալ չեն կարող:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Նախագծի «ՆՎԵՐՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐԳԵԼՔ» վերտառությամբ բաժինն ամբողջությամբ անհրաժեշտ է վերաշարադրել և համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին: օրենքի դրույթների պահանջներին:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		«ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔ» վերտառությամբ բաժնում բացակայում են «գնահատանք»-ին վերաբերող դրույթները: Այս առումով նախ պարզ չէ՝ ինչ է «գնահատանք»-ը, քանի որ «Հանրային ծառայության մասին» օրենքում բացահայտված չէ այս հասկացությունը, բացի այդ Նախագիծը առաջարկվող խմբագրությամբ չի բխում հիշյալ օրենքի 25-րդ հոդվածի տրամաբանությունի:	Ընդունվել է	«Գնահատանք» եզրույթը հանվել է Նախագծից:

		Ուստի, առաջարկում ենք նախագիծը խմբագրել՝ նախատեսելով «ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԳԱԼԻՐՈՒԹՅՈՒՆ» վերտառությամբ բաժին:		
		«ԱՆԱՉԱՌՈՒԹՅՈՒՆ, ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ» վերտառությամբ բաժինը անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հանրային ծառայության մասին» օրենքի 27-րդ հոդվածի տրամաբանությանը:	Չի ընդունվել	«Հանրային ծառայության մասին» օրենքում առկա՝ հանրային ծառայողներ վարքագծի սկզբունքներն առավել լայնաբովանդակ են, մինչդեռ վարքագծի տիպային կանոնները միտված են առավել հստակեցնելու և կոնկրետացնելու տվյալ սկզբունքները: Նախագծի քննարկվող դրույթներում առկա կարգավորումները չեն հակասում «Հանրային ծառայության մասին» օրենքի 27-րդ հոդվածի տրամաբանությանը, այլ, ընդհակառակը, բխում են դրանից:
		«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵՋՈՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՁՍՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ» վերտառությամբ բաժինն առաջարկում ենք վերանայել՝ համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի տրամաբանությանն	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		այն առումով, որ հիշյալ հոդվածի 4-րդ մասը հնարավորություն է տալիս հանրային ծառայողին մասնակցել քաղաքական կամ հանրային քննարկումներին, միջոցառումներին, այդ թվում՝ նախընտրական քարոզչությանը՝ ոչ ի պաշտոնե և չնշելով պաշտոնական դիրքը, կոչումը կամ որևէ կերպ չօգտագործելով պաշտոնի հեղինակությունը: Այս առումով, Նախագծի քննարկվող բաժնում իմպերատիվ դրույթների նախատեսումը կարծում ենք չի բխում տիպային կանոնների հիմքում ընկած վարքագծի սկզբունքներից: Նախագծային դրույթներն անհրաժեշտ է վերանայել նաև առաջարկվող տերմինների որոշակիության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված (օրինակ՝ 62-րդ կետի «քաղաքական գործունեությամբ զբաղվելու տպավորություն ստեղծել» ձևակերպումը):		
		«ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ» վերտառությամբ բաժնի վերաբերյալ հարկ է նշել, որ անհրաժեշտ է «հանրային ռեսուրսներ» հասկացությունը ևս սահմանել ընդհանուր դրույթներում:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
57.	Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչություն	Նախագծից հանել «24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով,» բառերը, քանի որ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով սահմանված է ընդունել հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը:	Չի ընդունվել	«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի դրույթն առ այն, որ Հանձնաժողովն ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային

				կանոնագիրքը, հանդիսանում է տեխնիկական վրիպակ. «կանոնագիրք» բառին պետք է փոխարիներ «կանոններ» բառը:
		Ամբողջ նախագիծը շարադրված է «Հանրային ծառայողը պարտավոր է» ձևակերպմամբ, կարծում ենք մի շարք դրույթներ կարելի է շարադրել «Հանրային ծառայողը կոչված է» ձևակերպմամբ:	Չի ընդունվել	Քանի որ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները սահմանում են վարքագծի կանոններ, «կոչված է» եզրույթի կիրառումը նպատակահարմար չէ Նախագծում:
		Նախագծի հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետում հստակեցնել, թե որն է էթիկայի բացառիկ վարքագիծը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Նախագծի հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետը խմբագրման կարիք ունի:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրութը խմբագրվել է:
		Նախագծի հավելվածի 3-րդ կետի իմաստը բացակայում է, քանի որ կրկնում է Օրենքի համապատասխան դրույթները, միաժամանակ շարադրված չէ ինչպես Օրենքում «գիտակցումը, բարեկրթությունը և հարգալիրությունը, բարեխղճությունը, օբյեկտիվությունը»:	Չի ընդունվել	Օրենքի որոշակի դրույթների ներառումը Նախագծում միտված է ապահովելու իրավական ակտի որոշակիությունը: Միաժամանակ, հարկ է նշել, որ վարքագծի սկզբունքները

				թվարկված են «Հանրային ծառայության մասին» օրենքի նույնությամբ:
		Նախագծի հավելվածի 10-րդ կետում նշվում է, որ հանրային ծառայողը չի կարող պատժվել Խրախուսելի կանոններին չհետևելու համար, սակայն հանրային ծառայողը կարող է պատժվել միայն քրեական գործի շրջանակում, ուստի այստեղ խոսքը կարող է գնալ կարգապահական պատասխանատվության մասին: 10-րդ կետը քննարկման կարիք ունի, ինչ գերազանցության մասին է խոսքը:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		Նախագծի հավելվածի 11-րդ կետի հիմնական հասկացությունները մեծամասամբ շարադրված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում, միաժամանակ անհասկանալի է «Սեռական ոտնձգություն» հասկացության բացատրությունը, որը մեկնաբանվում է որպես գենդերային խտրականության դրսևորումների տեսակ: «Հանրային ծառայության պաշտոն» հասկացության բացատրության մեջ բացակայում է «քաղաքական զսպվածություն» միտքը:	Ընդունվել է մասամբ	Քննարկումների արդյունքում «հանրային ծառայության պաշտոն» եզրույթը հանվել է Նախագծից: Միաժամանակ, «սեռական ոտնձգություն» եզրույթի սահմանումը խմբագրվել է՝ համապատասխանեցնելով այն Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի 40-րդ

				հոդվածի կարգավորումներին:
		Նախագծի հավելվածի 20-րդ կետում անհրաժեշտ է մեկնաբանել, ինչ նպատակով է օգտագործվում առավելագույն բառը:	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Նախագծի հավելվածի 35-րդ կետի «պաշտոնական» բառը փոխարինել «պաշտոնական» բառով:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Նախագծի հավելվածի 43-րդ կետում սահմանել բացառություն օրենքով նախատեսված դեպքերում, օրինակ եթե որոշ հիվանդության դեպքում բժշկի ցուցումով նշանակվում է հոգեներգործուն միջոցներ:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 44-րդ կետում հստակեցնել որն է աշխատանքի վայրը:	Չի ընդունվել	«Աշխատանքի վայր» եզրույթը մեկնաբանման ենթակա չէ, սակայն, միաժամանակ, քննարկվող դրույթը խմբագրվել է և առավել հստակեցվել:
		Նախագծի հավելվածի 46-րդ կետում անհասկանալի է «սեռական ոտնձգության բացառումը» «Անաչառություն, օբյեկտիվություն և խտրականության» բաղադրիչում ըմդգրկելը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Նախագծի հավելվածի 51-րդ կետը խմբագրման կարիք ունի, քանի որ «անմիջական ղեկավարի բացակայության դեպքում» միտքը տարընկալման	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է և

		տեղիք է տալիս, օրինակ անմիջական ղեկավարը գտնվում է արձակուրդում, գործուղման կամ անաշխատունակության մեջ:		համապատասխանեցվել «Հանրային ծառայության մասին» օրենքին:
		Նախագծի հավելվածի 53-րդ կետը հնարավոր է տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ, հաշվի առնելով, այն հանգամանքը, որ աշխատակիցը ստանձնի պաշտոն, ունենա գործառույթներ և հնարավոր չլինի կանխագուշակել հնարավոր շահերի բախման իրավիճակները:	Չի ընդունվել	Դրույթն ուղղակիորեն վերաբերում է այն իրավիճակներին, երբ շահերի բախման իրավիճակները կանխատեսելի կարող են լինել:
		Նախագծի հավելվածի 55-րդ կետը հիմնավորման կարիք ունի:	Չի ընդունվել	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում: Միաժամանակ, հարկ է նշել, որ քննարկումների արդյունքում դրույթը խմբագրվել է:
		Նախագծի հավելվածի 58-րդ կետում պարզաբանման կարիք ունի «բարիքներից արագ օգտվելու հնարավորությունը» միտքը:	Ընդունվել է ի գիտություն	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Նախագծի «Նվերների ընդունման արգելք» բաղադրիչն ամբողջությամբ անհրաժեշտ է վերաշարադրել և	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան

		համապատասխանեցնել Օրենքի դրույթների պահանջներին:		փոփոխություններ. գլուխը համապատասխանեցվել է «Հանրային ծառայության մասին» օրենքի կարգավորումներին:
		Նախագծի հավելվածի 76-րդ կետում «սահմանված» բառից հետո ավելացնել «դեպքերում և» բառերը:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Նախագծի հավելվածի 83-րդ կետում նշված «փողոցային» բառը հստակեցման կարիք ունի:	Չի ընդունվել	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
		Նախագծի հավելվածի 87-րդ կետում չի հասկացվում «մեկ այլ ծառայողի համար երաշխիք տրամադրելը, ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի համար երաշխավոր հանդիսանալը» միտքը ում է վերաբերվում:	Ընդունվել է	Քննարկումների արդյունքում դրույթը հանվել է Նախագծից:
58.	ՀՀ արդարադատության նախարարություն Պետական փորձագիտական եզրակացություն	Հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսվում է սահմանել, որ վարքագծի կանոնների նպատակն է ապահովել հանրային ծառայողի բարեվարք վարքագիծը ծառայողական պարտականությունները կատարելիս և մասնավոր կյանքում, այնինչ *մասնավոր կյանքում անձի* պարտականությունները սահմանելու դրույթը «Հանրային ծառայության մասին» օրենքում նախատեսված չէ: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն՝ մարդն ազատ է անելու այն ամենը, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Սահմանադրությանը և օրենքներին: Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով: Հիշյալից կարելի է փաստել, որ ցանկացած անձի վրա կարող են դրվել միայն այնպիսի պարտականություններ, որոնք սահմանված են օրենքով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ վարքագծի կանոնները կարող են սահմանել պարտականություններ անձի համար միայն այն իրավիճակներում, երբ վերջինս հանդես է գալիս որպես հանրային ծառայող, սակայն առանց օրենքով սահմանված համապատասխան հիմքի անթույլատրելի է անձին ծանրաբեռնել պարտականություններով՝ խախտելով վերոգրյալ սահմանադրական սկզբունքը:		
		Առաջարկում ենք Հավելվածի 12-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված «նվեր» հասկացության բովանդակության փոխարեն հղում կատարել «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասին՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը: Այս հանգամանքը առավել արդիական է նաև՝ հաշվի առնելով որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից մշակված «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով և հարակից օրենքով առաջարկվող նվերների սահմանումը տարբերվում է գործող կարգավորումից, ինչպես նաև հավելվածով առաջարկվող սահմանումից:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Առաջարկում ենք Հավելվածի 12-րդ կետի 5-րդ ենթակետից հանել ոտնձգության նպատակը կամ հետևանքը, որպես վարքագծի կանոնների խախտում սեռական ոտնձգության առկայությունը հաստատված համարելու համար, պարտադիր հատկանիշ դիտելը. կարծում ենք՝ սեռական բնույթի ոտնձգության փաստը ինքնին բավարար է հակահրավական վարքագծի առկայությունը հաստատված համարելու համար: Ինչ վերաբերում է ամփոփաթերթում մատնանշված այն հանգամանքին, որ «Քննարկումների արդյունքում Նախագծում առկա «սեռական ոտնձգություն» եզրույթի սահմանումը խմբագրվել է՝ համապատասխանեցնելով այն Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի 40-րդ հոդվածի կարգավորումներին»՝ այս առումով գտնում ենք, որ անհրաժեշտ է հաշվի առնել, որ հիշյալ հոդվածով սահմանվում է առհասարակ մասնակից պետությունների պարտականությունը՝ ձեռնարկելու օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ միջոցներ, այն է՝ քրեական կամ որևէ այլ սանկցիայի ներքո, առանց շեշտադրելու նպատակի առկայությունը: Սակայն, հաշվի առնելով կարգապահական վարույթի առանձնահատկությունները, վերջինիս շրջանակներում հանգամանքները պարզելու սահմանափակ հնարավորությունները, կարծում ենք՝ կարգապահական վարույթի առկայության համար պայմանների նման բարդ կազմ նախատեսելը հիմնավոր չէ:	Չի ընդունվել	Սեռական ոտնձգությունը հանդիսանում է ոտնձգության առանձնահատուկ տեսակ: Տվյալ պարագայում սեռական ոտնձգությունը բնորոշել որպես պարզապես սեռական բնույթի խոսքային, ոչ խոսքային կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ տեղին չէ, քանի որ ոտնձգության տարրեր տվյալ վարքագիծն ինքնին չի պարունակում: Մինչդեռ, եթե նման վարքագիծը նպատակ հետապնդի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնի դրան, ապա հնարավոր կլինի արձանագրել, որ սեռական բնույթ կրող վարքագիծը հանդիսանում է ոտնձգություն:

		Հավելվածի 22-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-2-րդ ենթակետերին, որոնց համաձայն՝ հանրային ծառայողին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հանձնարարականներ, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, հանձնարարականներ տվողի կամ կատարողի լիազորությունների շրջանակներից դուրս են:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 23-րդ կետում հստակեցման կարիք ունի «գործուն քայլեր» արտահայտությունը: Մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակեցնել, թե հանրային ծառայության ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ձեռնարկվող ինչ քայլերի մասին է խոսքը:	Չի ընդունվել	Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում:
		Հավելվածի 28-րդ կետում «միջազգային պարտավորություններով» բառերն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 39-րդ կետում «ծառայողը» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «իր լիազորություններն իրականացնելիս» բառերը՝ համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		Հավելվածի 48-րդ կետում առկա «ցուցադրում» բառն առաջարկում ենք մանրամասնել հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում, միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ պատմական որոշակի եղելություններին կամ իրադարձություններին նվիրված խորհրդանիշների օգտագործումը, օրինակ՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի խորհրդանիշ հանդիսացող «Անմոռուկ»-ի օգտագործումը ևս կարող է մեկնաբանվել խորհրդանիշի ցուցադրում, ինչի պարագայում սահմանափակումները, գտնում ենք, որ արդարացված չեն: Նույն խնդիրը առաջանում է նաև այն դեպքում, երբ որոշ հագուստներ իրենց վրա կրում են արտադրողի տարբերանշանը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Դրույթը կմանրամասնվի հանրային ծառայողների տիպային կանոնների մեկնաբանություններում: Միաժամանակ, հարկ է նշել, որ հանրային ծառայողի հագուստի վրա առկա՝ արտադրողի տարբերանշանի առկայությունը չի համարվում ծառայողական գործունեության համար նախատեսված տարածքներում ցուցադրում:
		Առաջարկում ենք հավելվածի 48-րդ կետով սահմանափակումները տարածել միայն հրապարակային դրսևորած համապատասխան վարքագծի նկատմամբ, քանի որ սոցիալական ցանցերի միջոցով ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ մասնավոր շփումների դեպքում քննարկումը արգելելը անհիմն է:	Ընդունվել է	Առաջարկում առկա է վրիպակ. ամենայն հավանականությամբ՝ առաջարկը վերաբերում է Նախագծի 64-րդ կետին: Այնուամենայնիվ, առաջարկն ընդունվել է և կատարվել են

				համապատասխան փոփոխություններ:
		Անդրադառնալով ամփոփաթերթի այն առաջարկին (առաջարկում ենք սահմանել, թե հանրային ծառայողը ինչ վարքագիծ պետք է դրսևորի նաև այն դեպքում, երբ արդեն իսկ առաջացել է հավելվածի 52-րդ հոդվածով նախատեսված իրավիճակը) ներկայացված մեկնաբանությանը, համաձայն որի՝ «Շահերի բախման իրավիճակի վերաբերյալ կարգավորումները սահմանված են օրենսդրական մակարդակում՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հարկ է նշել, որ նման կերպով մի շարք կարգավորումներ ևս օրենքի դրույթների կրկնություն են, ուստի նման պայմաններում տարբերակված մոտեցում ցուցաբերելու նպատակահարմարությունը անհասկանալի է:	Ընդունվել է	Նախագծում առկա մի շարք կարգավորումներ, որոնք բովանդակային տեսանկյունից համընկնում են են «Հանրային ծառայության մասին» օրենքում ամրագրված կարգավորումներին, ներկայացվել են հղումների տեսքով:
		Հավելվածի 53-րդ կետով նախատեսվող կարգավորումն անհրաժեշտ է վերանայել, քանի որ այն Սահմանադրության 42-րդ հոդվածի համատեքստում խնդրահարույց է:	Չի ընդունվել	Սահմանված դրույթն ուղղված է աշխատանքային հարաբերություններում զսպվածության և հարգալիրության պահպանմանը, կոնֆլիկտային իրավիճակներից խուսափելուն: Սահմանադրության 42-րդ հոդվածով սահմանված

				կարծիքի արտահայտման ազատությունն առնչություն չունի տվյալ կարգավորման հետ, և վերջինս չի սահմանափակում հանրային ծառայողի՝ որպես անձի՝ կարծիքի արտահայտման ազատությունը:
		Առաջարկում ենք Հավելվածի 81-րդ կետով սահմանված արգելքը տարածել նաև կուսակցությունների, քաղաքական կազմակերպության կամ շարժման հետ կապված մասնավոր կազմակերպությունների վրա (օրինակ՝ կազմակերպության 100 % բաժնեմասը պատկանում է քաղաքական կուսակցությանը): Բացի այդ, առաջարկում ենք առանձին կետով համանման արգելք սահմանել նաև ցանկացած այլ մասնավոր կազմակերպության վերաբերյալ: Ամփոփաթերթում ներկայացված պնդման համաձայն՝ «Կուսակցություններն իրավասու չեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես նաև լինելու առևտրային իրավաբանական անձի հիմնադիր կամ մասնակից: Հետևաբար, դրույթում սահմանված արգելքն այլ մասնավոր կազմակերպությունների վրա տարածելու վերաբերյալ առաջարկը տեղին չէ: Միաժամանակ, ցանկացած այլ մասնավոր կազմակերպությունների վերաբերյալ համանման արգելք սահմանելու անհրաժեշտություն առկա չէ, քանի	Ընդունվել է մասամբ	Հավելվածի 81-րդ կետն ընդգրկված է «Քաղաքական չեզոքություն և քաղաքական զսպվածություն» գլխում, որը բացառապես վերաբերում է հանրային ծառայողի՝ քաղաքական բնույթ կրող վարքագծին: Հետևաբար դրանում ներառելն այնպիսի կարգավորումներ, որոնք վերաբերում են մասնավոր կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ վերաբերմունքի դրսևորմանը, տեղին չէ: Միաժամանակ, այլ մասնավոր կազմակերպությունների հանդեպ արտոնյալ

		որ նման դեպքերը նույնանում են շահերի բախման իրավիճակների հետ, որոնք կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Շահերի բախման վերաբերյալ ընդհանուր տիպային դրույթներ է պարունակում նաև սույն Նախագիծը»: Այս առումով՝ անհրաժեշտ է ընդգծել հետևյալը՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է, որ կուսակցությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրելու զանգվածային լրատվության միջոցներ և հրատարակչություններ: Վերոգրյալից պարզ է դառնում, որ կուսակցությունները կարող են հիմնադրել զանգվածային լրատվության միջոցներ և հրատարակչություններ, որոնք էլ իրենց հերթին կարող են լինել առևտրային կազմակերպություններ, ուստիև այս մասով դիտարկումը տեղին չէ: Բացի այդ, անհրաժեշտ է ընդգծել, որ հովանավորչություն հնարավոր է դրսևորել նաև այն իրավիճակներում, երբ բացակայում է շահերի բախում, ուստիև այս մասով դիտարկումը ևս վերանայման կարիք ունի:		վերաբերմունք ցուցաբերելու վերաբերյալ առաջարկն ընդունվել է. Նախագծում կատարվել է փոփոխություն և 35-րդ կետով հանրային ծառայողի համար սահմանվել է արգելք՝ իր պաշտոնը չօգտագործել իր, այլ անձանց կամ մասնավոր կազմակերպությունների համար արտոնություններ, բացառություններ և նպաստավոր այլ պայմաններ ստեղծելու համար:
		Առաջարկում ենք հստակեցնել Հավելվածի 71-րդ կետով սահմանված հետևյալ կարգավորման բովանդակությունը՝ «դրա հետ կապված հարցադրումները կատարել առանց ուղղակիորեն եզրակացությանը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին հղում կատարելու», քանի որ հստակ չէ, թե ինչ հարցադրումների մասին է խոսքը և ում են	Ընդունվել է	Առաջարկում առկա է վրիպակ. ամենայն հավանականությամբ՝ առաջարկը վերաբերում է Նախագծի 73-րդ կետին: Այդուհանդերձ, քննարկվող դրույթում կատարվել են

		ուղղված դրանք: Հարկ է նշել, որ ամփոփաթերթում ներկայացված մեկնաբանությունը վերաբերելի չէ հիշյալ առաջարկին:		համապատասխան փոփոխություններ:
		Առաջարկում ենք հանել Հավելվածի 78-րդ կետը, քանի որ այն կրկնում է 77-րդ կետի կարգավորումները, իսկ անդրադառնալով ամփոփաթերթում արված այն դատողությանը, որ սահմանված կարգավորումներից մեկը վերաբերում է հանրային ծառայողի՝ իր պարտականությունները կատարելիս առաջացող հարաբերությունների կարգավորմանը, իսկ մյուս կետն ուղղված է հանրային ծառայողի՝ այլ մասնավոր անձանց հետ հարաբերություններում խտրականության արգելքին, ապա այս առումով գտնում ենք, որ հիշյալ տարբերակումը նպատակահարմար չէ, քանի որ 77-րդ կետով սահմանված պահանջը ամբողջությամբ կիրառելի է հանրային ծառայողի կողմից իր պարտականությունները իրականացնելու ցանկացած դեպքի համար՝ լինի մասնավոր անձանց հետ շփումներում, թե այլ պարտականությունների իրականացմանը: Իսկ եթե կարգավորումը վերաբերում է պաշտոնական պարտականությունները իրականացնելուց դուրս անձի վարքագծին, ապա այս մասով գտնում ենք, որ նման պարտականություն սահմանելու համար բացակայում է օրենքով սահմանված իրավական հիմք, իսկ առաջարկվող կարգավորումը անհամաչափ է՝ հաշվի առնելով անգամ Սահմանադրությամբ նախատեսված խտրականության արգելքը՝ նկատի ունենալով, որ Սահմանադրությունը	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

		պետության և քաղաքացու միջև հարաբերությունները կարգավորող փաստաթուղթ է:		
		Հավելվածի 82-րդ կետով նախատեսվող կարգավորման կապակցությամբ հարկ է նկատի ունենալ «Հանրային ծառայության մասին» օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասը, որը հանրային ծառայողի համար սահմանում է հնարավորություն մասնակցելու քաղաքական կամ հանրային քննարկումներին, միջոցառումներին, այդ թվում՝ նախընտրական քարոզչությանը՝ ոչ ի պաշտոնե և չնշելով պաշտոնական դիրքը, կոչումը կամ որևէ կերպ չօգտագործելով պաշտոնի հեղինակությունը: Այս առումով հարկ է նշել, որ Հավելվածի հիշյալ կետով իմպերատիվ դրույթների նախատեսումը հակասում է Օրենքի 27.1-ին հոդվածի հիշյալ մասով հանրային ծառայողների համար սահմանված քաղաքական գործընթացներին մասնակցելու հնարավորության տրամաբանությանը:	Չի ընդունվել	«Հանրային ծառայության մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանրային ծառայողներն իրավունք ունեն «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգով մասնակցելու նախընտրական քարոզչությանը՝ պահպանելով քաղաքական զսպվածությունը: Անկախ այն հանգամանքից, որ հանրային ծառայողին թույլատրվում է մասնակցել նախընտրական քարոզարշավներին, քաղաքական զսպվածության պահպանման պահանջն, այնուամենայնիվ, յուրաքանչյուր պարագայում գործում է: Նույնիսկ

				նախընտրական քարոզչության իրականացման ընթացքում հանրային ծառայողը պարտավոր է հետևել օրենսդրությամբ և սույն Նախագծով սահմանված որոշակի սահմանափակումներին՝ քաղաքական զսպվածության պահանջին, որը տրամաբանորեն ենթադրում է նաև քաղաքական բնույթի հանրային ելույթներ ունենալու, քաղաքական կողմնորոշում ունեցող հադվածներ հրապարակելու կամ սոցիալական էջերում քաղաքական կուսակցության օգտին կամ դրա դեմ գրառումներ կատարելու, նմանատիպ գրառումներ հավանելու կամ տարածելու արգելքը:

		Հավելվածի 92-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պետք է այլ կառույցում աշխատանքի անցնելու հիմքով աշխատանքից ազատվելու դեպքում աշխատանքից ազատման դիմումում նշում կատարի նոր աշխատավայրի վերաբերյալ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այլ պաշտոնի է նշանակվում նույն կառույցում: Հիշյալ կարգավորման կապակցությամբ հարկ ենք համարում նախևառաջ նշել, որ այլ աշխատանքի անցումը որպես հանրային ծառայության պաշտոնից ազատման հիմք՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով սահմանված չէ: Բացի այդ, անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության տեսանկյունից, խնդրահարույց է նաև նոր աշխատավայրի վերաբերյալ ազատման դիմումում նշումի կատարման պարտադիրության սահմանումը:	Ընդունվել է մասամբ	Կատարվել են համապատասխան փոփոխություններ. «հիմքով» բառը փոխարինվել է «նպատակով» բառով: Միաժամանակ, անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության տեսանկյունից դրույթի խնդրահարույց լինելու դիտարկման վերաբերյալ հարկ է նշել, որ աշխատանքից ազատման դիմումում նոր աշխատանքի վերաբերյալ նշում կատարելը որևէ կերպ չի հակասում անձի՝ վերոնշյալ իրավունքին և, միաժամանակ, նրա համար չի առաջացնում որևէ հետևանք:
		Հավելվածի 97-րդ կետի համաձայն՝ հանրային ծառայողը պետք է բարեխղճորեն կատարի իր պարտականությունները որպես քաղաքացի, ներառյալ՝ բոլոր ֆինանսական պարտավորությունները, հատկապես՝ օրենսդրությամբ նախատեսված հարկերի, տուրքերի և կումունալ վճարումների գծով	Չի ընդունվել	Քննարկվող դրույթը ներառված է հանրային ծառայողների խրախուսելի վարքագծի կանոնների ցանկում, որոնք հանդիսանում են օրինակելի

		պարտավորությունները, պահպանի երթևեկության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ կանոնները: Այս առումով գտնում ենք, որ հիշյալ կարգավորումն անհրաժեշտ է հանել, քանի որ նշված պարտականությունները յուրաքանչյուր քաղաքացու համար արդեն իսկ համապատասխան օրենքներով ամրագրված են և այն դուրս է Հավելվածի (հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների) կարգավորման առարկայի շրջանակից: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:		չափանիշներ և բնորոշում են հանրային ծառայողի լավագույն վարքագիծը: Անկախ այն հանգամանքից, որ դրույթում առկա կարգավորումներն ամրագրված են այլ իրավական ակտերով, դրանց հավաքական միասնությունը վերաբերելի է հանրային ծառայողի կերպարին, և խրախուսելի և այլ քաղաքացիների համար օրինակելի է հատկապես հանրային ծառայողների կողմից տվյալ պարտականությունների առավել ջանասիրաբար կատարումը:
		Հավելվածի 9-րդ կետում «Կանոնների» բառով սկսվող պարբերությունն անհրաժեշտ է համարակալել՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով. ***կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի,*** իսկ ենթակետերը՝ միայն համարակալված պարբերությունների: Նուն	Ընդունվել է մասամբ	Հավելվածի 9-րդ կետը բաժանված չէ պարբերությունների, հետևաբար համարակալման անհրաժեշտություն առկա չէ: Միաժամանակ, «պետք է ենթարկվի» բառերը

		պարբերությունում «պետք է ենթարկվի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կարող է ենթարկվել» բառերով՝ համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասի դրույթներին:		փոխարինվել են «կարող է ենթարկվել» բառերով:
		Հավելվածի 18-րդ կետում խմբագրման կարիք ունի «տիրապետել ձևակերպել» ձևակերպումը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
		Հավելվածի 20-րդ կետում «աշխատակիցների» բառից առաջ առաջարկում ենք լրացնել «այլ» բառը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային ծառայողները նույնպես հանդիսանում են աշխատակից:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: